ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Քրեապոմապիկ նյութեր

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2013

ՀՏԴ 891.981.0:891.981–93
ԳՄԴ 83.3Հ+84Հ
Կ 294

Կարապետյան Լյուդվիգ
Կ 294 ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ: Քրեստոմատիկ նյութեր/ Լյուդվիգ Կարապետյան.— Ջանգակ, Եր.: 2013.— 144 էջ:

Գիրքը ներառում է արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմության համառոտ ուրվագիծը ներկայացնող ընդհանուր ակնարկ, ինչպես նաև ընտրանի էջեր արևմտահայ գրողների՝ մանուկներին և պատանիներին հասցեագրված ստեղծագործություններից: Այն արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմության ուսումնասիրության ոլորտում առաջին փորձն է:

Գիրքը՝ որպես օժանդակ ձեռնարկ, կարող է ծառայել ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի դպրոցների ուսուցիչների և սաների համար:

Հավելվածում տեղ գտած նյութերի ուղղագրության առանձին տարբերությունները պայմանավորված են դրանց՝ Սփյուռքի և Հայաստանի հրատարակություններում առկա տարբերություններով: Դրանք նույնությամբ ներառել ենք սույն ժողովածուում (բացառությամբ կետադրական որոշ դեպքերի), իսկ աղբյուրները նշված են օգտագործված գրականության ցանկում:

ՀՏԴ 891.981.0:891.981–93
ԳՄԴ 83.3Հ+84Հ

ISBN 978–9939–68–126–9

© Կարապետյան Լ., 2013
© «Ջանգակ–97» ՍՊԸ, 2013

Առ այսօր մեր գրականագիտությունը, թեկուզ հպանցիկ կամ ընդհանուր դիտարկումներով, չի անդրադարձել արևմտահայ մանկապատանեկան գրականության սկզբնավորման ու զարգացման խնդիրներին, այդ գրականության մեջ իրենց ավանդը ներդրած գրողներին, թեև տարբեր ժամանակներում արևմտահայ գրականությանն ու նրա երևելի դեմքերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ ու մենագրություններ են գրվել: Սակայն այդ աշխատություններում արևմտահայ գրողների՝ մանկապատանեկան ընթերցանության շրջանակներում ներառվող ստեղծագործությունների անդրադարձները կատարված են ընդհանուր գրաքննական դիտանկյունից: Իսկ բուն մանկական կամ պատանեկան հասցեագրում ունեցող ստեղծագործությունները երբևիցե չեն «հայտնվել» ուսումնասիրողների տեսադաշտում: Ահա թե ինչու մենք որոշեցինք քայլ անել արևմտահայ մանկապատանեկան գրականության ուսումնասիրության ոլորտում՝ այն դիտարկելով որպես առաջին փորձ հետագա ավելի ներհուն և ամբողջական անդրադարձների ճանապարհին:

* * *

«Թող աղեկ ուսումնասիրեն ժողովուրդը, ինչ–որ պիտի գրեն, անոր կյանքեն թող գրեն… Թող հայ վիպասաններն իրենց դյութիչ գրիչներով ներկայացնեն մեր վիճակը բոլոր իսկության մեջ… Թող հոշոտեն մեր սրտերը, բայց հեղափոխեն մեր բարքերը…»:

Ականավոր հրապարակախոս, արձակագիր Արփիար Արփիարյանի այս խոսքերն իրապես ուրվագծում են այն ճանապարհի ուղղությունը, որ երկրորդ դարակեսի ընթացքում և այնուհետ ընտրել

էին հայ գրականության անքակտելի մասը կազմող արևմտահայ գրականությունն ընդհանրապես, մանկապատանեկան մամուլն ու գրականությունը՝ մասնավորապես…

Ֆեոդալական խավարի և բուրժուական նորամուտ հարաբերությունների «խաչմերուկում» դեռևս խարխափող բռնապետական Թուրքիայում, սոցիալ–տնտեսական չափազանց ծանր կացությանը զուգընթաց, արևմտահայությանը մշտապես սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգը, և ազգային–ազատագրական շարժման ամեն մի դրսևորում ճնշվում էր բոլոր միջոցներով, իսկ 90–ական թվականներից սուլթան Համիդի կողմից սկսված հայաջարդ քաղաքականությունն իր գագաթնակետին հասավ 20–րդ դարասկզբին, և 1915–ի Մեծ եղեռնին զոհ դարձավ մեկուկես միլիոն հայ:

Արևմտահայ գրականությունը, ինչպես նախորդ ժամանակներում, այս ժամանակներում առավել ևս, «իր ամբողջ դեմքով ուժեղ շրջադարձ կատարեց դեպի ժողովրդական կյանքը», դարձավ ազգային ցավերի, տառապանքների, ազատագրական պայքարի հետ կապված չմարող հույսերի, արյունալի ջարդերից կքված, բայց խորքում մոխիրներից անգամ վերստին փյունիկվելու դարավոր ունակությունը թեժ պահած ոգու արտահայտիչը… Այո՛, «հայ ժողովրդի պատմության մեջ ոչ մի շրջան պատմական մեծ դեպքերով, հեղաշրջումներով, ոգևորություններով ու հիասթափություններով այնքան հարուստ չի եղել, որքան 20–րդ դարի առաջին քառորդը»,— «Արևմտահայ բանաստեղծներ» ուսումնասիրությունում նշում է բանասիրության դոկտոր Վազգեն Գաբրիելյանը:— Հայ կյանքի երկու հատվածներում էլ հայ գրականությունը հասավ աննախընթաց բարձրության: Մեր գրականության դարավոր անդաստանում արմատ արձակեցին ու կաղնիացան Թումանյանն ու Սիամանթոն, Տերյանն ու Մեծարենցը, Օտյանն ու Չարենցը և ուրիշներ…»:

1794–ին հնդկահայ գաղութում հայ առաջին պարբերականի՝ «Ազդարարի» ծնունդն ասես ազդարարեց ազգային զարթոնքի այն ճանապարհի սկիզբը, որ շարունակության մեջ՝ ամբողջ 19–րդ դարում և այնուհետ արևմտահայ մամուլի (առաջին հերթին անվանի հրապարակախոս Միքայել Նալբանդյանի գաղափարները դավանող և նրա նվիրյալ բարեկամ Հարություն Սվաճյանի, ապա և Հակոբ Պարոնյանի խմբագրած «Մեղու» շաբաթաթերթի)՝ հետզհետե

զորացող հրապարակախոսական–գրական էջերում ընթացավ երկփեղկված հայրենիքի գոյատևման անընդմեջ պայքարի ու ազգային ոգին անմար պահելու նվիրական գաղափարների արտահայտման տարբեր դրսևորումներով, բայց միևնույն՝ ժողովրդի ապագային միտված շեշտադրումներով: Ապա ճանապարհը շարունակվեց արևմտահայ ուրիշ երևելիների՝ Մեսրոպ Թաղիադյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Ղևոնդ Ալիշանի, Պետրոս Դուրյանի, կիզակետվեց գրական հաջորդ սերնդի՝ Տիգրան Կամսարականի, Առանձարի, Ռուբեն Զարդարյանի, Երվանդ Օտյանի, Հակոբ Պարոնյանի, Արփիար Արփիարյանի, Տիրան Չրաքյանի (Ինտրա) և այլոց ստեղծագործական արարումներում: Այս երակը կտրվեց, թե՞ հավերժության խորհրդանշանով կնքվեց վաղամեռիկ հանճարի՝ Միսաք Մեծարենցի, 20–րդ դարասկզբի Հայոց մեծ եղեռնի զոհերի, հոգեբանական նորավեպի խոշորագույն վարպետ Գրիգոր Զոհրապի, սքանչելի քնարերգուներ Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի՝ մայր ժողովրդի սրբազան իդեալները, նրա տառապանքներն ու մաքառումները, ցավերն ու տագնապները, ազգային ողբերգություններն ու չմարող հույսերը գեղարվեստական կատարյալ վարպետությամբ արտացոլած ստեղծագործություններում: Գրողներ, որոնք հայոց պատանի սերունդների հետ մշտապես խոսել են ոչ միայն պարբերաբար հրատարակվող ընտրանի ժողովածուների, այլև դպրոցական դասագրքերի էջերից և իրենց բարձրարժեք ստեղծագործություններով ոգեղեն հետքեր թողել նրանց հոգեկերտվածքի ձևավորման վրա, տոգորել հայրենասիրության, մարդասիրության և ուրիշ նվիրական զգացումներով:

Սերնդեսերունդ են ավանդվել այդ գրողների կյանքի և ստեղծագործական արարումների խորհրդանիշ–թևավոր խոսք դարձած հայրենախոս նվագները. Մկրտիչ Պեշիկթաշլյանի մարդասիրության խոհը՝ «Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, // Քան զանձկալի եղբայր անուն…», Ղևոնդ Ալիշանի հայրենաշունչ կանչը՝ «Հայոց աշխարհ, գարունդ է հասել», «Առավոտուն դռնակն է բաց, // Ելլ, ելլ արևդ Հայաստանյայց» և կամ՝ «Ի՞ զեն, ի՞ վրեժ, օ՞ն անդր հառաջ…» ազատագրական պայքարի կոչնակը, Պետրոս Դուրյանի՝ «Հայրենիք մը ունիմ թշվառ // Չօգնած անոր՝ մեռնիլ աննշան, // Ո՞հ այս է սոսկ ցավ ինձ համար» ցավագին պոռթկումը, և կամ «անհուն բո-

ցով» բռնկված հոգու ըմբոստ ընդվզումը՝ «Թող անեծք մ’ըլլամ քո կողքդ խրիմ, // Թող հորջորջեմ քեզ՝ «Աստված ոխերիմ», Հակոբ Պարոնյանի պայծառ կանխատեսությունը՝ «Դու չկրցար ինձ հաղթել և մեռցնել զիս, ո՛վ մահ: Ահա իմ անունս անմահ մնացած է երկրի վրա…», Վարուժանի հրաշունչ ձոներգը՝ «Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի, // Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ…» և կամ՝ «Եղեգնյա գրչով վրեժ երգեցի, ընդ եղեգան փող բոց ելաներ…», Սիամանթոյի եղերամռունչ ցասման պոռթկումը՝ «Ո՜վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քո ճակատիդ…» և կամ հպարտ վրիժառուի «Ես եմ, ես եմ, ես եմ, իմ անունս է Պայքար, և վախճանս՝ Հաղթանակ» ազդականչը… Ու այսպես էլի քանի՜–քանի գրողների քանի՜–քանի իմաստուն խոսք ու խոհ՝ նրանց ստեղծագործական տարերքից ակունքված և յուրովի արձագանք գտած հայոց քանի՜–քանի պատանի սերունդների հոգում:

Մեր հիշատակած (և ոչ միայն) արևմտահայ գրողների ստեղծագործություններից շատերը հասցեագրված են նաև կրտսեր, միջին և բարձր տարիքի երեխաներին ու պատանիներին և, բնականաբար, ընդգրկված են մանկապատանեկան գրականության շրջանակներ. նկատի ունենք Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Ղևոնդ Ալիշանի, Պետրոս Դուրյանի, Գրիգոր Զոհրապի, Հակոբ Պարոնյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և արևմտահայ ուրիշ մեծանուն գրողների չափածո և արձակ ստեղծագործությունների զգալի մասը: Սակայն այս գրողներից քչերն են ստեղծագործել հատկապես երեխաների համար, և եթե անգամ նրանց հասցեագրված տարաժանր գործեր են ստեղծվել, ապա դրանք ավելի շատ սփռված են եղել արևմտահայ մանկական մամուլի էջերում և առավել հազվադեպ են ընթերցողներին ներկայացվել ամբողջական մանկական գրքի տեսքով:

Մենք արդեն նշել ենք, որ արևմտահայ ականավոր գրողների շատ ստեղծագործություններ ժամանակի ընթացքում «սեփականացվել» են մանկանց ու պատանիների սերունդների կողմից և բնականորեն մտել նրանց ընթերցանության շրջանակներ, տեղ գտել դպրոցական դասագրքերում: Հնարավո՞ր էր պատկերացնել, որ նույնիսկ այնպիսի «զուտ մեծական» (եթե կարելի է այսպես բնորոշել) գրողներ, ինչպես Ղևոնդ Ալիշանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը,

Տիրան Չրաքյանը (Ինտրա), Ռուբեն Որբերյանը, Թովմաս Թերզյանը և ուրիշներ գրել են նաև ստեղծագործություններ, որոնք նաև մանկական–պատանեկան հասցեագրում ունեն: Ճիշտ է, դրանցից շատերը տպագրվել են արևմտահայ այս կամ այն պարբերականում և այնուհետ, ցավոք, չեն էլ ներառվել այդ գրողների գրքերում:

Առիթն օգտագործելով՝ հակիրճ անդրադարձ կկատարենք նաև այդ գրողներին՝ իհարկե, շեշտադրելով հենց մանուկներին հասցեագրված նրանց ստեղծագործությունները, որոնցից մի քանիսը ներառված են այս գրքի հավելվածում:

* * *

Ականավոր հայրենագետ, բանաստեղծ, պատմաբան, մանկավարժ **Ղևոնդ Ալիշանի** (1820–1901)՝ հատկապես հայրենասիրական–ազգասիրական ոգեղեն տարերքով հյուսված ստեղծագործությունները մեծ դեր են խաղացել մանկանց ու պատանի սերունդների դաստիարակության գործում:

Ալիշանը ծնվել է Կ. Պոլսում 1820–ին, սովորել է Մխիթարյան դպրոցում: Իր գրական–մանկավարժական գործունեությունն սկսել է 40–ական թվականներից, երբ աշխատել է Վենետիկի Ռաֆայելյան և Փարիզի Մուրադյան վարժարաններում՝ որպես ուսուցիչ, տեսուչ, ապա և Մխիթարյան միաբանության կողմից հրատարակվող «Բազմավեպ» ամսագրի խմբագիր: 70–ական թվականների սկզբից մինչև իր կյանքի վերջը Ալիշանն զբաղվել է միայն գիտական գործունեությամբ: Լինելով 19–րդ դարի հայ մշակույթի, գրականության ու գիտության ամենաերևելի դեմքերից մեկը՝ իր առասպելական աշխատասիրությամբ և հանճարի փայլատակումներով նա արարեց գրական, հայագիտական և այլ բնույթի ստեղծագործությունների տասնյակ հատորներ՝ մի ամբողջ գրադարան («Նուագք» ընդհանուր խորագրով բանաստեղծական հինգ շարք, հայագիտական–պատմագիտական–բանասիրական բազմաթիվ աշխատություններ՝ «Տեղեկագիր Հայոց մեծաց», «Հին հաւատք հայոց», «Հայապատում», «Շնորհալի և պարագայ իւր», «Շիրակ», «Այրարատ», «Հուշիկք հայրենեաց հայոց» և այլն):

Ղազարոս Աղայանը Ալիշանին անվանել է «արդարև նահապետ, նահապետ մի քանի սերնդի», «դարուս հայկական հանճարի ներ-

կայացուցիչ» և «Առ Ղևոնդ հայր Ալիշան» ձոներգում իր հիացմունքն արտահայտել նրա անձի ու գործի հանդեպ «խորազնին նկարիչ հոգվո», «լուսո հրոյն սիրահար», «մեծազոր հսկա Պրոմեթևս», «հանճարեղ երգիչ բյուր ելևէջով» և մեծարումի այլ խոսքերով, իսկ վերջում՝

Դու միայն գիտես լեզուն բնության,
Քեզ հետ են խոսում շնչավոր, անշունչ,
Հայրենի երկրի ամեն մի թռչնիկ
Քո գովքն են երգում այսպես սրտառուչ…

Նրա ազգանվեր գործունեությունն ու գիտական սխրանքը թերևս ամենից հրաշալի և պատկերավոր բնութագրել է Դանիել Վարուժանը. «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կըներ: Աս կը նշանակէ, թէ գիտությունը կը ժողովրդականացներ: Իր թանգարանին, իր մագաղաթներու մատենադարանին և առհասարակ հայրենի բոլոր ավերակներում մենությանը վերև կախված էր իր հսկայական տավիղը, և ահա Խորենացիին խոսքը երգի կը փոխվեր, Եղիշեի աղաղակը՝ դյուցազներգության, Եզնիկի մտածումը՝ երևակայության, Շնորհալիի աղոթքը՝ օրհներգության, տրտմությունը՝ արցունքի և անցյալի նշույլը՝ հրդեհի»:

Կանգնած դարակեսի խաչմերուկում՝ Ղևոնդ Ալիշանը նայում էր ոչ միայն ազգի անցյալի ճանապարհին և անսահման նյութ քաղում այդ անցյալի փառքերից ու ցավագին իրողություններից, այլև նայում էր առաջ՝ խորագետ հայացքը հառած մայր ժողովրդի ապագային՝ նրա հետագա ճակատագրի ազնիվ մտահոգությամբ: Նա բուն գրական աշխատանքով զբաղվել է միայն մեկ տասնամյակից քիչ ավելի՝ 40–ական թվականներին և 50–ականների սկզբին, և նրա չափածո ստեղծագործություններն ընդգրկված են «Նուագք» ընդհանուր խորագրով հինգ շարքերում՝ ըստ թեմաների: Հենց առաջին հատորյակն էլ ամբողջովին հասցեագրված է մանուկներին և խորագրված է «Մանկունք»: Այն բաղկացած է չորս նվագից՝ «Աղոթք», «Հորդորակք», «Մաղթանք» և «Հիշատակ պատանեաց»: Ըստ էության, բանաստեղծական այդ նվագներում կրոնական ներհյուսվածքով բարոյական խրատներ են մանուկներին ու պատանի-

ներին, առավոտի, «Հայր մերի», Աստվածածնի և այլ մաղթանքներ ու աղոթքներ՝ առ Սուրբ Հոգին:

«Բնունի» շարքում տեղ են գտել բնության կրթող և դաստիարակող դերի փառաբանության նվագներ՝ հյուսված գույների ու ձայների սքանչելի ներդաշնակությամբ: Ահա «Առ առվակն» նվագից մի հատված.

Սիրեմ ես զեզր առվակին,
Որ ի սարեն մենավոր,
Ընդ զառ ի կող բլրակին
Սահեալ երթա դաշնավոր,
Ծավալ ի մեջ մարմանդի
Եվ գիրգ ծաղկանց պա համբույր,
Մանրիկ ալեռքն պատի,
Շրջան առեալ բյուրս բյուր…

«Բնունի»–ում բնությունը խոսում–երգում է իր բազմերանգ ելևէջներով, ամբողջ հմայքով՝ ընթերցողի հոգևոր աշխարհի վրա թողնելով մնայուն ազդեցություն, լուսավոր հետագիծ: Թվում է, թե բանաստեղծը նպատակ է դրել բնությունը ներկայացնելու իր ամբողջական գունապատկերով: Վերնագրերն իսկ արդեն այդ մասին են վկայում՝ «Ելք արևա», «Արուսյակ», «Լուսին», «Աստեղք», «Գիշեր», «Լերինք»,… ու նաև բնության հետ հաշտ–համերաշխ ապրող մարդիկ՝ «Մրգապահ», «Մշակ», «Որսորդ», «Անտառապահ» և այլն: Այս շարքը, որ կարելի է անվանել «Բնության գիրք» և կամ «Բնության բանաստեղծական հանրագիտարան», իսկապես նաև մանուկ ու պատանի ընթերցողներին տոգորում է բնաշխարհի հանդեպ սիրո, նրա գեղեցկությունների պահպանման խանդաղատագին զգացումներով:

Եթե հաջորդ՝ «Մաղթանք» շարքում ազգի առաքյալ հերոսներին ձոնված տոնական մաղթանքներ են, «Տխրունի»–ում՝ մարդկային հոգու տառապանքների, վշտերի ու պանդխտության մոտիվներով երգեր, իսկ «Տերունի»–ում՝ Աստծո արարչության առեղծվածներին, հոգու և մարմնի իրարամերժ ձգտումներին նվիրված նվագներ, ապա «Հայրունի» շարքն արդեն ամփոփում է հայրենասիրական–

ազգասիրական թեմաներով բանաստեղծությունները՝ ավելի սրտամոտ ու հասանելի մանկանց ու պատանիների սերունդներին: Այս շարքում առանձին բաժին են կազմում «Նահապետի երգերը» («Երգք Նահապետի»), որոնք ժամանակին Ալիշանին համազգային բանաստեղծի համբավ պարգևեցին: Իբրև մանկավարժ՝ նա ազգային լուսավորության ու կրթության հիմքում դնում է հայրենիքի հանդեպ սերը («Ուր քաղաքացիք չիք, չկա և հայրենիք») և հայրենախոս աշխարհաբար երգերով (շատ ստեղծագործություններ էլ գրել է հին հայերենով) օրինակ ծառայում ինչպես իր, այնպես էլ հետագա ժամանակների հայ շատ գրողների համար (Մկրտիչ Պեշիկթաշլյան, Միքայել Նալբանդյան, Ռափայել Պատկանյան, Սմբատ Շահազիզ և այլք):

Հայոց հերոսական անցյալին, ազգի նվիրյալ զավակներին, նրա ազատագրության պայքարի նահատակներին նվիրված հայրենասիրական նվագները նույնպես «սեփականացվել» են մանուկ ու պատանի ընթերցող սերունդների կողմից և ջերմ արձագանք գտել նրանց սրտերում: Առաջին հերթին նկատի ունենք «Պըլպուլն Ավարայրի» պոեմը՝ Ավարայրի ազատամարտի հրաշագեղ դիմանկարով, պատմիչ Եղիշեի՝ Ավարայրի «պըլպուլի» այլաբանական ու խորհրդանշական կերպարով, առասպելաշունչ վերջաբանով՝ «Թէ բյուր դարք անցնին՝ դու մնաս, Վարդան» հավերժականչի խորհրդով.

Կանչէ՛, պըլպուլի՛կ, կանչէ՛ հոգեձայն,
Որ երկնուց ի վայր հայի և Վարդան,
Հիշե զՀայաստան՝ պուն յուր սիրական,
Հայաստան հիշե զյուր Կարմիր Վարդան:

Մենք նկատի ունենք նաև «Մասիսու սարերն» հայրենաշունչ բանաստեղծությունը, որ Մեծ ու Փոքր Մասիսների երկխոսության միջոցով ավանդում է անմոռաց դասեր հայոց անցյալ փառքի, օտար կրնկի տակ տնքացող հայրենիքի ներկա ողբացյալ վիճակի մասին և, այնուամենայնիվ, հավատ բացվող օրվա՝ ապագայի հանդեպ, երբ Մեծ Մասիսի ընդերքից կժայթքեն «ահեղ կրակներ» ու կրկին կբոցավառեն հայոց ոգին, որ կցնցի ու ոտքի կհանի աշխարհը

Հայոց: Բանաստեղծը ազատագրական պայքարի կոչ է անում ողջ ժողովրդին՝ մեծից մինչև «մանկտիք».

…Շարժի՛ր, հա՛ շարժիր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.
Շընչէ՛, հա՛ շընչէ, ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացդ հուսո նշան ընի…
…Ահա շարժեցավ Ավագըն Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհի.
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դո՛ւք էլ շարժեցեք, մանկըտի՛ք Հայկա…

Իսկ «Օ՜ն, անդր առա՛ջ» մարտական քայլերգում (որ մեր ազգային երգարանի մնայուն գոհարներից է) հնչում են հանուն հայրենիքի ազատության զինվելու և թշնամիներից վրեժ լուծելու այսպիսի խրոխտ կոչնակներ՝ «արանց մանկունքին»՝ «հայրենավրեժքդ Հայկազունքին».

Հապ՝ օ՛ն, արի արանց մանկունք՝
Հայրենավրեժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՛ն, ի զեն գունդագունդ,
Եռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զե՛ն, ի վրե՛ժ, օ՛ն, անդր առաջ,
Ի զե՛ն, ի վրե՛ժ, մի՛ ձախ, մի՛ աջ…

Այո՛, Ալիշանը ազատագրական պայքարի ելնելու, «շարժվելու», երկիր հայրենին թշնամիներից ազատելու սրբազան գործում մեծ տեղ է հատկացնում պատանեկությանը՝ «մանկըտիքին»: Եվ մանկանց ու պատանիների հայոց սերունդները տասնամյակներ շարունակ ու նաև այսօր հայրենասիրության, ազատության ոգեղեն դասեր են առել Ալիշանի ոչ միայն այդ, այլև հայրենաշունչ–քնարական «Հայոց աշխարհիկ», «Հայ Հայրենիք», «Հրազդան», «Ողբա՛մ զքեզ, Հայո՛ց աշխարհ», «Ի բամբիռն Հայկազնի», «Հայ հանճար» և այլ երգերից: Հայոց «դալար մանկըտիքին»՝ Արարատի պատանի զավակներին, նա ավանդում է հավատարիմ մնալ անցյալ փառքերին,

թշնամիներից ազատել հող հայրենին, շենացնել այն, գեղեցկացնել ու միշտ հիշել հայրենյաց քաջազուն զավակներին և… իրեն՝ «ծեր նահապետին».

— Ծեր նահապետիդ տո՛ւր կակուղ հողիկ,
Որ զքեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ…

Եվ «հայոց մանկըտիք» միշտ կհիշեն Հայոց նահապետին ու նրա հայրենաշունչ երգերով զինավառված, միշտ տոգորված «պինդ սիրով» առ հայրենիք, կկառուցեն «նոր Հայաստանը»: Ինչպես ինքն էր հավատով գրել.

Ո՜հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,
Այլ թող ելնե ի տապանեն Նոր Հայաստան:

XIX դ. 50–60–ական թվականների հայ գրականության ազգային–հայրենասիրական զարկերակը տրոփյուններով բաբախել է նաև անվանի բանաստեղծ և դրամատուրգ, պոլսահայ կրթական–լուսավորչական նշանավոր գործիչ **Մկրտիչ Պեշիկթաշլյանը** (1828–1868), ում ստեղծագործություններից շատերը նույնպես վաղուց ի վեր ներառվել են մանկապատանեական գրականության շրջանակներում, իսկ մի շարք գործեր հասցեագրվել են հենց երեխաներին և ժամանակին տպագրվել արևմտահայ մանկական մամուլում: Ծնվել է 1828–ին Կ. Պոլսում: Նախնական կրթությունն ստացել է Բերա թաղամասի Մխիթարյան դպրոցում, ապա ուսումը շարունակել է Իտալիայի Մուրադյան վարժարանում: 1845–ին վերադառնալով Պոլիս՝ որպես ուսուցիչ աշխատել է Օրթագյուղի Լուսավորչական վարժարանում, միաժամանակ զբաղվել ազգային–հասարակական բուռն գործունեությամբ իր հիմնադրած Համազգյաց ընկերությունում: Պեշիկթաշլյանը 50–ական թվականներին հիմնադրել է Պոլսի հայկական թատրոնը, ուր բեմադրվել են նաև իր հեղինակած պիեսները: Աշխարհաբար լեզվով գրած իր հայրենախոս բանաստեղծություններով, հայոց պատմական անցյալին ու նշանավոր դեմքերին նվիրված ողբերգություններով («Արշակ Բ», «Վահան Մամիկոնյան», «Կոռնակ», «Վահե») նա մնայուն տեղ է գրավել հայ գրակա-

նության մեծերի շարքում: Իր ամբողջ ստեղծագործության համար խորհրդանշական բնութագիր կարող են լինել իր իսկ հայրենաբուխ խոսքերը. «Հայրենի՛ք, ո՛ր ազգասեր սիրտը չի թնդար այս գեղեցիկ ու վսեմ անունս լսելով: Հայրենի՛ք՝ չիկա ասկե ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը: Հայրենյաց սերը սաստիկ բոց մըն է, որ կբորբոքի ազգասերին սրտին մեջ…»: Դեռ պատանի 1846–ին՝ Համազգյաց ընկերության հիմնադրման հանդիսության ժամանակ, այս ճառին հաջորդող մի ուրիշ, ավելի հասուն տարիքում գրած հոդվածում երևակվում է Պեշիկթաշլյանի լայնախոհ մտածողությունը, ազգի միաբանության և վերածնության մտահոգությամբ ապրող և հանուն այդ նպատակի իրականացման գործող մեծ հայրենասերի տենչանքը: «Ո՛հ, գովելի միաբանություն,— գրում է նա,— որ ամեն սրտերը, թեև օտար ալ ըլլան մեկզմեկու հետ կը կապե, կը վառե զանոնք ազնվական սիրով, ամեն տեսակ ցավոց դեղ կ’ըլլա, դարման կը տանի թշվառությանց, տգիտությունը կը հալածե, ատելությունը կը մարե ու բոլոր ազգի մը ու պայծառության պատճառ կ’ըլլա…»:

Հատկապես պատանի սերունդների համար հայրենասիրության–ազատասիրության հրաշալի դասեր են ավանդում 1862–ին Զեյթունի ապստամբությանը նվիրված և հենց այդպես խորագրված «Զեյթունի երգերը», որոնցում փառաբանվում են սուլթանական բռնապետության դեմ ոտքի ելած զեյթունցիների հերոսական ոգին, հայրենիքի ազատագրության պայքարում նահատակված հայ քաջորդիների սխրանքն ու անմահությունը: Շարքն ընդգրկում է չորս բանաստեղծություն, որոնք իրենց բովանդակությամբ և ասելիքով տրամաբանորեն լրացնում են իրար՝ «Հայ քաջորդիք», «Մահ քաջորդվոյն», «Թաղումն քաջորդվոյն» և «Հայ քաջուհին»՝ ապստամբ հայուհուն նվիրված մի հրաշալի ձոներգ: Հայրենիքի ազատության համար կռվելու և այդ պայքարում թեկուզև կյանքը զոհաբերելու պատրաստակամությունը հայ քաջորդու մեջ մայրն է դեռևս օրորոցից պատվաստել, և երբ գալիս է գործելու պահը («Ո՜վ դու որդիդ լերանց հովտաց, // Ինչո՞ւ այդպես սիրտդ է ցաված», // «…Դեռ ի՞նչ կուզես, ո՜հ, մի ծածկեր…»), նրա շուրթերով իբրև երդում են հնչում այս մարտաշունչ խոսքերը. «Կուզեմ վառոդ և գնդակներ» («Հայ քաջորդի»): Հանուն հայրենյաց մղվող մարտում ծանր վիրավորված

քաջորդին («Մահ քաջորդվոյն») նահատակվածների մեջ իրեն փնտրող վշտահար մորը հիշեցնում է, որ օրորոցային երգերում չէ՞ որ հենց նա է ներարկել հայրենիքի համար զոհվելու զգացումը.

Դու զո՞վ ինդրես, մա՛յր իմ անույշ,
Եկ, մի՛ դողար, մուրեցի՛ր հոս.
Անլաց աչոք դիպե զորդիդ
Ու յուր վերքերն արյունահոս.
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր պար ի Զեյթուն:

Եվ ապա՝

…Ո՞վ հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտքդ վառեցան,
Կարմիր ներկան ձորք, ու դուն
Ուրախ լուրեր պար ի Զեյթուն.
Ու ծաւի զարկին մեր հարց ոսկերք,
Զի չէ՛ մեռած Հայոց կրակ.
Ու ցընծացին այնչափ զոհեր
Զի լուծավ վրեժ յարյան վըրակ.
Խնդաց Մասիս, մա՛յր իմ, ու դուն
Ուրախ լուրեր պար ի Զեյթուն…

Իսկ «Թաղումն քաջորդվոյն» բանաստեղծության «Վասն հայրենյաց մեռար, դու շա՛տ ապրեցար» թևավոր խոսքը հայրենիքի համար զոհվելու, նույնն է, թե հավերժ ապրելու պատգամ է սերունդներին:

Մանուկների ու պատանիների ընթերցանության շրջանակներում են նաև դասագրքերում և հայ պոեզիայի ընտրանի ժողովածուներում տեղ գտած՝ ազգերի եղբայրության, հայրենի բնության և այլ նվիրական թեմաներով այնպիսի հրաշալի բանաստեղծություններ, ինչպիսին են՝ «Եղբայր եմք մեք», «Գարուն», «Գնացե՛ք, ի՛մ տաղք», «Մեծ», «Հույս» և այլն:

Մկրտիչ Պեշիկթաշլյանը գրել է նաև մի քանի մանկական բանաստեղծություններ, որոնք ժամանակին տպագրվել են ամսագրերում, բայց հետո, ցավոք, տեղ չեն գտել նրա ստեղծագործությունների ժողովածուներում: Դրանցից է, օրինակ, «Գոհարիկը», որ Հրանտ և Զաբել Ասատուրը ներառել են 1921–ին Պոլսում հրատարակված «Թանգարան ընտիր հատվածներու» դասագրքում: Եթե նույնիսկ միայն այս բանաստեղծությունը գրեր մանուկների համար, կարելի էր հաստատ պնդել, որ Պեշիկթալշյանը երեխաների հոգեբանության ու մտածողության հրաշալի զգացողություն է ունեցել և ափսոսալ, որ նա մանկագրության ասպարեզում ընդամենը մեկ–երկու քայլ է արել: Հարց ու պատասխանի հետաքրքիր համադրությամբ, խաղային գրավիչ տարերքով հյուսված «Գոհարիկը» իսկապես կարելի է վստահորեն դասել մանկական լավագույն երգերի շարքում.

Ո՞վ է պզտիկն այն աղջիկ,
Սիրուն, աղուոր ու փաւիկիկ,
Սև մազերով, սև աչքով,
Ինքը բոլոր խաւրուտիկ.
— Ո՛հ, այն աղջիկ
Է Գոհարիկ:

Հաջորդ քառատողերում փոքրիկ աղջնակին նա համեմատում է պարտեզում ծաղկած վարդի ու հասմիկի, նրա ձայնը՝ թռչնակների ծլվլոցի հետ, և փոքրիկ ընթերցողը պետք է կռահի՝ «ո՞վ է վարդ, ո՞վ՝ Գոհարիկ», «թռչո՞ւնն է, թե չէ Գոհար, որ ձայն տայ»: Իսկ վերջում պետք է լուծել հետևյալ «հանելուկը».

Ո՞վ է պզտիկն այն աղջիկ՝
Ամիրնազանդ, չարաճճիկ,
Որ շատ անգամ տունին մեջ
Յարուցանէ փոթորիկ.
— Ո՛հ, այն աղջիկ
Չէ Գոհարիկ…

Մկրտիչ Պեշիկթաշլյանը կյանքից հեռացավ ծաղկուն տարիքում, երբ նոր էր լրացել քառասուն տարին: Ծանր հիվանդությունը ժամանակից շուտ կտրեց տաղանդավոր բանաստեղծի կյանքի թելը:

Անվանի գրող, բանասեր Արշակ Չոպանյանը այսպես է գնահատել նրա վաստակը. «Պեշիկթաշլեանի բանաստեղծական գործը անգին գանձ մըն է մեր գրականութեան համար: Որքան ատեն որ ապրի հայ ազգը, մեր նոր սերունդները Պեշիկթաշլեանի բանաստեղծութեանց մեջ պիտի ուսանին քաղցրադաշնակ զգացմունց և նուագաւոր հայերէնի գաղտնիքը, ինչպես և անոր կեանքին մեջ պիտի գտնեն ազգանուէր գործիչի ամենէն օրինակելի տիպարներէն մին, որ երկրագնդի վրայ յայտնուած ըլլան»:

Տիրան Չրաքյանը (Ինտրա) (1875–1921) նույնպես դարասկզբի արևմտահայ գրականության նշանավոր, բայց, ցավոք, քիչ ուսումնասիրված դեմքերից է:

Նա ծնվել է Կ. Պոլսի Իսկուտար թաղամասում 1875–ին, սովորել և ավարտել է Պերպերյան հայտնի վարժարանը (այն հիմնադրել էր բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս, նաև մանկական բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ Ռեթեոս Պերպերյանը): Կիսատ թողնելով ուսումը Պոլսի գեղարվեստի վարժարանում (բանաստեղծական տաղանդից բացի՝ նա օժտված է եղել նաև նկարչական շնորհով)՝ երկար տարիներ տարբեր վարժարաններում դասավանդել է հայոց լեզու և գրականություն, ֆրանսերեն, հոգեբանություն և այլ առարկաներ՝ ժամանակակիցների վկայությամբ՝ մեծ սեր ու հարգանք վայելելով իր սաների և գործընկերների կողմից:

Չրաքյանի առաջին ստեղծագործությունները սկզբում տպագրվում են պոլսահայ տարբեր պարբերականներում: 1906–ին լույս է տեսնում «Ներաշխարհ» խորագրով գիրքը, իսկ 1908–ին՝ «Նոճաստան» սոնետների ժողովածուն, և հենց այս երկու գրքերով էլ նա դառնում է հայտնի անուն դարասկզբի արևմտահայ պոեզիայում: Նրբազգաց բանաստեղծի հոգեկան աշխարհը ցնցվում է թուրք բարբարոսների սանձազերծած եղեռնից, և այնուհետ նա այդպես էլ չի գտնում իր տեղը կյանքում. 1921–ին հանիրավի ամբաստանությամբ աքսորվում է, ենթարկվում անմարդկային բռնությունների և իր մահկանացուն կնքում Եփրատի եզերքին:

Հիշյալ երկու գրքերում տեղ գտած մի քանի ստեղծագործություններ ընթերցանության հետաքրքիր նյութ կարող են դառնալ պատանի ընթերցողների համար (թեև դրանցից շատերի խոհական–փիլիսոփայական ոգին ըմբռնելը իմացական որոշակի մակարդակ է պահանջում): Ահա այդ բանաստեղծություններից մեկը («Գետը»), որ բնության մի գողտրիկ այլաբանական պատկեր է, առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» 1907–ին.

Զայնն իր ջուրերուն
Ու խավարն հզոր
Լերանց իղձն է զոր
Կը տանի ծովուն:
Անշարժ, դարավոր
Թռչելու, ծփալու
Կարոտն է բոլոր
Զոր գետը սարսռուն
Կ'երթա տանելու
Լեռներեն հեռու
Մշտառույգ ծովուն:

Ձեռագիր վիճակում պահպանվել է Չրաքյանի «Դրացի կատուն» բանաստեղծությունը, որ խոհափիլիսոփայական շերտերով հանդերձ, իր հետաքրքիր հյուսվածքով կարող է հասանելի լինել մանուկ ու պատանի ընթերցողներին և մտորումների տեղիք տալ նրանց.

Երբեմն եկո՛ւր, կապրո՛ւ,
Դուռնեն նայելու…
Երբոր անոթի ես,
Իմ տունս շիտակ.
Ու մլավումով երկար
Ու ցավագին
Երգե մենությանս մեջ,
Ուր վշտերը կապրին…

Ու այսպես շարունակվում է բանաստեղծի «մենախոսությունը» դրացի «աղքատ կատվի» հետ՝ իր մենությունը ցրելու, վշտերը կիսելու հրավերով.

Իմ տո՛ւնս եկուր երբեմն.
Ես ուրեմիք պիտի տամ քեզի.
Զուկի պոզեր
Ու ոսկորներ հավու:
Եկո՛ւր, աղքա՛ր կատու,
Կանաչ նայվածքով
Դուռնեն նայելու…

«Տիրան Չրաքյանի՝ այդ սքանչելի գրագետի… հոյակապ տաղանդը կը շողար Պոլսո մեջ».— գնահատանքի այսպիսի խոսքեր է նրան հասցեագրել Արշակ Չոպանյանը:

Արևմտահայ մանկապատանեկան գրականության մեջ մեկ–երկու էջ է գրել նաև բանաստեղծ, դրամատուրգ, մանկավարժ **Թովմաս Թերզյանը** (1840–1909): Նա սովորել է ծննդավայր Պոլսի Մխիթարյան, ապա՝ Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում: 1858–ից երկար տարիներ հայերեն և ֆրանսերեն է դասավանդել Պոլսի Կեդրոնական վարժարանում: Գրական ստեղծագործություններից բացի՝ հեղինակել է նաև մի շարք դասագրքեր: «Ուսուցիչը, որ եղավ Թերզյան, այնքան մեծ էր, որքան բանաստեղծը,— գրել է Արշակ Չոպանյանը:— Մեկե ավելի հայ սերունդներ իրմե սորված են սիրել, ըմբռնել, ճաշակել գեղարվեստն ու գրականությունը…»:

Հետաքրքիր է հիշատակել, որ Տիգրան Չուխաջյանի «Արշակ Բ» օպերայի լիբրետոն հենց Թերզյանն է գրել: Ինչ վերաբերում է մանկապատանեկան հասցեագրում ունեցող նրա բանաստեղծություններին, ապա առավել ուշագրավը «Մանուկն ու վտակ»–ն է, որ թերևս հայ միջնադարյան բանահյուսության նմուշներից մեկի («Մանուկն ու ջուրը») մշակումն է: Այդ բանահյուսվածքը մշակել է նաև Հովհաննես Թումանյանը: Թերզյանի մշակած տարբերակը նույնպես հետաքրքիր է և ընթերցելի:

Չքնա՛ղ վրդակ,
Յո՞ երթաս,
Ո՞ւմ զայդ ալյակ
Տալ գնաս…

Հարց է տալիս մանուկը և խնդրում, որ վտակն այլևս չշարունակի ճամփան, «հանգի» մարգերում, կյանք պարգևի վարդերին: Բայց վտակն «ուղևոր» է, և նրա երազանքն է «հանգչել ի ծով»:

* * *

Արևմտահայ ականավոր մի շարք գրողների կյանքն ու ստեղծագործությունը «կիսվել» է մեր գրականության արևմտահայ և սփյուռքահայ ճյուղերի շրջանակներում: Ճակատագրի բերումով փրկվելով Եղեռնից՝ արևմտահայ գրականության մեջ մեծ ավանդ ներդրած այդ գրողները հիմք դրեցին սփյուռքահայ շրջանի գրականությանը՝ ասես դառնալով «կապող օղակ արևմտահայ և սփյուռքահայ գրականության միջև» (Վազգեն Գաբրիելյան): Մենք առաջին հերթին նկատի ունենք Վահան Թեքեյանին, Հակոբ Օշականին, Արշակ Չոպանյանին, Ռուբեն Որբերյանին…

Միայն «Տաղ հայրենի լեզվին» բանաստեղծությունը բավական է, որպեսզի ականավոր բանաստեղծ, հրապարակախոս, մանկավարժ, ազգային ու մշակութային նշանավոր գործիչ **Վահան Թեքեյանի** (1878–1945) անունը նույնպես «գրանցենք» արևմտահայ մանկապատանեկան գրականության տարեգրամատյանում: Այս ձոներգը մայրենիին նվիրված ամենագեղեցիկ, պատկերահյուս բանաստեղծություններից մեկն է և վաղուց ի վեր ողողանջում է հայոց մանուկ ու պատանի սերունդների շուրթերին.

Քե՛զ, Հա՛յ լեզու, կը սիրեմ մրգասպանի մը նման…
Մեր անցյալին թանձրախիտ սրվերներուն մեջ՝ կարծես
Մեյ–մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ՚երևան,
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղեմ զանոնք ես…

Անսահման սեր, հպարտություն և հիացմունք մայրենի լեզվի հանդեպ, սքանչելի համեմատություն մրգաստանի հետ, որի «մեյ–

մեկ» պտուղներն ասես հայերեն հյութեղ բառերն են, որոնք «այս պահուս շրթանցս վրա եմ բռներ», բառեր, որ «քիմքիս կ'օծեն և կ'սփոփեն սիրտս հիմա…»: Թեքեյանի համար Հայ լեզուն դարերի հարվածներին, շուրջն ամեն ինչ տապալած մրրկաշունչ քամիներին միշտ դիմացած, «հին ավիշով կենսահորդ» դալարագեղ պուրակ է՝ «մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ»: Ինչպես այս, այնպես էլ տարբեր տարիներին գրած մի շարք այլ հայրենախոս բանաստեղծություններ («Հայ ազգին», «Եկեղեցին հայկական», «Հոն հեռուն ահա», «Սփյուռք», «Հայ հոգիին», «Հայաստանին», «Մասիսին», «Ներկա Հայաստանին» և այլն) վաղուց ի վեր ներառվել են պատանեկան սերունդների ընթերցանության շրջանակներում: Դրանք տեղ են գտել Թեքեյանի «Հայերգություն» խորհրդանշական խորագրով ժողովածուում, մի գիրք, որ, իր խոսքերով, արտացոլում է «հայ ազգին կարճ ատենի մը մեջ ապրած հոգեկան աճումի և կորուստի, հրճվանքի և տառապանքի, հույսի, անհուսության ու հետո դարձյալ բոլորովին անօրինակ, իրեն միայն հատուկ կյանքը»:

Իսկ այդ «կարճ ատենը» Թեքեյանի ստեղծագործական կյանքի տարիներն էին, որ «հայ ժողովրդի ու հատկապես արևմտահայոց համար եղավ անլուր տառապանքների, հույսերի ու հուսախաբությունների, կորուստների ու որոնումների, ոգորումների ու ոգևորությունների փոփոխակի մի ժամանակահատված, և բանաստեղծը դարձավ իր ժողովրդի այդ տարիների ապրած տվայտանքների, տրտմությունների և ուրախությունների, հուսալքությունների և հույսերի արտահայտիչը,— ընդգծում է Վազգեն Գաբրիելյանը:— Նրա բանաստեղծությունը մեղմ, հանդարտ զրույց է իր սրտի, իր Աստծո, իր սերերի ու երազների հետ, որ իր Հայրենիքն է, Հայն ու Հայաստանը… Թեքեյանի բանաստեղծության երկու հիմնական թեմաներն են Հայրենիքը, Մարդը…»:

Վահան Թեքեյանի «երկփեղկված» կյանքն ու ստեղծագործությունը պայմանականորեն «բաժանվում» է երկու հատվածի. ըստ այդ տարաբաժանման՝ նրան կարող ենք համարել և՛ արևմտահայ, և՛ սփյուռքահայ գրող: Նրա գրական–ստեղծագործական կեսդարյա ճանապարհի ուղիղ կեսն անցել է սփյուռքյան շրջանում: Դարասկզբի արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից մեկը Սփյուռ-

քի կազմավորումից՝ 20–ական թվականներից հետո ստեղծած գրական նոր արժեքներով դարձավ հավասարապես նաև Սփյուռքի գրող:

Հիշատակենք տարագիր մեծանուն գրողի դժվարանց կյանքի ճանապարհի մի քանի դրվագ:

Ծնվել է 1878–ի փետրվարի 3–ին Կ. Պոլսում, սովորել Ներսեսյան, Պերպերյան, Կեդրոնական վարժարաններում: Կեդրոնականում ուսումը կիսատ թողնելով՝ սկսում է աշխատել Պոլսի ապահովագրական ընկերությունում, բայց երկու տարի անց, խուսափելով օսմանյան ոստիկանության հետապնդումից, մեկնում է Անգլիա, այնտեղից՝ Ֆրանսիա, ապա՝ Եգիպտոս, ուր ապրում է մինչև 1908 թվականը: Այնուհետև կրկին վերադառնում է Պոլիս, խմբագրական աշխատանք կատարում «Շիրակ» հանդեսում և «Արևելք» օրաթերթում, ազգային, լրագրական, մանկավարժական, հասարակական–քաղաքական բուռն գործունեություն ծավալում: 1914–ին հեռանում է Պոլսից, փրկվում է Եղեռնից ու նորից աստանդական կյանքի տարիներ՝ Երուսաղեմում, Կահիրեում: 1920–22–ին Թեքեյանը կրկին Պոլսում է և զբաղվում է հասարակական–մշակութային բուռն գործունեությամբ: 1922–ի վերջերին, ուրիշ հայտնի հայ գործիչների նման, քեմալականների բռնություններից խուսափելով՝ փախչում է Պոլսից, անցնում Բուլղարիա, ապա՝ Հունաստան, Եգիպտոս, Սիրիա, ուր զբաղվում է հայ որբերի հավաքման և ուսումը կազմակերպելու հարցերով: 1926–ից որոշ ընդմիջումներով Թեքեյանը ապրեց և գործեց կրկին Եգիպտոսում, որտեղ և մահացավ 1945–ի ապրիլի 4–ին: Այս ամբողջ ընթացքում նա ստեղծել է գրական բարձր արժեքներ՝ մինչև 1920 թ. հրատարակելով երեք ժողովածու («Հոգեր» (1901), Փարիզ, «Հրաշալի հարություն» (1914), Պոլիս, «Կես գիշերեն մինչև արշալույս» (1919), Փարիզ), ևս երեք ժողովածու՝ կյանքի ու գործունեության սփյուռքյան շրջանում («Սեր» (1933), «Հայերգություն» (1943), «Տաղարան» (1945)): Գրել է նաև արձակ գործեր, թատերգություններ, հուշեր, տարաբնույթ հոդվածներ և այլն:

Հատկապես Թեքեյանի «Հայերգությունը» մեր ժողովրդի անցյալի փառքերին, հայոց մեծերին, մեր հերոս նախնիներին, հայրենյաց սրբություններին, հայ ազգին, մայրենի լեզվին և «նոր Հա-

յաստանին» նվիրված երգերը պատանի ընթերցողին տոգորում են հայրենիքի հանդեպ անսահման սիրո, հպարտության, հավատի ու նվիրվածության զգացումներով: Հայրենականչի ինչպիսի՜ հպարտ դողանջներով են հնչում «Հոն հեռուն, ահա» բանաստեղծության վերջին տողերը.

…Մենք՝ քու զավակներդ,
Սրտով սիրակեզ
Ահա կուգանք քեզ,
Հայաստան, որ զերդ
Մայր մը ճշմարիտ
Մեզ կը կանչես արդ…

Վահան Թեքեյանը իր կյանքի գրեթե բոլոր տարիներն անցկացրեց տարագրության մեջ՝ մայր հայրենիքից հեռու ու նրա կարոտը հոգում, բայց «հայությանը անձնվիրաբար ծառայեց գրչով և գործով …» և անմահացավ հայոց սերունդների սրտում:

Կ. Պոլսում լույս տեսնող «Ծաղիկ մանկանց» հանդեսի 1889–ի 4–րդ համարում լույս տեսավ «Որբուկը» խորագրով մի բանաստեղծություն, որի տակ ստորագրված էր՝ **Արշակ Չոպանյան**՝ Կեդրոնական վարժարանի ուսանող: Մինչ այդ նույն անուն–ազգանունով ուրիշ փոքրիկ բանաստեղծություններ էլ էին տպագրվել այդ պարբերականում, բայց հատկապես այս մեկն իր բովանդակությամբ շատ հուզեց ընթերցողներին: Դրսում սարսափելի ցուրտ է, նույնիսկ մերկ ծառերն են դողում, բայց «տուներուն մեջ լուսավառ» ուրախություն է, Կաղանդի տոն: Այդ պահին գիշերային փողոցով «ստվերի մը պես անձայն, խոհուն, գլխահակ», թախծոտ դեմքով մի տղա էր անցնում: Նա հանկարծ կանգ է առնում և աչքերը հառած երկնքին՝ «լալով աղոթք մը ըրավ»: Երկնքում մի հրեշտակ է այդ պահին հայտնվում և «դառնորեն արտասվող» տղային հարցնում է.

Ըսե՛ ինձ, ո՞վ հեք մանկիկ,
Որ դառնորեն կ՚արտասվես,
Ինչ կբաղձա քու սրտիկ,
Ըսե՛, կարող եմ տալ քեզ:

Հրեշտակն առաջարկում է հագուստ, խաղալիք, անուշ խորտիկներ, համեղ միրգ, բայց վշտահար փոքրիկը պատասխանում է.

— Երբ իմ մայրիկս ողջ էր դեռ,—
Ըսավ որբուկն հրեշտակին,—
Ձիս կգրկեր, կպագներ
Գիշերն երբ գար Կաղանդին:
Բարի՛ հրեշտակ, չեմ ուզեր
Խաղալիք կամ զգեստ մաքուր,
Չեմ ուզում միրգ կամ պատկեր,
Մորըս համբո՛ւյրն ինծի տուր:

Այն ժամանակ ո՞վ կարող էր գուշակել, որ մանկական այդ հուզիչ բանաստեղծության հեղինակը՝ 15–16 տարեկան պատանին, տարիներ անց դառնալու է մեր գրականության փառքերից մեկը՝ ականավոր բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, գրականագետ–գրաքննադատ, խմբագիր–հրապարակախոս, թարգմանիչ (ինչու չէ նաև մանկագիր), մի խոսքով՝ եզակի դեմք արևմտահայ, ապա և սփյուռքահայ գրականության մեջ: 1923–ին Չոպանյանին հասցեագրված նամակում Ավետիք Իսահակյանը դրվատանքի այսպիսի խոսքեր է հղում նրան. «Ձեր դերը, սիրելի՛ մեծանուն եղբայր, հսկայական է մեր մեջ, ու անսպառ է Ձեր հայրենասիրությունը, Ձեր նվիրումը մեր ազգին…»:

Մինչ Արշակ Չոպանյանի մանկապատանեկան այլ ստեղծագործություններին անդրադառնալը թերթենք նրա կյանքի ու գործունեության մի քանի էջ:

Ծնվել է 1872 թվականին Կ. Պոլսում՝ արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Պեշիկթաշ թաղի Մաքրուհյան դպրոցում, ապա ավարտել է Կեդրոնական վարժարանը: Հենց այդ տարիներին էլ նա գրում ու պոլսահայ տարբեր պարբերականներում տպագրում է իր բանաստեղծությունները, իսկ արդեն 1891–ին առանձին գրքով լույս է տեսնում «Արշալույսի ձայներ» անդրանիկ ժողովածուն, մեկ տարի անց՝ «Թրթռումներ» փոքրածավալ գիրքը և «Թուղթի փառք» վիպակը: «90–ական թվականների կեսերին տեղի ունեցած հայկական անլուր կոտորածները Չոպանյանի

մեջ արթնացնում են հայրենասեր քաղաքացուն: Այնուհետև նա իր ամբողջ երփներանգ ու բազմալար գործունեությունը ստորադասում է մի նպատակի՝ իր ժողովրդի ազգային ազատագրության նպատակին» (Կարլեն Դալլաքյան): Սակայն այդ նպատակին հիմնովին ծառայելը հնարավոր չէր բռնապետական Թուրքիայում, և նա 1895–ին գաղտնի հեռանում է Պոլսից, այնուհետ մշտապես ապրում, ստեղծագործում և ազգանպաստ լայն գործունեություն է ծավալում Փարիզում՝ դառնալով հայ ժողովրդի ազատագրական պայքարի առաջամարտիկ քարոզիչ–պաշտպանը: 1898–1911 և 1927–1949 թվականներին նա հրատարակում է «Անահիտ» գրական–հասարակական հանդեսը, որը մեծ դեր է խաղում արևմտահայ ու սփյուռքահայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի, քաղաքական–հասարակական մտքի զարգացման գործում: 1924–ին ողջ սփյուռքահայությունը հանդիսավորությամբ նշում է նրա գործունեության 35–ամյակը, և այդ առիթով ֆրանսիական կառավարությունը Արշակ Չոպանյանին պարգևատրում է «Պատվո լեգեոնի» շքանշանով՝ հայ մշակույթը երկրում տարածելու համար:

1908–ին առաջին անգամ նա լինում է մայր հայրենիքում, Էջմիածնում բարեկամանում է Կոմիտասի, Թիֆլիսում՝ Թումանյանի, Բաշինջաղյանի և այլոց հետ: Իր «Օրոր մայր Հայաստանի» բանաստեղծությունում շքեղաշուք պատկերներով ներկայացնելով հայրենիքի փառավոր անցյալը, ապրած ցավերն ու տագնապները՝ Չոպանյանը, այնուամենայնիվ, հավատում է, որ «գիշերին մեջ կիյուսվի այգը բարի», և որ՝

…Ժանտ դահիճներն ու քանդողները մթին
Փոշիի պես պիտի անցնին ու ցնդին,
Ու մոխիրին մեջեն պիտի ելլես դուն՝
Տառապանքով նորոգված ու շողշողուն:

1932–ին կրկին այցելելով հայրենիք՝ բանաստեղծն արդեն «մոխիրին մեջեն ելլած», «տառապանքով նորոգված, շողշողուն», վերածնված Խորհրդային Հայաստանից Փարիզ է վերադառնում անջնջելի տպավորություններով՝ դրանք հուշագրության տեսքով շարունակաբար տպագրելով «Անահիտ» հանդեսում: Մեծանուն գրողն

ու ազգային նվիրյալ գործիչը 1954–ին վախճանվում է Փարիզում ավտովթարից:

Արշակ Չոպանյանի տարաժանր ստեղծագործական արարումները մի քանի տասնյակ հատորներ են կազմում, և դրանց թվարկումն իսկ երկար ժամանակ է պահանջում: Այդ հարուստ գրական–գրականագիտական–գրաքննադատական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում նրա մանկապատանեկան ստեղծագործությունները: Ինչպես ասվեց, հատկապես 90–ական թվականներին պոլսահայ մամուլում լույս տեսած բանաստեղծությունների ու պատմվածքների, հեքիաթների մի մասը հենց մանկական ու պատանեկան հասցեագրում ունի: «Որբուկը» բանաստեղծությունից զատ՝ նա գրել է նաև չափածո այլ ստեղծագործություններ, որոնք տպագրվել են «Ծաղիկ մանկանց», «Բուրաստան մանկանց» հանդեսներում: Իսկ ահա Արփիար Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսնող «Հայրենիք» պարբերականում նույն 90–ական թվականներին իրար հետևից լույս են տեսնում Չոպանյանի «Աստված պապան», «Բարի սամարացին», «Առաջին նամակը» և այլ մանկական պատմվածքներ, որոնք, ի մի բերելով «Տղու հոգիներ» ընդհանուր խորագրով ժողովածուում, 1923–ին հրատարակում է Փարիզում: Իր խոսքերով՝ գրքում ընդգրկված ստեղծագործությունները «համախմբում են հոգեցունց մանկական պատկերներ» արևմտահայ իրականության մեջ ապրող «հեք մանկիկների» կյանքից ու առօրյայից՝ քաղված «ճշմարիտ դիպվածներով»: Հատկապես այս իմաստով Արշակ Չոպանյանի ստեղծագործությունները արևմտահայ մանկապատանեկան գրականության եզակի էջերից են, նաև ժամանակագրական–ճանաչողական մեծ արժեք ունեն հայոց մանուկ ու պատանի սերունդների համար: Այդ չափածո և արձակ գործերը վկայում են Չոպանյան մանկագրի աստվածատուր շնորհը՝ «տղու հոգիների» խորիմացությունը և դեռևս երիտասարդ տարիքում ճշմարիտ զգացողությամբ, պատկերավոր հյուսվածքով արտացոլելը: Վկա՝ «Ես ի՞նչ անեմ հոգիով», «Աստված պապան», «Շիշը», «Հեռավոր քույրիկը» և այլ ստեղծագործություններ: Ընթերցողին խորապես հուզում է փոքրիկ տղայի բարությունն ու ցավազգացողությունը կույր մուրացկանի հանդեպ, ում ջութակի նվագն ունկնդրելով՝ «տասնոց մը կ’դնե ծերուկին ափը ու գոհ կիեռանա» («Փոքրիկ

սամարացին»): Ահա և մի ուրիշ մուրացկան՝ մի փոքրիկ աղջնակ, որ շոգենավի վրա ծնողների պարտադրանքով մարդկանցից ողորմություն է հայցում՝ «տառապանքի արտահայտություն մը տալով իր դեմքին, աչքերը կպզտիկցնե լալու ձև մը առնելով, քանի մը բառ կմրթմրթա, մուրացկանի հատուկ բանաձև մը, զոր կճվա ողորմուկ ձայնով մը, վիզը ծռելով, ամբողջ անձին մեջ պաղատանք դնելով, գոց սորված խոսքեր կարտասանե՝ «երեք օր է բան չեմ կերած… կմրսիմ կոր… հացի փարա մը տուր… Աստծու սիրուն…»»: Այս դեպքում գրողի զայրույթն ուղղված է մուրացկան աղջնակի «հրեշային ծնողների» դեմ, «որ փոխանակ իրենք հազար նեղություն ենթարկվիլ հանձն առնելով, նույնիսկ մուրալու ամոթը իրենք ընդունելով իրենց զավակը պահելու՝ այդ փոքրիկ սիրուն անմեղ էակը դարձուցեր են կեղծիքի գործիք, ստակ որսացող մարդամեքենա…»: Գրողը դատապարտում է «մանկության այդ շահագործողներին» և այն հասարակությանը, ում անտարբեր աչքի առաջ աղքատության պարտադրանքով խեղվում են «մանուկներիս անմեղ հոգիները» («Սրբապղծում մը»):

«Աստված պապան» պատմվածքի հերոսը՝ փոքրիկ տղան, չկարողանալով զսպել քաղցը հագեցնելու ցանկությունը՝ հիվանդ մոր համար եկեղեցում մոմեր վառելու համար նախատեսված փողով կարկանդակ է գնում՝ մտածելով, որ Աստված պապան բարի է, աղոթքով ներում կխնդրի և կաղաչի բուժել մայրիկին, և երբ մեծանա ու դրամ վաստակի, այս մեկ մոմի տեղ շատ մոմեր պիտի վառի: Կարկանդակն ուտելուց հետո գնում է եկեղեցի, աղոթում, բայց երբ վերադառնում է տուն՝ մորը մեռած է գտնում: Ամբողջ գիշեր նա անցկացնում է լացով ու տառապալից մտածումով, որ Աստված պապան մոմը չվառելու համար պատժել է իրեն, և ինքն է մոր մահվան պատճառը: Իսկ հետո հանկարծ սթափվելով՝ «ակռաներու մեջեն մռմռում է. «Չէ՛, չար մարդ է եղեր Աստված պապան»»:

Դառը իրականության և «մանուկ հոգիների» փշրված անուրջների, բևեռացված հայ հասարակության մեջ տիրող անբարո բարքերի, այդ ամենն իրենց «անմեղ ու պարզ հոգիով» ընկալելուն և ըմբռնելուն դեռևս անընդունակ փոքրիկ հերոսների հակադրապատկերներով, տիպական գույներով գրողը բացում–բացահայ-

տում է ժամանակի դիմագիծը՝ մատաղ սերնդի հետագա ճակատագրի խորը մտահոգությամբ:

Արշակ Չոպանյանն իր ստեղծագործական կյանքի սփյուռքյան շրջանում բուն մանկական նոր ստեղծագործություններ չգրեց, ինչի համար կարելի է միայն ափսոսալ: Բայց նույնիսկ այն, ինչ Հակոբ Պարոնյանից, Մատթեոս Մամուրյանից, Սիպիլից և մյուս երախտավորներից հետո այդ ոլորտում նա ստեղծեց, արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմության մնայուն և անկրկնելի մի հատվածն է:

Անցած դարասկզբին արևմտահայ գրականության մեջ արդեն իսկ մնայուն արժեքներ ստեղծած և ապա հետագա տասնամյակներում սփյուռքահայ գրականության զարգացման գործում մեծ ավանդ ներդրած ականավոր գրող **Հակոբ Օշականի** (Քյուֆեկճյան, 1883–1948) առանձին ստեղծագործություններ նույնպես ներառվել են մեր գրականության նույն երկու շարունակական ճյուղերի մանկապատանեկան հատվածում՝ տեղ գտնելով նաև ինչպես սփյուռքի, այնպես էլ հայրենի դպրոցական դասագրքերում: Եվ դա բնական է, քանզի Օշականը այն եզակի գրողներից է, ով շուրջ կես դար՝ 1902–ից մինչև 1948–ը, որոշ ընդհատումներով, որպես գրականության նվիրյալ ուսուցիչ աշխատել է տարբեր հայկական կրթարաններում՝ իր սաների հոգում ներարկելով անսահման սիրո զգացումներ հայրենի հողի, մայր ժողովրդի ստեղծած անանց արժեքների հանդեպ: Եվ հայրենախոս այդ զարկերակը տարբեր դրսևորումներով բաբախում է նրա ստեղծագործության սրտում: «Օշական կուզեր, որ մեր բոլորիս հոգիներու դուռները միշտ բաց մնան հայության անցյալեն ու ներկայեն եկող զարկերուն առջև: Գրականությունը մանավանդ, այդ իրագործումներու շարքին Օշականի համար ամենեն սուրբն էր, ամենեն թանկարժեքը… Գրականությունը իր կյանքն էր, իր կրոնը, իր հանապազորյա հացը, սրբազան աշխարհը»,— այսպես է իր մեծ ուսուցչի մասին գրել Մուշեղ Իշխանը, ով Կիպրոսի Մելքոնյան կրթարանում ուսանելիս աշակերտել նրան:

Օշականը ծնվել է 1883–ի դեկտեմբերին Պոլսի մերձակա Բուրսա քաղաքում: Գերազանցությամբ ավարտելով ծննդավայրի վարժարանը և կիսատ թողնելով ուսումը Արմաշի դպրեվանքում՝ 1902–ից

աշխատում է որպես ուսուցիչ՝ միաժամանակ զբաղվելով գրական գործունեությամբ, տարբեր պարբերականներում հրապարակում է պատմվածքներ, գրաքննադատական հոդվածներ: 1915–ին հաջորդած մղձավանջային տարիներին նա մի քանի անգամ ձերբակալվում է, բայց, ի վերջո, հաջողվում է փախչել Պոլսից, երկու տարի ընտանիքով ապրում է Բուլղարիայի Ֆիլիպե քաղաքում, 1924–ին փոխադրվում է Կահիրե, այնուհետև՝ Կիպրոս, իսկ 1934–ից վերջնականապես հաստատվում է Երուսաղեմում, ուր Ժառանգավորաց վարժարանում շարունակում է գրականություն դասավանդել մինչև իր մահը: 1948–ի փետրվարի 17–ին Օշականը սրտի երկրորդ կաթվածից հանկարծամահ է լինում: Ահա հայ ամենաբեղմնավոր գրողներից մեկի դժվար կյանքի համառոտ պատմությունը, գրող, ում գրական հարուստ ժառանգության մեջ (պատմվածքներ, վեպեր, վիպակներ, պիեսներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, գրաքննադատական բազմաթիվ ուսումնասիրություններ, «Համապատկեր արևմտահայ գրականության» տասհատորյակ և այլն) զգալի շերտ է կազմում «մանկապատանեկան արձակը», հատկապես այն պատումներն ու հեքիաթները, որոնք տեղ են գտել «Խորհուրդնեբու մեհյանը» ժողովածուում (1922, Կ. Պոլիս), ապա այլ ստեղծագործությունների հետ հայրենի ընթերցողին են ներկայացվել երկերի ընտրանիով (1979, Երևան):

«Կաղանդի հեքիաթ», «Ծաղիկը», «Ժպիտը» և էլի մի քանի անզուգական գործեր՝ դժվար մանկության տխուր վերհուշերի, արևմտահայ գյուղաշխարհի խեղճ ու թշվառ մարդկանց հոգեկան ցավագին փլուզումների, նրանց կյանքի ողբերգական դիպվածների ու այս ամենին իբրև հակադրություն՝ հայրենի բնության գեղեցկությունների տպավորիչ պատկերներով: «Օշականի հեքիաթները, ժողովրդական ավանդությունների, առասպելների թեմաներով պատումներն ընդգծվում են իրենց քնարականությամբ, կենդանի պատկերներով, գեղեցիկ լեզվով»,— գրողի ստեղծագործական վարպետության այս հատկանիշներն է շեշտում Վազգեն Գաբրիելյանը:

Ահա «Կաղանդի հեքիաթը», որ ընթերցողին տեղափոխում է գրողի մանկության «գետնե հյուղակը»՝ «դռան մոտիկ կաղանդի սեղանը՝ իր յօթը լեցուն ամաններով: Ու օջախին շուրջը թաղին բո-

լոր ինձպեսները, ու մեր մեջտեղը՝ հորքուրս՝ բարի ու անուշ պառավ աղջիկ, ճերմակ մազերով, թարթիչե ու լույսե զուրկ աչքերով»: Ինչպիսի՜ խանդաղատանքով է գրողը ներկայացնում հորաքրոջը, որ ամեն Կաղանդի երեկո փոքրիկներին պատմում էր իրական–երևակայական նույն հեքիաթը ոսկի մազերով աղջկա և հրեղեն ձիով հայտնված տղայի մասին: Պատումի հետաքրքիր, պարզ ու գրավիչ հյուսվածքը, սյուժեի հեղինակային մեջընդմիջումները մինչև վերջ համակ ուշադրությամբ են պարուրում ընթերցողներին: Իսկ երբ ավարտվում է հեքիաթը, «կարգով կմոտենայինք հորքուրիս չորուկ ձեռքին ու կպագնեինք զայն հաճույքով: Ու ամենէն վերջը երկյուղած հարգանքի մը մեջ կտեսնայինք հայրս, որ հին գդակը հանած՝ գլխեն ծունկի կուգար պառավին առջև՝ պագնելու անոր երկու ձեռքերը.

— Մեծնա՛ս, Աստուած զավակներուդ թագ ու պսակին հասցնե:

Ու հորքուրիս ձայնը այս անգամ դողացող, հուզված բան մը կըկաթեր իր մեջեն»:

«Պզտիկ օրերու» մի անմոռաց հուշ է «Ծաղիկը» պատկերախոս պատումը՝ հյուսված «անշունչ» բնության գեղեցկությունների անձնավորման օշականյան ինքնատիպ զգացողությամբ: Այդպես նաև «Ժպիտը», այդպես նաև այլ բնապատումներ: Հայտնվելով մեծանուն գրողի ստեղծագործական աշխարհում՝ այլևս դժվար է այնտեղից դուրս գալ. հետագիծը մնայուն է: Եվ, ինչպես բոլոր մեծերի պարագայում, Հակոբ Օշականի ստեղծագործական աշխարհից ճառագող լույսը նույնպես ժամանակների մեջ ավելի է թեժանում՝ լուսավորելով սերունդների ճանապարհը:

«Կենսունակ և առողջ սերունդ մը կը դեգերի, Մա՛յր, տարագրության ճամփաներուն վրա: Բա՛ց գիրկդ, Մա՛յր, քո սիրազեղ գիրկընդխառնումիդ և անուշ համբույրի կարոտով ալ բավ մխեցին ու այրեցուն մեր հոգիներ…». արևմտահայ գրականության մեկ ուրիշ երևելի ներկայացուցչի՝ Ռուբեն Որբերյանի խոսքերն են առ հայրենիք՝ Մայր Հայաստան՝ ասված խորհրդային կարգերի հաստատումից տարիներ անց: **Ռուբեն Որբերյանը** (1874–1931) նույնպես վերապրել է համիդյան բռնապետության հայասպանդի սարսափները և տաղանդի հզոր ուժով՝ ցավի ու տագնապալի ահագնացող զգացումներով, այդ ամենն արտահայտել դարասկզբին և այնուհետ գրած

շատ բանաստեղծություններում: 1904–ին հեռացել էր Թուրքիայից Ամերիկա, ապա հաստատվել Ֆրանսիայում, այնտեղ ապրել և ստեղծագործել մինչև իր մահը: Օտար ափերում դեգերող հայրենակարոտ բանաստեղծը կյանքի վերջին տարիներին տարագիր հայությանը կոչ էր անում «սրտերը վեր և հառաջ դեպի հայրենիք»՝ այն համարելով փրկության միակ հանգրվանը: Ինքը ծնվել է Մալաթիայում, նախնական կրթությունն ստացել ծննդավայրում, 1892–ին ավարտել է Խարբերդի «Եփրատ» վարժարանը, ապա շուրջ մեկ տասնամյակ Պոլսում ու Զմյուռնիայում զբաղվել ուսուցչությամբ: 1893–ին լույս է տեսել նրա «Հիշատակաց ծաղիկներ» չափածո և արձակ բանաստեղծությունների գիրքը, և այնուհետ՝ տարբեր տարիներին՝ ևս մի քանի ժողովածու, որոնցում տեղ գտած գործերում զգայացունց–հուզական տարերքով ու ինքնատիպ խոհերգությամբ արտահայտում է իր սերն ու ցավը հայրենի տան, բնաշխարհի, «գայլի ճիրաններում» հեծող ազգակիցների հանդեպ ու բռնության շղթաներից նրանց ազատության կոչնակն է հնչեցնում.

Տարահալա՛ծ հայություն,
Դարձի՛ր, ալ բավ ինձմե հեռու մաշեցար,
Դարձի՛ր անցյալ սուրբ միության օրերուն,
Բե՛ր ինձ դրոշը ազատության սիրավառ…

Որբերյանի բանաստեղծությունների զգալի մասը նույնպես արևմտահայ մանկապատանեկան գրականության տարեգրամատյանում գրանցելու անհրաժեշտություն է թելադրում: Հայրենասիրության հրաշալի դասեր կարող են պատանի սերունդներին ավանդել «Աղվոր ափեր», «Վարդենին», «Հայրենիքի խնձորներ», «Կարոտագին այց», «Գընա՛» և այլ բանաստեղծություններ, որոնցում գրողի ցավին ու տրտմությանը զուգադրվում է լուսավոր հավատը, որ կգա մի երջանիկ ժամանակ, երբ ինքը նորից հայրենի եզերքին է փարվելու, կրկին ծաղկելու է թշնամու կողմից ավերակված հարազատ տան բուրաստանում «իր մատներով տնկած» վարդենին: «Գընա՛» բանաստեղծությունում՝ ձոնված Հարություն որդուն, բանաստեղծը «իր զավակին» հորդորում է, որ գոնե նա վերադառնա հայրենի տուն, գտնի «անբիծ ձյունն ու մշուշը հայրենյաց», «վերա-

շինե տընակս ավեր ու լքված», «Ու ջիղերով պողպատի պես ամրացած // Ողջունե նոր մի գարուն»: Արամ Անտոնյանի կազմած «Գանձարան» դասագրքում (Կ. Պոլիս, 1926) տեղ է գտել նաև Որբերյանի «Յարատեւէ» բանաստեղծությունը, որտեղ նա որբ «հեք պատանուն» խորհուրդ է տալիս չհուսահատվել կյանքի դաժան հարվածներից, մոռանալ «ցավերը սրտակեզ», թողնել «սին, անիմաստ վիշտերը» և «նոր եռանդով փարել կեանքին», դառնալ «բախտին յաղթող դիւցազն»:

* * *

Հայ մանկագրության արևմտահայ հատվածին ավելի մոտիկից ծանոթանալու համար այժմ «անցնենք» մանկապատանեկան պարբերականների էջերով:

Արևմտահայ մանկապատանեկան մամուլը նույնպես ծնվեց 19–րդ դարի 60–70–ական թվականներից հետզհետե ծավալվող ազգային–լուսավորչական շարժման արդյունքում: Չնայած սոցիալ–քաղաքական ծանր պայմաններին՝ արգելապատնեշների հաղթահարումով արևմտահայ իրականության մեջ հիմնվում են մշակութային–կրթական նոր օջախներ: Լուսավորության և գիտության առողջ սերմերը ժողովրդական զանգվածների, նոր սերնդի մեջ տարածելու նվիրական գործին են զինվորագրվում ռուս և արևմտաեվրոպական երկրների բարձրագույն կրթարաններում մասնագիտական բազմակողմանի գիտելիքներով զինված անվանի մանկավարժները: Ազգը լուսավորությամբ պիտի լուսավորենք. քարոզում էին նրանք: Ազգը պիտի լուսավորենք դպրոցները ծաղկեցնելով, նորանոր վարժարաններ հաստատելով, այլևայլ ազգօգուտ հաստատություններ ընելով… Սկսում են լույս տեսնել մի շարք տարաբնույթ պարբերականներ (մանկավարժական՝ «Լույս» (1874), իրավաբանական՝ «Իրավունք» (1868), գիտական՝ «Ժողովրդային գիտություն» (1880), «Մետեորա» (1880) և այլն):

50–ականներին հայոց վարժարաններում հրատարակված աշակերտական–պատանեկան պարբերականներին («Բուրաստան Սբ Սահակեան» (1851–1853), Կ. Պոլիս, «Թութակ Հայկազեան» (1854–1855), «Երկասեր» (1855), «Բողբոջ» (1860), Զմյուռնիա) հետագա տասնամյակներում հաջորդում է ավելի լայն ընթերցող շր-

ջանակներ ընդգրկող և թեմատիկ–գաղափարական լուրջ շեշտադրումներով պարբերականների ծնունդը: Առաջին քայլերն անում է 1870–1871–ին Կ. Պոլսի Նուպար–Շահնազարյան դպրոցում լույս տեսած «Երկրագունդ» ամսագիրը, որ իր էջերում շարունակաբար տպագրում է Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը և մի քանի բանաստեղծություններ, հայ ժողովրդի պատմությանը, ազգային–ազատագրական պայքարին վերաբերող բազմազան նյութեր, թարգմանաբար՝ Վիկտոր Հյուգոյի ստեղծագործություններից, Կռիլովի առակներից և այլն: Այս ամսագիրը վերահրատարակվում է 1883–ին՝ հայ ականավոր գրող, երգիծաբան Հակոբ Պարոնյանի (1843–1891) ջանքերով… Իսկ մինչ այդ, ի հակադիր կրոնական–քրիստոնեական բարոյախոսությունը որդեգրած՝ միսիոներների կողմից հրատարակվող «Ավետաբեր տղայոց համար» (1872–1915) ամսագրի, Պարոնյանը ձեռնարկել էր «Թատրոն բարեկամ մանկանց» մանկական երկշաբաթաթերթի հրատարակման գործը: Պարոնյանը հիմնադրել և խմբագրում էր նաև «Թատրոն» (1874) և թուրքերեն «Թիյաթրո» պարբերականները:

«Թատրոն բարեկամ մանկանց»–ը լույս տեսավ երկուսուկես տարի՝ 1876–ի հունվարից մինչև 1878–ի հունիսը: Մինչ արևմտահայ իրապես առաջին մանկական այս երկշաբաթաթերթի հրատարակությունը վարժարանների սաների կողմից հրատարակվող նախորդ ամսագրերը չի կարելի լիարժեքորեն մանկական համարել՝ գործածության իրենց նեղ շրջանակների և նյութերի գեղարվեստական ոչ բարձր մակարդակի պատճառով: Պարոնյանն արդեն հանրահայտ գրող էր՝ իր երգիծական–հրապարակախոսական հոյակերտ երկերով («Հոսհոսի ձեռատետրը», «Կսմիթներ», «Ազգային ջոջեր») և դրամատիկական ստեղծագործություններով («Երկու տիրոջ ծառա մը», «Ատամնաբույժն արևելյան»): Հետագա տարիներին նա արևմտահայ գրականության բարձունքում իր մնայուն տեղը հավերժացրեց հայ գեղարվեստական արձակի գլուխգործոցներով՝ «Մեծապատիվ մուրացկանները» վեպով, «Պաղտասար աղբար» կատակերգությունով, «Քաղաքավարության վնասները», «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» սատիրական ստեղծագործություններով, որոնցում աննկուն, խիզախ երգիծաբանը համարձակ խոսքով, գեղարվեստական մեծ վարպետությամբ տարաժանր

ստեղծագործությունների սուր սլաքով անխնա մտրակում է արևմտահայ իրականության մեջ տիրող անբարո, քաղքենիական բարքերը, ներազգային կյանքի խոցելի կողմերը, դիմակազերծում ամեն կարգի «ազգային ջոջերին», մտավորական համարվող «մեծապատիվ մուրացկաններին»՝ արևմտահայության տարբեր խավերի հոգեբանության և գործելակերպի մեջ բույն դրած ամեն մի բացասական երևույթ:

Ինքն էլ իր գործի անմահության և ստեղծագործության վեհ առաքելության գիտակցությամբ կանխատեսել էր. «Դու չկրցար ինձ հաղթել և մեռցնել զիս, ո՛վ մահ: Ահա իմ անունս անմահ մնացած է երկրի վրա: Ահա իմ մասին կխոսեն, դեռ կպատմեն…»:

Հակոբ Պարոնյանը ծնվել է 1843–ին Ադրիանապոլսում, նախնական կրթությունն ստացել է Արշակունյաց վարժարանում, ապա ընդունվել է տեղի հունական դպրոց: Առանց դասընթացն ավարտելու նա սկսում է աշխատել տարբեր հիմնարկներում: 1863–ին տեղափոխվել է Կ. Պոլիս, աշխատել հեռագրատանը՝ սկսելով զբաղվել նաև գրական–լրագրական գործունեությամբ: 1871–72–ին դասավանդում է Մեզպուրյան վարժարանում, ապա՝ Սկյուտարի ճեմարանում: Աշխատակցում է «Եփրատ», ապա՝ «Մեղու» պարբերականներին, իսկ 1872–ից սկսում է խմբագրել «Մեղուն», որի դադարից հետո հաջորդաբար՝ 1874–ից սկսած՝ խմբագրում է «Թատրոն», «Թատրոն բարեկամ մանկանց», «Խիկար» հանդեսները՝ զուգահեռ աշխատակցելով նաև «Լույս», «Փորձ», «Արձագանք» և ժամանակի հայտնի այլ պարբերականներին: Շուրջ երեք տասնամյակ Հակոբ Պարոնյանը ամենանշանավոր դեմքն էր արևմտահայ գրական–հասարակական կյանքում: Մահացել է 1891–ին՝ ապրելով ընդամենը 48 տարի:

«Թատրոն բարեկամ մանկանց»–ը հրատարակելով՝ մեծ հայրենասերը ձգտում էր ըստ ամենայնի նպաստելու հայոց մանուկ սերնդի ազնվաբարո, ճիշտ կրթության ու ճշմարիտ դաստիարակության գործին, արևմտահայ կյանքի ճահճից նրանց դուրս բերելու, լուսավորելու նվիրական նպատակի իրագործմանը: Դեռևս իր խմբագրած նախորդ պարբերականի՝ «Թատրոնի» ծանուցագրում Պարոնյանն ընդգծել էր, որ «ազգային մանկտոյն դաստիարակութեան և հմտութեան նպաստելու մտոք՝ որոշած եմք առաջիկայ տարեգլ-

խէն սկսեալ թերթ մը հրատարակել…, որ գեղեցիկ պատկերով զարդարեալ ըլլալէն ի զատ, պիտի պարունակէ կրթական, բարոյական, պատմական, վիպական և այլ տղայոց միտքը սրելու հատուկ յօդուածներ… Պիտի ջանանք զիրենք ընթերցանութեան և ուսման ընտելացնել…»: Իր սկսած գործը համարելով «ազգին մէջ եզական նորութիւն» և հայտարարելով, որ նոր պարբերականը հիմնականում «դեռահաս տղայոց դաստիարակութեան համար է», Պարոնյանը նրա առաջին իսկ համարում նշում է, որ այն երեխաների համար լինելու է «գրական ծաղկոց մը», և որ «աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասերը, որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ»:

«Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականի առաջին համարի «Իմ պզտիկ կարդացողներս» նախախոսքում նա ընդգծում է նաև մի ուրիշ գլխավոր խնդիր՝ մայրենի լեզվի իմացության կարևորությունը. «Ձէր մեջ կան շատերը, որ գիտուն տղու մը չվայելելիք բառեր կը գործածեն՝ անոնց հայերէնը չգիտնալով… «Թատրոնին» մեջ ես ամեն մեկին առջև հայերէնը պիտի դնեմ, որ դուք աշխատելով սովրիք և պէտք եղած ատենը սխալ բառ չգործածէք…»: Օտար բառերի գործածումը «հայ տղու մը համար մեծ ամօթ» համարելով՝ Պարոնյանը, հասկանալի է, պէտք է անցներ գործնական քայլերի՝ ամսագրի էջերում հրապարակելով ոչ միայն մայրենի լեզվի, այլև հայ ժողովրդի պատմության իմացությանը նպատակաուղղված՝ գրական–գեղարվեստական, ճանաչողական–ուսուցողական բազմազան նյութեր՝ ընդգծելով ընդհանրապես գիտելիքների, ուսման դերը, որովհետև «մարդ չի կրնար առանց անոր կատարեալ մարդ ըլլալ»: Իհարկե, պարբերականի նպատակը հայ մանկանը հայեցի ոգով կրթելու և նրան բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելն էր: Ահա թե ինչու յուրաքանչյուր համարում շեշտադրվում էր, որ նրա «պարունակութիւնն է թե մանչ է և թե աղջիկ տղայոց և պատանեկաց կրթութեան համար յօրինուած կարճառօտ պատմութիւններ, վարժութեան համար նամակներ, ճառեր, ուսումնական գիտելիքներ, պատմական տեղեկութիւններ, բարոյական խրատներ, հատընտիր առակներ և այլն, և, վերջապես, տղայոց ընթերցանութիւնը գրգռող զգալի հատուածներ, և այս ամենը մանկանց հաճելի ընելու համար՝ զվարճալի ոճով

աւանդուած»: Կարճ ասած՝ թերթը հայ երեխաներին մատուցում էր այնպիսի նյութեր, որոնք անհրաժեշտ էին նրան «կրթեալ և գովելի տղայ ըլլալու համար»: Սակայն առաջնայինը մանկանը ազգային–հայրենասիրական գաղափարների ոգով կրթել–դաստիարակելու խնդիրն էր. «Որ ազգէն ալ որ ըլլաս, ինչ վիճակի մէջ ալ որ գտնուիս, դու պահապան զինուոր մըն ես հայրենիքիդ,— ընթերցողի հետ իր դաս–զրույցն է շարունակում Պարոնյանը,— նա էլ իրավունք ունի քո գիտութեանդ, առաքինութեանդ, զգացմանդ, բոլոր գործերուդ արդիւնքը վայելելու: Զինուոր ես, հայրենիքի՛դ ծառայել մտածէ, արհեստաւո՞ր՝ ճարտարութիւնդ բանեցո՛ւր հայրենիքիդ զարգացման համար, գիտո՞ւն՝ հայրենիքիդ օգո՛ւտը խորհէ և ուրիշին սովրեցուր»: Եվ հայրենասիրության այս դասը Պարոնյանը հիմնականում ավանդում էր թերթում զետեղված պատմական բնույթի նյութերով, փոքրիկ զրույցներով, պատմվածքներով, բանաստեղծություններով («Մեծ Ներսէս Կաթողիկոս և Պապ Թագաւոր», «Արամ Հայկազեան», «Առ հայրենիս», «Կեռասը», «Մասիս լեռը», «Ազգիս պաշտպան Վարդան Մամիկոնեան» և այլն): «Առ հայրենիս» բանաստեղծության մեջ հայ պանդուխտի կարոտի հորդացող զգացումները միահյուսված են մայր ժողովրդին արմատներից կտրող, թշնամիների հանդեպ ատելության և վրիժառության զգացումներին: «Կեռասը» պատմվածքի փոքրիկ հերոսներն իրենց համար ապրելու և պայքարելու օրինակ են համարում հայրենիքի ազատության համար մարտնչող հերոսներին: Հայրենասիրության այս դասերը առանձին պատումներում ավարտվում են բռնության շղթաները փշրելու և պայքարով ազատություն ձեռք բերելու կոչնակներով: Դրանք համահունչ էին նրա հրապարակախոսության «մեծական» խիզախ բռնկումներին: Այսպես՝ պատումներից մեկում Վարդան Մամիկոնյանի զորավարությամբ Ավարայրում մղված մարտը ներկայացնելով՝ Պարոնյանը հայ մանուկներին դիմում է ահա այսպիսի կոչնակով. «Հերիք չէ՞, հայե՛ր, հերիք չէ՞ մեր գերութիւնը, որուն մէջ կը հեծենք շղթայակապ… Ջախջախենք այս տգիտութեան շղթաները, ազատ թևերով թռինք դէպի գիտութեան, իմաստութեան և լուսավորութեան տաճարը»:

Թեև շաբաթաթերթում գերակշռողը մանուկների մեջ ընթերցանության սեր պատվաստող գեղարվեստական նյութերն էին՝

պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ, բայց քիչ չէին նաև գիտահանրամատչելի տարաբնույթ ուսանելի զրույցները, ակնարկները, որոնք զանազան հետաքրքրաշարժ, գիտելիքները հարստացնող տեղեկություններ էին հաղորդում հայոց և այլոց պատմությունից, աշխարհագրությունից («Սեբաստիա», «Զմիւռնիա», «Վենետիկ»), բնությունից, կենդանական աշխարհից («Կապիկ», «Գայլ», «Առիւծ», «Ռնգեղջիւր» և այլն), այլ ոլորտներից: Ուսանելի բազմազան նյութեր էին հրապարակվում նաև շաբաթաթերթի «Մտավոր վարժություն», «Բարոյական դասեր», «Ձեռնածության խաղեր» և ուրիշ բաժիններում: Այս ամենի նպատակը հայ երեխաներին բազմակողմանի կրթելը, նրանց հայրենասիրության, մարդասիրության և այլ զգացումներով տոգորելն էր, արդարության, ճշմարտության, ժողովրդի ազատության ու բարօրության համար պայքարող մարդ–քաղաքացի դաստիարակելը:

Շաբաթաթերթում տպագրվող ինչպես ճանաչողական–ուսուցողական, այնպես էլ գեղարվեստական նյութերի զգալի մասի հեղինակն ինքը՝ Հակոբ Պարոնյանն էր, թեև մեծ էր նաև այլ հեղինակների մասնակցությունը այդ աշխատանքներին (Մ. Մամուրյանը՝ «Մանր վէպեր» խորագրով պատմվածքներով, Գ. Այվազյանը, Ա. Գալֆայանը՝ իրենց ինքնուրույն և Եզոպոսից, Լաֆոնտենից, Կռիլովից կատարած թարգմանական առակներով, Ռեթեոս Պերպերյանն իր բանաստեղծություններով և ուրիշներ): Ցավոք, նրա մանկական այդ ստեղծագործությունները առ այսօր մնացել են շաբաթաթերթի էջերում, թեև դրանցից լավագույններն առանձին գրքով հրատարակելը հույժ կարևոր է ականավոր գրողի «մանկական դիմանկարը» նույնպես ճանաչելու–իմաստավորելու տեսանկյունից: Այդ ստեղծագործությունները, որոնք հիմնականում կրթադաստիարակչական նպատակներով են հյուսված և բխում են շաբաթաթերթի գործունեության ծրագրի էությունից, միաժամանակ ինչ–ինչ երակներով ակունքվում են մեծ գրողի ողջ ստեղծագործության ոգուց ու տարերքից՝ հաճախ ընդգծված երգիծական–հումորային շեշտադրումներով և դրանով իսկ մեզ ճանաչելի դարձնելով հեղինակի «ձեռագիրը», քանզի մեծ մասը անստորագիր են հրատարակված:

Պարոնյանի մանկական պատմվածքներն ու զրույցները սեղմ են, զերծ ավելորդ նկարագրություններից, աչքի են ընկնում հետաքրքրաշարժ, պարզ ոճական հյուսվածքով, զվարճալի երանգներով, լեզուն սահուն է, մատչելի՝ մայրենիի ոգուն հարազատ տարերքով: Եվ բովանդակությունն էլ հիմնականում ուսուցողական–ճանաչողական–դաստիարակչական շեշտադրումներ ունի՝ բարոյախրատական նրբանկատ, զգուշավոր եզրակացությունների ուղեկցությամբ և կամ ասելիքի իմաստ–խրատը թողնելով ընթերցողի հայեցողությանը: Ահա մի քանի «դաս», որ ավանդում է Պարոնյանը շաբաթաթերթի էջերից. փոքր հասակից ծանոթանալ մայր ժողովրդի հերոսական անցյալին, նրա նվիրյալ զավակների քաջություններին, նրանց օրինակով «բարիք անել» ազգին («Անանիկ և Սաթենիկ»), անգամ կյանքի ամենածանր հանգամանքներում ճիշտ կողմնորոշվել, չշփոթվել և փրկության ելք գտնել («Անվախութեան ոյժը». նրանում նկարագրված է 1870–ին Կ. Պոլսի Բերա թաղամասում բռնկված հրդեհը մարելիս երեխաների ցուցաբերած արիությունը), մեծախոսությամբ, դատարկամտությամբ չհայտնվել ծիծաղելի վիճակում («Մեծախօսիկը», «Հնդկահավի թաթը»), լինել հնարագետ և զգոն («Նկարչի ծառան»), ճշմարտախոս և ազնիվ, որ «իր պակասութիւնը ճանչնա և իր հանցանքը ուրիշի վրայ չձգէ» («Տիրուհի և կոտրած հայելի»). այսպես էլի քանի՜–քանի դաս, երեխայի բնավորության ու վարքի այս կամ այն պակասավոր կողմերը մեղմ հումորով երևակելու–շտկելու, իսկ լավ, բարի, գեղեցիկ արարքները՝ դրվատելու–խրախուսելու ուսուցողական–դաստիարակչական շեշտադրումներով: Երկխոսություն հիշեցնող որոշ կարճ առակախոս զրույցներում էլ ասելիքը երգիծական սուր շեշտերով է մատուցվում:

Ընդհանրապես, «Թատրոն բարեկամ մանկանց» շաբաթաթերթում Հակոբ Պարոնյանի՝ տպագրված և առ այսօր նրա էջերում «փակված» մանկական ստեղծագործություններն ավելի համակողմանի ուսումնասիրության կարիք ունեն և, մեր կարծիքով, դրանցից լավագույնները մեկ գրքում ընդգրկելը, հրատարակելն ու մերօրյա սերունդների «հիշողության դաշտ» վերադարձնելը անհրաժեշտություն է: Միաժամանակ այն արևմտահայ մանկագրության զարգացման 70–ականների ընթացքին մեծ գրողի ակտիվ մասնակցու-

թյան վկայագիր կդառնա, խնդիր, որ մինչև այժմ, ըստ էության, չի լուսաբանվել, եթե նկատի չունենանք Խաժակ Գյուլնազարյանի «Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության», Սոֆյա Լալախանյանի «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր», Սիլվա Նազարյանի «Հայ մանկական մամուլը. 1851–1917» աշխատություններում եղած հպանցիկ անդրադարձները: Այս նույն ուսումնասիրություններում էլ համառոտակի լուսաբանվում է արևմտահայ հաջորդ պարբերականների՝ մանկական «Բուրաստան մանկանց» (1882–1888), «Ծաղիկ մանկանց» (1889–1893) հանդեսների դերը հայ մանուկների կրթության ու դաստիարակության և այդ շրջանակներում նաև հայ մանկական գրականության զարգացման գործում:

«Բուրաստան մանկանց» կիսամսյա պատկերազարդ հանդեսն սկսել է հրատարակվել 1882–ի հունվարից Կ. Պոլսում՝ նկարիչ–փորագրիչներ Նշան Պերպերյանի (նա նաև գեղարվեստական երկերի հեղինակ է, թարգմանիչ և հրատարակիչ) և Ստեփան Տեռվլեթյանի խմբագրությամբ: ««Բուրաստան մանկանցը»,— հանդեսի նպատակների մասին ասված էր խմբագրականում,— կաշխատի միշտ այնպէս ուղղություն մը դառնալ և նյութոց ընտրություն մը ընել, որ թե՛ գիտական և թե՛ գրական նախնական մը ճաշակ տայ իր ընթերցող նորաբողբոջ պատանեաց»: Սակայն երբ ծանոթանում ենք հանդեսի համարներին, նկատելի է, որ մեծ մասամբ նյութերը գիտական, ուսուցողական–ճանաչողական բնույթ ունեն և մանուկ ու պատանի ընթերցողներին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում բնագիտությունից, աշխարհագրությունից, պատմությունից, աստղագիտությունից և այլ ոլորտներից: Իսկ ահա «գրական նախնական մը ճաշակ» տալուն միտված գեղարվեստական ստեղծագործությունների (բանաստեղծություններ, զրույցներ, հեքիաթներ, պատմվածքներ, մանկական պիեսներ) մեծ մասը ընդգծված բարոյախրատաբանական շեշտադրումներ ունեն՝ միակողմանի և ուղղագիծ՝ միայն բացասական կամ միայն դրական վարքագիծ ունեցող հերոսներով («Անձնուէր քաջ նաւաստի մը», «Բարեսիրտ Գոհարիկը», «Անձնազոհութեան օրինակ մը» և կամ՝ «Չարասիրտ տղայ մը», «Պօղոսի առաջին և վերջին ծխախոտը», «Փայտահատի մի երազ» և այլն): Ավելին՝ առանձին ստեղծագործություններում իշ-

խում է կրոնական–քրիստոնեական բարոյախոսությունը, աշխարհն ստեղծող ամենազոր Արարչի՝ Աստծո փառաբանությունը: Աչքի են զարնում լեզվական անփութություններն ու աղավաղումները, գրաբարի ու բարբառների խառնահյուսվածքը: Այս և այլ թերություններն, իհարկե, չէին կարող դրական ազդեցություն ունենալ «նորաբողբոջ պատանեաց» ընթերցողական ճաշակի ձևավորման վրա… Բայց հանդեսի արժանիքներն էլ այս առումով քիչ չէին. շատ արձակ և չափածո ստեղծագործություններ բավական լայն արձագանք էին գտնում ընթերցողների շրջանում, ինչպես «Աղբյուրի» աշխատակից Արշակ Մեհրաբյանի (Սրինգի) արևմտահայ այս մանկական պարբերականի էջերում պարբերաբար հրատարակվող հրաշալի բանաստեղծություններն ու պատմվածքները, Ռեթեոս Պերպերյանի, Ալեքսանդր Փանոսյանի (Ալփասլանի), Միհրան Վարպետյանի մի շարք բանաստեղծություններ, ժողովրդական առածներն ու ասացվածքները, համաշխարհային ճանաչում գտած գրողներից՝ Վիկտոր Հյուգոյի, Չարլզ Դիկենսի, Հանս Անդերսենի և այլոց ստեղծագործությունների թարգմանությունները և այլն: Հանդեսն առաջիններից է, որ հրապարակել է մանկական պիեսներ («Վարժուհին», «Պեպիկը», «Կորսւած տետրակը», «Պապուն գաւաթը» և այլն), ու թեև դրանք գեղարվեստական տեսակետից բավական թույլ են, բայց երևույթն ինքնին ուշագրավ է մանկական գրականության ժանրային «տեսականու» ընդլայնման առումով: «Բուրաստան մանկանց»–ի էջերում պարբերաբար տպագրվող բանահյուսական նյութերը՝ առածների, ասացվածքների, հեքիաթների, զրույցների մեծ մասը նույնպես, թե՛ ուսուցողական–դաստիարակչական, թե՛ ճանաչողական արժեք ունեն և, ինչպես նշում է Խաժակ Գյուլնազարյանը, դրանք՝ հատկապես առածներն ու ասացվածքները, ի մի հավաքելու դեպքում «հնարավոր կլիներ կազմել մի բավական խոշոր ժողովածու, որ որոշակի պատկերացում կտար արևմտահայ իրականության մեջ անցյալ դարի վերջերին տարածված… այդ բանահյուսական–ժողովրդական ստեղծագործությունների հիմնական ուղղության և գեղարվեստական առանձնահատկությունների մասին»: Ժամանակակիցների վկայությունները ևս խոսում են այն մասին, թե հանդեսը որքան կարևոր դեր է խաղացել ընթերցասեր հայ երեխաների կյանքում: Այդ առումով հետաքրքիր է արևմ-

տահայ նշանավոր գրող Տիրան Չրաքյանի (Ինտրա) վերհուշը պատանեկության տարիների իր սիրելի պարբերականի մասին. «Ինչեր կային այն գրքերուն կամ հետզհետե եկող պրակներուն մեջ, որքան բաներ՝ զիս հետաքրքրող, զիս զվարճացնող, զիս խանդաղատեցնող ու հուզող, զիս վերին աստիճանի ախորժելի կերպով, այսինքն՝ լրջօրեն, կատարելապէս, ճշմարտապէս մշակող: Այն էջերուն հանդէպ կզորանային ու կհաստատուեին բնութենապաշտ ճաշակներս, աշխարհագրական, բնապատմական ու բնագիտական բազմազան հատուածներուն շնորհիվ, որոնցմով հանդէսը լի էր»:

Այո՛, թեև «Բուրաստանի մանկանց»–ը իր նախորդի՝ Հակոբ Պարոնյանի «Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականի բարձունքին չհասավ, բայց և իր էջերում հրատարակած առանձին գեղարվեստական արժեքներով հարստացրեց ժամանակի մանկապատանեկան գրականությունը: Այդպես նաև նրա փակումից հետո՝ 1889–1893–ին հրատարակված «Ծաղիկ մանկանց» հանդեսը (տպագրիչ–հրատարակիչը նորից Նշան Պերպերյանն էր, խմբագիրը՝ Միհրան Ասքանազը), որ վերջին երկու տարում լույս էր տեսնում որպես շաբաթաթերթ, թեև որոշ դեր խաղաց արևմտահայ մանկապատանեկան գրականության ընթացիկ զարգացումներում, բայց առավելապես աչքի ընկավ գիտահանրամատչելի, ուսուցողական–ճանաչողական տարաբնույթ նյութերի հրապարակումով, նյութեր, որոնք «իրարու քով գալով՝ պիտի կազմեն ընտանեկան մատենադարան մը մանուկներու և երիտասարդաց ընթերցման արժանի»,— ինչպես ծանուցում էր խմբագրությունը: Հանդեսի «ընթերցման արժանի» գեղարվեստական որոշ արժեք ներկայացնող գործերի շարքում էին «Բուրաստան մանկանց»–ին նախկինում աշխատակցող Ալեքսանդր Փանոսյանի, Ռեթեոս Պերպերյանի և այլոց արձակ ու չափածո մի քանի երկերը, թարգմանական գրականության լավագույն նմուշները՝ Ալֆոնս Դոդեի «Թուզն ու ծույլը», Հանս Անդերսենի «Լուցկի վաճառող աղջիկը» պատմվածքները, Լաֆոնտենի առակները, Լամարթինի «Մանկան օրհներգ», Վիկտոր Հյուգոյի «Մահամերձ ծերունին», «Նապոլեոն» բանաստեղծությունները և եվրոպական ուրիշ հանրահայտ գրողների ստեղծագործություններ:

Ու թեև մեր հիշատակած արևմտահայ բոլոր պարբերականներն էլ նյութական անապահովվածության և զանազան այլ պատճառնե-

րով ոչ երկար կյանք ունեցան, այնուամենայնիվ, ամեն մեկն իր չափով՝ ավել կամ պակաս, զգալի դերակատարում ունեցավ մանկապատանեկան ազգային և թարգմանական գրականության զարգացման, նրա՝ իբրև գրականության ինքնուրույն բնագավառի իմաստավորման գործում:

Այդ ամսագրերում, հրապարակված գրական–գեղարվեստական նյութերին զուգահեռ, արևմտահայ մանկագրության «սրտում» թեև թույլ, բայց բաբախում էր մի ուրիշ զարկերակ՝ մերթընդմերթ հրատարակվող մանկական ստեղծագործությունների ժողովածուներն ու փոքրածավալ գրքույկները (որոնց հեղինակները հիմնականում մանկավարժներ էին, մանկական պարբերականների աշխատակիցներ), վարժարանների տարբեր դասարանների սաներին հասցեագրվող ընթերցարաններն ու դասագրքերը:

Հարկ է նշել, որ մանուկներին հասցեագրված առանձին գրքեր ստեղծելու փորձեր, այնուամենայնիվ, եղել էին դեռևս 60–ական թվականների կեսերին: Մենք նկատի ունենք 1865–ին Պոլսում հրատարակված «Նվեր մանկանց» (հեղինակ՝ Ի. Մեզպուրյան) և ավելի ուշ՝ 70–ականների սկզբին լույս տեսած՝ Գ. Պաղտասարյանի «Նվեր բարեկամ մանկանց» ժողովածուները: Առաջինում տեղ էին գտել հիմնականում խրատաբանական, վերամբարձ ոճով գրված բանաստեղծություններ, որոնք, ըստ էության, գեղարվեստական որոշակի մակարդակ չունեցող, պարզունակ գործեր են, երեխայի վարքի կանոնների չափածո շարադրանքներ: Այս առումով հեղինակի բարի մտադրությունը չի համընկնում մանկական ստեղծագործությանը բնորոշ ոչ միայն գեղարվեստական տարրական պահանջների, այլև երեխայի հոգեբանության ու մտածողության իրական ընկալումների հետ: Բանաստեղծությունների խորագրերն իսկ արդեն «մատնում» են դրանց խրատաբանական բնույթը՝ «Դաստիարակն ու աշակերտն», «Բարեկամ առ բարեկամ», «Որդին առ ծնողն» և այլն:

Երեխաների համար ստեղծագործելու առավել հաջող փորձ էր «Նվեր բարեկամ մանկանց» ժողովածուն, ուր տեղ էին գտել ուսուցողական–դաստիարակչական–ճանաչողական բնույթի մի շարք համեմատաբար հաջողված պատմվածքներ ու զրույցներ («Որդիական սէր», «Կապիկը», «Շոգենաւ», «Մարդ»), որոնք պարզ, անպաճույճ հյուսվածք ունեն և կյանքից վերցված իրական պատկերներով կա-

ղող են հետաքրքրել փոքրիկ ընթերցողին: Իսկ ահա գրքում տեղ գտած համարյա բոլոր բանաստեղծությունները «տառապում» են խրատամոլությամբ, կրոնական պաճուճանքներով: Դրանց մի մասն էլ ժողովրդական առասպելների ու լեգենդների ոչ հաջող մշակումներ են: Այնպես որ, մեզ հայտնի մանկական համարվող այս երկու ժողովածուներն էլ, ըստ էության, որոշակի գրական արժեք չեն ներկայացնում, թեև իբրև երեխաների համար գործեր ստեղծելու առաջին փորձեր՝ չի կարելի դուրս թողնել արևմտահայ մանկական գրականության ծնունդյան «օրորոցային» տարեգրությունից:

Ավելի ուշ՝ 80–90–ական թվականներին հրատարակված դասագրքերում, ընթերցարաններում գրողների երկերի հետ տեղ են գտել նաև մանուկների համար ստեղծագործած, բայց այդպես էլ առանձին մանկական գրքեր չհրապարակած արևմտահայ նշանավոր գրողի՝ **Զաբել Ասատուրի (Սիպիլ)** (1863–1934) բանաստեղծությունները, որոնք այդպես էլ մնացել են դպրոցական դասագրքերի էջերում: Ավարտելով Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանը և ապա երկար տարիներ դասավանդելով տարբեր վարժարաններում՝ նա գրել է մի շարք մանկավարժական հոդվածներ, դեռևս 1879–ին կազմել է «Գործնական քերականություն արդի աշխարհաբարի» դասագիրքը, 80–ական թվականներին չափածո և արձակ գործեր է հրապարակել «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում, ապա հայտնի է դարձել «Աղջկա մը սիրտը» վեպով (1891), բանաստեղծությունների «Ցոլքեր» ժողովածուով (1902): Հենց 80–90–ական թվականների ծնունդ են նաև նրա մանկական բանաստեղծությունները, որոնցից մի քանիսը հետագայում տեղ են գտել իր և ամուսնու՝ Հակոբ Ասատուրի կազմած «Թանգարան հատընտիր հատվածներու» ընթերցարանում: Այդ բանաստեղծությունները հիմնականում հյուսված են մանկան հոգեբանությանն ու մտածողությանը հարազատ նրբերանգներով և ճշմարիտ ներշնչանքից ծնված բնաբուխ պատկերներով, երբեմն ճանաչողական–դաստիարակչական անթաքույց բարոյախոսությամբ՝ նույն այդ մանկանը տոգորելով աշխատանքի ու արարող մարդու, բնության, կենդանական աշխարհի հանդեպ սիրո, հարգանքի զգացումներով, նրա բնավորության, արարքների մեջ դրվատելով գեղեցիկը, բարին, ազնիվը և դրանք հակադրելով չարի, արատավորի դրսևորումներին: Աշխատանքով

է արարվում ամեն լավ բան մարդու կյանքում և բնության մեջ, աշխատանքով միայն դու կարող ես հարգանք ու պատիվ վաստակել. ներհուն պատկերների մեջ «թաքնված» այս խոհերը Սիպիլի «Աշխատանք» բանաստեղծությունում «բացվում» են վերջին խորհուրդ–տողերում.

Ով որ չաշիւարիր, իուրս կուրա պարտքե,
Թող չապասե, որ աշիւարհ զինքն հարգե:

Աշխատասիրության տպավորիչ այլ «դասեր» են ավանդում նաև «Դպրոցականը և շերամը», «Ակնոցը», հայրենի բնության և կենդանական աշխարհի հանդեպ մանկան մեջ հոգատարություն են սերմանում «Մանուշակի փունջը», «Գառնուկը», «Նապաստակը», «Փիսիկը», «Բարի շունը», «Արևուն ճառագայթը», «Էմման և թռչունները» և այլ բանաստեղծություններ: Գեղեցիկ պատկերներով է մանկան հետ խոսում «Արևուն ճառագայթը»: Փոքրիկը ափերով «բռնում» է արևի շողիկը, այն թղթով «փաթաթում» ու «դնում» է անոթի մեջ, որ ձմռան ցուրտ օրերին նրանով տաքանա ու փայլով հիանա: Բայց շատ է տխրում, երբ բացելով անոթը՝ իր փայփայած շողիկն այնտեղ չի գտնում:

Բանաստեղծուհու հայրենախոս «դասերն» էլ մանկան մեջ հայրենիքի հանդեպ սեր և նվիրում պատվաստելու, ազգի միասնությանը «յուր փոքրիկ ուժով» նպաստելու նպատակ են հետապնդում: Ինչպես ահա այս տողերը.

Ինչ պարբեր կրոնք ալ որ դավանիք,
Հայե՛ր, գործեցե՛ք դուք միշտ քով քովի,
Նույն պատմությունը, նույն անցյալն ունիք,
Իրարու եղե՛ք նեցուկ կորովի:

Արևմտահայ մանկապատանեկան գրականությանը զգալի նպաստ բերեց նաև դեռևս «Բուրաստան մանկանցի» էջերից ընթերցողներին հայտնի գրող, հրապարակախոս, մանկավարժ, թարգմանիչ, «Արևելյան մամուլ» պարբերականի երկարամյա խմբագիր **Մատթեոս Մամուրյանը** (1830–1901): Ծնվել է 1830–ին

Զմյուռնիայում, 1845–ին ավարտել է ծննդավայրի Մեսրոպյան, 1850–ին՝ Փարիզի Մուրադյան վարժարանը: Մեկ տարի անց Զմյուռնիայում մի խումբ մտավորականների հետ հիմնադրել է ուսումնարան, այնուհետև՝ 1860–65–ին եղել է Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանապետը, 1865–99 թվականներին որոշ ընդմիջումներով աշխատել է Մեսրոպյան վարժարանի տեսուչ, դասավանդել անգլերեն, ֆրանսերեն, համաշխարհային պատմություն և այլ առարկաներ: 1875–ից մինչև իր մահը զուգահեռ խմբագրել է իր հիմնադրած «Արևելյան մամուլ» գրական–քաղաքական հանդեսը: «Սև լեռին մարդը» հայրենասիրական–ազատասիրական զգացումներով հյուսված վեպի, մանկավարժական և այլ երկերով արդեն ճանաչում ձեռք բերած հեղինակը, Զմյուռնիայում լույս ընծայելով մանկական «Մանր վէպեր ու դասեր՝ քաղուած մանր տղոց համար» գիրքը՝ դրանով իսկ փորձեց ոչ միայն իր, այլև առաջավոր այլ մանկավարժների ու գրողների ուշադրությունը սևեռել նաև արևմտահայ գրականության «ամենէն ավելի զուրկ ու անխնամ մնացած» ճյուղի վրա: «Մանր տղոց» հասցեագրված պատմվածքների ու զրույցների սույն ժողովածուի նախաբանում իր նպատակը մեկնաբանելով՝ նա մտահոգությամբ գրում է, որ Եվրոպայում «երևելի գիտուններն են, որ իրենց բարձունքեն վար իջնելու չեն դժկամիր մանկանց խոսելու և անոնց սիրտն ու միտքը մշակելու համար», և նաև այդ երևույթով է պայմանավորված, որ «ուսումն չէ թէ փշալից ու մշուշապատ դաշտ մը, ալ հրապուրելի պարտեզ մը կը դառնա աշակերտին առջև»: Այդ նպատակի իրագործման ճանապարհին Մամուրյանը կազմում է նաև դասագիրք–ընթերցարաններ երեխաների ուսուցման առաջին չորս տարիների համար, դրանցում նույնպես զետեղում է մանկական ստեղծագործություններ, որոնք աչքի են ընկնում իրական կյանքի գեղարվեստական հետաքրքիր անդրադարձներով, պարզ ոճական հյուսվածքով, ճանաչողական–ուսուցողական նպատակասլացությամբ: Այդ տեսակետից ուշագրավ են մանուկներին հասցեագրված գրականության բնույթի վերաբերյալ նրա տեսական դիտարկումները: Նա գտնում է, որ երեխաների համար ստեղծագործող գրողը պետք է «քննի, զննի մանկան բնությունը», գրելիս անպայման հաշվի առնի նրանց տարիքային յուրահատկությունները, և որպեսզի մանկական իսկական ստեղ-

ծագործություն «դուրս գա նրա գրչի տակեն», անհրաժեշտ է «շատ գիտնալ», «պարզ ու լավ ոճով բացատրել»… Եվ ինչպես իրավացիորեն նշում է Սոֆյա Լալախանյանը, «հենց այս ելակետն ունեն փոքրերին հասցեագրված նրա ստեղծագործությունները, որոնց ներշնչանքի անկեղծ ու զուլալ աղբյուրը կյանքն է: Նրանցում նկատվում է ինչպես փոքրերի ճանաչողությունն ու իմացությունը ընդարձակելու, այնպես էլ նյութը հեշտ ու դյուրին միջոցներով վերարտադրելու գրողի ձգտումը»:

Այո՛, իր իսկ առաջադրած չափանիշների հաշվառումով են ծնվել և՛ «Բուրաստան մանկանց» երկշաբաթաթերթում պարբերաբար հրապարակված, և՛ իր կազմած դասագրքերում ու ընթերցարաններում, և՛ հեղինակած մանկական ժողովածուներում տեղ գտած նրա բազմաթիվ պատմվածքներն ու զրույցները: Դրանցում մանկական երկին իր իսկ առաջադրած գեղարվեստականության պահանջները հիմնականում բնականորեն ներհյուսվում են մանկավարժական–ուսուցողական շեշտադրումներին, որ առանձին դեպքերում ընդգծված խրատական–խորհրդատվական բնույթ են կրում: Այդպիսի դեպքերում, թվում է, թե գրողի շուրթերով ավելի շուտ «խոսում» է մանկավարժը: Մանուկ սերնդի ճշմարիտ կրթության ու դաստիարակության ջահակիր–գրողի լավագույն պատմվածքներում այդ երկու շերտերը միահյուսված են, և երեխայի բնավորությունը, վարքուբարքը, շրջապատող աշխարհի ճանաչողության նրա ձգտումները, արժանավոր մարդուն և հայրենասեր քաղաքացուն բնորոշ հատկությունները բացասականի և դրականի հակադրապատկերներում երևակելը, անշուշտ, հետք են թողնում ընթերցողի հոգում: Առանձին պատմվածքների խոսուն վերնագրերն իսկ արդեն այդ են հուշում՝ «Ծնողասիրություն», «Ցորնի հասկերը», «Աշխատասեր տղա», «Արև», ապա և «Անպիտան կատակ», «Բարկություն» և այլն: «Ցորնի հասկերը» պատմվածքում, բնության գեղեցիկ պատկերների հյուսքում ներկայացնելով մարդու աշխատանքով արարված ցորյան արևաբույր հասկի ծնունդը՝ մանկավարժ–գրողը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում «միջամտել» ուսուցողական–դաստիարակչական «դասով». «Նայի՛ր, զավա՛կս, նայի՛ր այս հասկն, որ այսպես համեստությամբ կը ծռեր, շատ աղվոր ցորենի հատիկներով լեցուն է, ընդհակառակն՝ այն, որ գոռոզությամբ գլուխը կը

բարձրացներ, բոլորովին պարապ է: Նույնպես ունայնամիտ մարդը գոռոզ է, գիտուն մարդը՝ համեստ»:

Ձգտելով մարդկային կատարելության, երազանքի սերմեր ցանելու հայ մանկանց հոգում, նրան տոգորելու մարդկային մնայուն արժեքներով կյանքում ապրելու–առաջնորդվելու ոգով, դաստիարակելու մայր ժողովրդի իդեալներին նվիրված սերունդ, ինչը յուրաքանչյուր, նաև իսկական մանկագրի նպատակն է ու դավանանքը՝ Մատթեոս Մամուրյանը իր լավագույն ստեղծագործություններով մնայուն հետք թողեց արևմտահայ մանկական գրականության, իր խոսքերով՝ «ամենեն ավելի զուրկ ու անխնամ մնացած» ճյուղում՝ որոշակիորեն առաջ մղելով նրա զարգացման ընթացքը:

Մամուրյանի հետ միաժամանակ »Բուրաստան մանկանցի» էջերից մանկագիր «կնքված» **Ալեքսանդր Փանոսյանի (Ալփասլան)** (1859–1919) առանձին ստեղծագործությունները նույնպես այդպիսի առաքելություն ունեցան, տեղ գտան նաև դասագրքերում և 1885–ին լույս տեսան առանձին՝ «Շողեր և ցոլեր» գրքով: Սակայն Ալփասլանի՝ երեխային հոգեհարազատ նոր ու թարմ թեմաների անդրադարձներով գեղարվեստական արժեքավոր երկեր ստեղծելուն նպատակաուղղված ջանքերը, ըստ էության, նկատելի պտուղներ չտվեցին, և նա չկարողացավ «հաղթել» մանկական իսկական գրականության «թշնամիներին»՝ մերկապարանոց խրատաբանությանը, պարզունակությանը, լեզվաոճական անհարթություններին, ասելիքը անհույզ, ձանձրալի նկարագրություններով ներկայացնելուն և այլն: Եվ, այնուամենայնիվ, նրա մի շարք բանաստեղծություններ ժամանակին ջերմորեն են ընդունվել փոքրիկ ընթերցողների կողմից, թեև այսօր ընդամենը ճանաչողական արժեք ունեն՝ իբրև ժամանակի մանկագրության թեմատիկ–գաղափարական ինչ–ինչ շերտերի վկայագրեր:

Այնուամենայնիվ, 90–ական թվականների արևմտահայ մանկական գրականությունը էական առաջընթաց չունեցավ, թեև Սիպիլի հետ նրա զարգացման գործում որոշակի ջանքեր ներդրեցին այլ հեղինակներ՝ **Սմբատ Դավթյանը, Մարզպետը, Ռեթեոս Պերպերյանը** և ուրիշներ: Եթե Մարզպետը հիմնականում հայտնի է ժողովրդական–բանահյուսական թեմաների մշակումներով, նշանավոր գրողների (Գրիմմ եղբայրներ, Ալեքսանդր Պուշկին, նաև Ղազարոս

Աղայան) ստեղծագործությունների, հատկապես հեքիաթների վերապատմումներով, որ ընդգրկել է իր «Մանկական աշխարհ» ժողովածուում, ապա Սմբատ Դավթյանը միայն ինքնուրույն ստեղծագործություններով է «մտել» այդ շրջանի մանկական գրականության մեջ: Եվ ինչպես իր նշանավոր ժամանակակիցը՝ Մատթեոս Մամուրյանը, նա էլ մանուկներին հասցեագրված ստեղծագործությունները գրել է նույն մտահոգությամբ: 1897–ին Կ. Պոլսում լույս տեսած «Նուէր հայ մանուկներուն» («Փունջ») ժողովածուի առաջաբանում նա ընդգծել է, որ այն «գրգիռ մը ըլլա, և կարող գրիչները յորդորուին մշակելու այս անտես առնուած սեռը, որը թէև անփառունակ ու համեստ, սակայն ոչ նուազ օգտակար ու շահեկան է»: Եվ իր նպատակն է եղել «մանուկների հասողությանը համապատասխանող ոտանաւորներով ճոխացնել մեր դպրոցական մատենագրությունը»: Ու եթե «դպրոցական մատենագրությունը ճոխացնելու» իր բարի ցանկությունը թեկուզ մասամբ է հաջողվել գործնականում իրականացնել (առանձին գործեր «տառապում» են շատերին բնորոշ նույն թերություններով՝ խրատամոլություն, պարզունակություն, ժամանակով պարտադրված կրոնաբարոյախոսական շեշտեր և այլն), մանկական ժողովածուում ընդգրկված բանաստեղծությունների միայն մի մասն է «մանուկների հասողությանը» համապատասխանում, բայց եղածն էլ բավական է ժամանակի մանկագրության մայրուղում իր սեփական կածանը ունենալու համար: Ու թեև այլ հեղինակների ստեղծագործությունների հիմնաթեմաներն են դրանցում արտացոլված (հայրենիք, աշխատանք, բնություն, կենդանական աշխարհ և այլն), բայց Դավթյանը փորձել է, որքան հնարավոր է, ասելիքը երեխային մատուցել պարզ, դյուրին ու մատչելի հյուսվածքով, պատկերների «լեզվով»: Այս տեսակետից հատկապես հաճելի տպավորություն են թողնում բնաշխարհին ու նրա «բնակիչներին« նվիրված բանաստեղծությունները, ինչպես, ասենք, «Սարեկը».

Սարեկը եկաւ
Ու մեզի բերաւ
Պայծառ արեգակ
Ու ջերմ եղանակ:

Դաշտ ու ծառաստան
Ծաղկիլ սկսան,
Անուշ բուրմունքով
Սրտեր լցուեցան:

Մի շարք բանաստեղծությունների «հերոսը»… աշխատանքն է, որի հանդեպ սեր դաստիարակելը մանկագրի համար շատ կարևոր նպատակադրում է: Հենց «Աշխատանք» խորագրով բանաստեղծությունում ներկայացնելով աշխատավոր մարդկանց՝ երկրագործի, դարբնի, հյուսնի, ջուլհակի «կերպարները»՝ Դավթյանը մանուկներին հորդորում է օրինակ վերցնել նրանցից՝ «միշտ աշխատեցե՛ք սրտով զոհունակ»:

Նոր՝ 20–րդ դարի առաջին տասնամյակում արևմտահայության գլխին տարեցտարի սաստկացող ֆիզիկական բնաջնջման վտանգի պայմաններում էլ զորացող արևմտահայ ըմբոստ գրականության «մանկական երակը» այլևս չի բաբախում համահունչ զարկերով, և թվում է, թե մանկագրության վերելքի ճանապարհը, ըստ էության, ընդհատվել է՝ այս կամ այն չափով աչքի ընկնող մանկական գրողներ և ինքնուրույն նշանակալի երկեր ի հայտ չգալու պատճառով: Բայց այդ «բաց տարածքը» որոշակիորեն լրացրին այդ տարիներին լույս տեսած դասագրքերն ու ընթերցարանները, որոնց կազմողները կամ հեղինակները նրանցում ընդգրկում էին ոչ միայն արևմտահայ անվանի գրողների՝ Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Պարոնյանի, Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի և մյուսների՝ մանուկներին և տարբեր տարիքի դպրոցականներին դյուրամատչելի ստեղծագործություններ (այդ թվում՝ մանկական), այլև արևելահայ հանրահայտ գրողների (Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Աթաբեկ Խնկոյան և ուրիշներ) երկերը, «Աղբյուր» և «Հասկեր» ամսագրերում հրապարակված տարաբնույթ, այդ թվում՝ գեղարվեստական նյութերից: Այդ դասագրքերից հատկապես ուշագրավ էին Արամ Անտոնյանի «Գանձարանը», Հրանտ և Զաբել Ասատուրի (Սիպիլ) «Թանգարան ընտիր հատուածներու», Ռուբեն Զարդարյանի «Մեղրագետը» և այլն: Հետաքրքիր է, որ Հովհաննես Թումանյանի, Շանթի և

Ստեփանոս Լիսիցյանի կազմած «Լուսաբեր» դասագիրքը 1911–ին նույնպես մատուցվեց արևմտահայ երեխաներին՝ լեզվական համապատասխան փոփոխություններով:

Դարասկզբին արևմտահայ տարբեր գաղթօջախներում սկսում են հրատարակվել մանկական և պատանեկան նոր պարբերականներ, որոնք այս կամ այն չափով ուշադրություն են նվիրում նաև սերնդի գրական–գեղարվեստական դաստիարակության հարցերին՝ իրենց էջերում հրապարակելով ոչ միայն ճանաչողական–ուսուցողական նյութեր, այլև հայ նշանավոր գրողների առանձին ստեղծագործություններ (այդ թվում՝ մանկական): Այդպիսի նպատակադրումով էին առաջնորդվում Թուրքիայում լույս տեսնող «Հայկունի» (1910–1912), «Բողբոջ» (Մարզվան, 1911–1914), լոնդոնահայ պատանիների միության կողմից հրատարակվող «Պատանի» (1902–1907) և մանկապատանեկան այլ պարբերականներ: Ուշագրավ էին «Պատանի» ամսագրի էջերում պարբերաբար տպագրվող այն նյութերը, որոնց նպատակը հայ նշանավոր գրողների և ազգանվեր գործիչների կյանքի ու գործունեության օրինակով սերունդներին դաստիարակելն էր: Այդ առումով հետաքրքիր էին Գրիգոր Նարեկացուն, Ղևոնդ Ալիշանին, Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին և այլոց նվիրված զրույցները: Տպավորիչ էին նաև հայրենիքի սերը հատկապես պանդխտության մոտիվներով արտահայտող ստեղծագործությունները («Հայ որբը», «Միտքէս չի ելլեր» և այլն): Ավելի ընդգրկուն շրջանակներ ուներ Մարզվանի «Հայկունի» գրական–գեղարվեստական թեքումով հանդեսը, որի ճակատին «բոցավառվում» էին Գյոթեի «Լոյս, ավելի լոյս» խորհրդանշական խոսքերը: Այդ նշանաբանով գործող հանդեսը այլ նյութերի հետ մեկտեղ հաճախ էր հրապարակում հայրենասիրական, ազգային–ազատագրական գաղափարներով տոգորված ստեղծագործություններ՝ «հայ ժողովրդի դարաւոր ստրկութեան դէմ պայքարող, անոր խոպան սրտերուն մեջ առաջին անգամ ազատութեան սերմերը ցանողներէն մին բանաստեղծ» Միքայել Նալբանդյանից, ապա և Միսաք Մեծարենցից մինչև մարզվանցի պատանի ստեղծագործող Արշակ Թոթոնճյանի՝ ազգի հանդեպ հպարտության զգացումներով հյուսված ձոներգ.

Հայորդին եմ, Հայկայ զարմին
Զաւակը՝ քաջ, հաւատարիմ,
Ազգիս համար արեան գետէն
Մնցնիլ կ՚ըղձամ անվախօրէն…

Մարզվանում լույս տեսնող և Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում տարածվող «Բողբոջ» մանկապատանեկան ամսագիրը, որ հրատարակվեց Հայոց ցեղասպանությանը նախորդող երեք տարիներին, ավելի շատ իր էջերում տեղ էր տալիս սկսնակ շնորհալի ստեղծագործողներին, հատկապես «քաջալերելով գաւառի պզտիկները»՝ այն հավատով, որ նրանք «վաղը հայ գրականության փառքը պիտի կազմեն»: «Հայկունի» ամսագիրը, խրախուսելով «հայ արհեստավոր պատանի դասակարգին առջև ասպարէզ մը բանալուն» և «զարգացած երիտասարդներ ըլլալուն» նպատակաուղղված նոր պարբերականի ծնունդը, նշում է. «Ինքնին գնահատելի ձեռնարկ մը անշուշտ, որ կոչուած է որոշ դեր մը կատարել դպրոցականներու կեանքին մէջ: Կհուսանք, թե դպրոցականներ և սկսնակներ պիտի բոլորուին անոր շուրջը»: Իրական կյանքի ճշմարիտ արտացոլման գաղափարներով ներշնչված՝ «գործել՝ երազել է ավելի», «գործ՝ ոչ թե խօսք» նշանաբաններով առաջնորդվող «բողբոջականները» պատանի ընթերցողներից և ստեղծագործողներից պահանջում էին արցունքի, տրտունջի փոխարեն «ժպիտի երգը թրթռացնել», որովհետև դա է «կեանքի հրամայական պահանջը» և որ «գրել, ճշմարիտ գրականութեան հետևիլ՝ այս է ամեն դպրոցականի, ամեն զարգացականի պարտքը, վասնզի գրիչը՝ հրաշագործ ձեռքի մոգական այդ ամենաճարտար գաւազանն է, որ կարող պիտի ըլլա հին կարգերու և հին ունակութիւններու ժանգոտ շղթաները խորտակել, և այդպես բանալ վաղուան պայծառ արշալոյսը»:

Հիշենք, թե ինչ ծանր ժամանակներ էին Արևմտահայաստանում, երբ ժողովուրդը, դեռևս պայքարով ազատություն ձեռք բերելու՝ «վաղուա պայծառ արշալոյսի» հույսը չկորցրած, ավա՜ղ, շուտով սրտում խրված պիտի տեսներ Մեծ եղեռնի մահաբեր սուրը… Եվ այդ ժամանակներում այս փոքրիկ, բայց խիզախ «Բողբոջը» անկումային խոհերով հյուսված մի բանաստեղծության հեղինակին այսպիսի պատգամ է հղում.

Թէ ես ըլլայի երիտասարդ քեզ նման,
Փոխան լացի, կը գոռայի՝ «Մայր, երգէ՛
Հայ քաջ տղուն ռազմի երգը աննման,
Ես չեմ վախնար մարտէ, մահէ ու վերքէ…:

Ամսագրի էջերում տպագրված շատ բանաստեղծությունների ոգեղեն տարերքը հայրենասիրական–ազատասիրական գաղափարներն էին («Սասուն», «Ազատորդի» քայլերգ, «Հայուհիի աղօթքը» և այլն): Սակայն այդպես էլ «Բողբոջը» չհասցրեց ավելի հասուն տնկի դառնալ, տեսնել «վաղուան պայծառ արշալոյսը»:

Օդում արդեն զգացվում էր Եղեռնի չարագուշակ շունչը…

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ
(հայրուած)

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՞վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՞վ դու իմ սըրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ հասել է, հասել,
Ավագ Մասյաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սև–սև ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ–ճերմակ սարերն են անվախ,
Ձընիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
Քաղցրիկ կըրկըջով գլորե գետս հազար.
Յայն բարձըր ժայռից, որ երկնուց են մոտ
Կենաց օրհնության ծագե առավոտ:
Ահա քո բլուրներն, Հայո՛ց աշխարհիկ,
Այն քո բյուր բլուրներ ու բյուր վըտակիկք,
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան ցուրտ ձըմեռդ ու ձյուներըդ շատ.
Լերինք և հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսին նըման,
Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
Կապեն ի գըլուխ զինչ նոր թագվորակ.
Ի ծայրից սարից, որ երկնուց են մոտ՝
Փըռվի մինչ ի խորն հորոտն ու մորոտ.
Գետեզերք ամեն բացել են շուշան
Պայծառ դընդըղնով ցընցըղկեն գընան,
Սարեզերքն ամեն զվարդն երևցուցին,
Ա՜հ, կարմրուկ վարդեր, զավակք Եդեմին:

Պըլպուլն ի հեռվանց թողեց ճըգնարան,
Ծովեր, ցամքըներ թևեց անգուման
Կանչեց ի յօդուն երեք հետ բարև,
Ոտկունքըն դըրավ ի սարին վերև,
Սարին վերևեն ի վարդին տերև,
Հայո՛ց աշխարհիկ, քեզ երետ բարև,
Սարեկն ի սարին եկաց ու մընաց,
Անմեղ նախընծով եղավ երգասաց,
Արագիլն յերդիս ավլեց իր բունիկ,
Կանգնեցավ կըղաց. «Հայո՛ց աշխարհիկ»,
Արտուտիկըն թռավ, թռավ վարուվեր
Մանրիկ ճըլվըլով ասաց շատ բաներ.
Տատրակիկն իջավ, իջավ ցած ու ցած,
Կըրծկունքն ի գետին ըզկո՛ւկո՛ւ ճըվաց.
Հովիվն ու հոտաղ, գառինք, եզն ու կով
Գոհացան զաստուած՝ մարգեր շուրջ գալով:
Հանց քեզ տերն է տվել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայո՛ց աշխարհիկ.
Դրախտիկն որ անցել, դառնա քեզ գարնամբ,
Ձինչ պայծառ արևն, որ ծածկեր ի յամբ:

լերինք – լեռներ
դընդըղանք – ալիք, ծփանք
անգոման – հանկարծ, չսպասված
կըղալ – կանչել, ձայն տալ

ՀՐԱԶԴԱՆ

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդըխտիկ.
Ա՜յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, ի՞ր կու լայք լըռիկ:
Ես ձեր դրացենակն եմ, չեՔ ճանչել,
Սիրտս ըզձեզ չէ մոռցել իսկի.
Դուք կարկըջիկդ ի՞ր եք մոռցել,
Ծիծղուն երեսդ ի՞ր սուգ ունի:

Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ։
Վա՜հ, մեր կանաչ անտառիկս ո՞ւր,
Ո՞ւր տաղվարիկս, ո՞ւր մեր նըշիս,
Հովո՞ւն եղան, թե ծովուն կուր.
Ո՞ւր մեր տընակն, ո՞ւր մեր այգիս.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ։
Ո՞ւր ես, աչիցըս լույս Խանտուկ.
Իմ ընկերներն ո՞ւր են, Հրազդա՛ն,
Միթե Պարսկի՞ն եղան գերուկ,
Միթե ամենքն ի հո՞ղ մըտան.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ։
Ա՜հ, անցուգնաց եղել ամեն.
Ա՜հ, անցուգնաց է Հայաստան,

Ձիս անմեկիկ թողած աստեն
Ետ անցնիս գնաս դո՞ւն այլ Հրազդան…
Անցի՜ր, գընա, ջրիկդ հայրենի,
Արտսունք հերիք են Բաբկենի։

1848

աստեն – այստեղից
հերիք – բավական

ԳԱՐՈՒՆ

Ընդ վարդին հրավառ՝
Մանկիկ զըւարթուն,
Բերէ քեզ գարուն
Ըզշուշան պայծառ.
Եւ ի ծակ վիմին
Նորուն սուրհանդակ
Պարկեշտ մանուշակ
Ժմտի սիրային.
Պանդուխտ ծիծեռնիկ

Գայ օդովք ջերոտ
Կազմել ի ծըղօտ
Վարանաց բունիկ.
Ի մարգ սիզաւէտ
Գառանց եւ ուլուց
Հօրանք կաթնածուծ
Խայտան խընդաւէտ:
Ի սոցին վայել
Կարդայ քեզ հրաւէր
Ձեռամբ ծաղկաբեր
Զըւարճն ապրիէլ.
Յառաքինազարդ
Թէ գընաս ուղիղ
Որդեա՛կ, ընդ շաւիղ,
Անմահ քաղես վարդ.
Թէ սիրտ քո մատաղ
Իցէ անընտգիւտ,
Ո՜հ, չիք քան ըզքոյդ
Շուշանիկ չընքնաղ:
Բայց յո՛ւշ քեզ որդեակ
Զի զձեռն անընզգոյշ
Խոցէ քստմնափուշ
Եւ վարդին դաստակ.
Այլ քեզ առաջնորդ
Թէ ունիս զԱստուած,
Լիջիր անկասկած
Գարնան ժառանգորդ.
Եւ թէ դաշտք համբուն
Ոչ պըճնին ի զարդ,
Այլ սրտիդ դընրախտ
Միշտ տեսցէ զգարուն:
Շընչեսցես ո՛վ Տէր
Ըզշնորհաց զեփիւռ
Ի մանկունս համբոյր,
Ըզհանճար եւ սէր.
Ի հովտիս ցաւոց
Հողմաշարժ սարսեն
Կոկոնք ապազէն

Ի խըռան փըչոց:
Քո են սուրբ ցորեան
Որոմանց ի մէջ.
Ընձիւղեալք ի մէնջ
Յոյսք նոր սերընդեան:
Ոհ մի հարցէ զձեզ
Ցուրտ մեղաց սարսուռ
Մի զձեզ ախտից հուր
Խամրէ տօթակէզ.
Այլ զցօղն երկնազեղ
Արբցէ ի ձեր շնորհ
Եւ սիրտ մեղաւոր,
Մանկըտիդ անմեղ:

Նուագք, «Մանկունք» շարքից, Վենետիկ, 1881

ժմտալ – ժպտալ
պանդուխտ – գերի
պարկեշտ – օրինավոր
խայտալ – ծփալ
յառաքինազարդ – անբասիր, մարդկային լավ հատկություններով օժտված
հողմաշարժ – փոթորկից, քամուց շարժվող
արբել – արբենալ, հիանալ
մանկըտիք – մանուկներ

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

ԳԱՐՈՒՆ

Ո՞հ, ինչ անուշ և ինչպես զով
Առավոտուց փչես, հովի՛կ,
Ծաղկանց վրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գնա՛, անցի՛ր սրտես ի բաց:

Ո՞հ, ինչ աղու և սրտագին
Ծառոց մեջեն երգես, թռչնի՛կ,
Սիրո ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենյաց,
Գնա՛, երգե՛ սրտես ի բաց:

Ո՞հ, ինչ մրմունջ հանես, վտա՛կ
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելվույդ մեջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց չես վտակ իմ Հայրենյաց,
Գնա՛, հոսե՛ սրտես ի բաց:

Թեպետ թռչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց շրջին վերա,
Թեպետ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մեջ կը սողա,
Նոքա հառա՛չք են Հայրենյաց,
Նոքա չերթա՛ն սրտես ի բաց:

ականակիտ – վճիտ, հստակ, մաքուր
անապակ – անարատ, մաքուր

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բյուր ձայնից բնության շքեղ
Թե երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թե որ զարնեն փափուկ քնար,
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր եմք մեք,
Որ մըրըրկավ էինք զատված,
Բաղդին ամեն ոխ չարանենգ
Ի մի համբույր ցրվին ի բաց.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնե զորդիս յուր քովեքով,
Սրտին խորունկ վերքը դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով,
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մեկտեղ լացինք մենք ի հնում…
Եկեք դարձյալ հար անբաժան
Խառնենք զարտոսր և ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլա մեր ջան.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարյաց յերկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

զանձկալի – ցանկալի, կարոտալի
զարտոսր – արցունք
ըզխնդում – ուրախություն

ՄԱՀ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ

Դու զո՞վ խնդրես, մա՛յր իմ անույշ.
Ե՛կ, մի՛ դողար, մոտեցի՛ր հոս,
Անլաց աչոք դիտե զորդիդ
Ու յուր վերքերն արյունահոս.
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Ինչպես երբեմն որրանիս մեջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնույս հանգիստ տայիր
Իբրև հրեշտակ նըվագելով.
Զիս հանգչեցուր ի հող, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

«Նորեկ որդվույս կենացն արև
Ձեզի համար փայլի՛, հայե՛ր»,
Այսպես յայնժամ դու կ’երգեիր՝
Օրորոցիս նըստյալ քովեր.
Անոնց համար շիջավ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Կարմիր կայլակք ցայտին վերքես,
Սակայն, մա՛յր իմ, նայե՛ չորս դին,
Զայրունըռուշտ թուրքերըն տե՛ս
Հազարներով փըռված գետին.
Կերավ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Մըռընչեցին ինչպես վիշապ
Ու մեր վըրա հարձակեցան.

Ո՜վ Հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան.
Կարմիր ներկան ճորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք
Զի չէ՛ մեռած Հայոց կըրակ,
Ու ցընծացին այնչափ զոհեր
Զի լուծավ վրեժ յարյան վըտակ.
Խնդաց Մասիս, մա՛յր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Վերջի՛ն համբույր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանեմ զայն սիրուհվույս,
Վերջի՛ն անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կիջնամ ի ծոցն անլույս:
Խաչ մը տընկե վըրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

հանգչեցուր – այստեղ՝ ամփոփի՛ր
շիջանել – մարել, հանգել
կայլակք – թափվող հեղուկի կաթիլներ

ԳՈՀԱՐԻԿ

Ո՞վ է պզտիկն այն աղջիկ,
Սիրուն, աղուոր և փափկիկ,
Սև մազերով, սև աչքով,
Ինքը բոլոր խատուտիկ:
— Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ:
Երբոր իջնէ պարտէզիկ
Քաղել վարդեր կամ յասմիկ:
Դուն չես կրնար որոշել
Ով է վարդ, ո՞վ՝ Գոհարիկ,
— Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ:
Երբոր թռչուն ճըւճըւայ,

Երբոր վառեակ կտկըտայ
Դուն չես գիտեր թռչո՞ւնն է,
Թէ չէ Գոհար, որ ձայն տայ
— Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ։
Ո՞վ է պզտիկն այն աղջիկ,
Անհընազանդ չարաճճիկ,
Որ շատ անգամ տունին մէջ
Յարուցանէ փոթորիկ։
— Ո՜հ, այն աղջիկ
Չէ՛ Գոհարիկ։

Հակոբ և Զապել Ասատուրի «Թանգարան ընտիր հատվածներու» դասընթերցարանից, Կ. Պոլիս, 1921

պզտիկ – փոքրիկ
աղուոր – լավ
յարուցանել – առաջացնել, մի բանի առիթ տալ

ԿԱՂԱՆԴԻ ՀԷՔԵԱԹ

Միտքս կուգայ: Գետնէ տուն մըն էր, աւելի ճիշդը՝ հողէ մեծ սենեակ մը: Ածուխի պէս փայլուն գերաններ իրարու կուգային մեր գլխուն վերեւ ու անոնցմէ կախ ու ծոյլ–ծոյլ իրենց վրայ դարձող սերկեւիլի ու խնձորի բոլորակները կը յիշեմ այսօրուան պէս:

Դռան մօտիկ՝ Կաղանդի սեղանը իր եօթը լեցուն ամաններով: Ու օճախին շուրջը՝ թաղին բոլոր ինծիպէսները, ու մեր մէջտեղը հօրքուրս՝ բարի ու անուշ պառաւ աղջիկ, ճերմակ մազերով, թարթիչէ ու լոյսէ զուրկ աչքերով:

Ինչ համով էր զգուըտուքը ծունկ մը տեղի համար:

Հօրքուրս, պօղին երկու փէշերը ամո՛ւր մը գօտիին փոթը անցուցած, չորուկ մատներովը կը հսկէր իր գիրկը լեցնող պիլիթին ու պաստեղին: Մեր շարժումներէն, մեր հեւուքէն կը հասկնար մեր հոգին, մեր անառակ տղու չարութիւնները, երբ լակոտին մէկը կատուի թաթ մը փորձէր պօղին մէկ պահուած գանձին:

— Խելօք կեցէ՛ք, ատենը չեկաւ:

— Գիտէինք, որ ան իրկունը մեր ամէնուն հայրերը մեռել–տուն կ'երթային խաչ ու աղօթք ընելու, հոգու դդում ուտելու: Մինչեւ որ հօրս չոր հազը չառնէր ախոռին խորունկէն, հօրքուրս չորուկ մատները չէր բաժներ իր գիրկէն.

— Տղա՛քս, խունկը կէս ճամբան կը մնայ, մեռելներուն աչքը ճամբան կը պաղի ետքէն:

Ու մենք, քար դնելով մեր անհամբեր փորին վրայ, կ'իյնայինք իրարու հետ: Ինծի համար անպատմելի հաճոյք մըն էր օճախին ետին իրարու վրայ շարուած կաղնիի աղուոր ճիւղերուն հետ խաղալ շարունակ, սուր երկաթով մը չարչարել կարմիր միսերը, բոց տալ փայտին վրայ գոց կապոյտ մամուռներուն ու անոնց հոգու պէս անուշ ծաղիկներուն: Ուրիշ մը գործ կ'ընէր իրեն տալմապազէն կախ հողէ ամանին մէջ բամպակէ պատրոյգին քիթէն սեղմել: Ու

կրակին կայծերը կ'երթային համբուրել կանթեղին երգող ցոլքերուն հետ:

Տես՝ հոն հին բոլոր իմ ընկերները՝ Քուչիկը, Շիշտօն, Փախուկ–Դաւիթը, Կուր–Օվնէսը: Ինչ ալ լեզուանի էր շան տղան՝ Կարմիրենց Պետիկը, երբ գլխիկը հօրքուրիս ծունկին դրած.

— Հոգեկդ ուտիմ, հօրքո՛ւրս, ալ չհասա՞ւ խունկը:

Ու ամէնս մէկ կը կրկնէինք մեր աղաչանքը.

— Չէ՛, տղա՛քս, չէ՛: Խելօք նստեցէ՛ք: Ոսկիին հէքեաթը պատմեմ ձեզի:

Ու մենք ամէն տարի՝ ատ իրկունը, մտիկ ըրած էինք արդէն Ոսկիին Հէքեաթը: Բայց հօրքուրս պատմելու ձեւ ունէր: Մեր անհանգիստ շարժումները քիչ–քիչ կը մեղմանային, մեր քիթերը դրած՝ հօրքուրին արգելափակ գանձին վրայ կը սպասէինք:

* * *

Ինծի կուգայ, թէ հօրքուրիս հէքեաթը պատահած էր շատ առաջները, երբ գեղին մէջ մեր գիտցած տուներն ու մարդերը չէին եղած:

Այն ատեն մեր տան տեղը խոշոր լեռ ըլլալու էր: Ու հօրքուրս, գլուխը վեր առած, իբր թէ մատովը ցոյց կուտար սեւցած գերաններ-ը, որոնք գեղին մօտիկէն, ծըմակեն բերուած էին:

Բայց Սուրբի աղբիւրին վերօք՝ Պսակուած–Քարին կուշտիկը, շատ պզտիկ հիւղակի մը խօսքը կ'ընէր ան:

Ու մենք գոց գիտէինք Մեծ Քարը, որ մինչեւ մեր օրերը կը կենար հոն: Ինչ խոշոր էր: Սարին մէկ երեսը լըման կը բռնէր անոր հասակը:

Հիւղակին հետքն անգամ կերած էին տարիները: Բայց հօրքուրս խաչով ու պատարագով երդում կը հանէր բերնէն, թէ Գափիկանց Մայրին, պատկառելի ծառ մը, որ խնայուած է գեղացիէն, բուսած էր ճիշդ ու ճիշդ տանը տեղը այն աղջկան, որուն փարչը ոսկի վազած էր:

Այդ ահարկու քարերուն սիրտին մէջ հիւղակը կար հին օրերուն. հոն կ'ապրէին մինակուկ, աշխարհքին չարերէն հեռու քոյր մը ու աղբար մը:

Հօրքուրս ամէն տարի չէր մոռնար աղջկան ոսկի մազերը երկնցնել մինչեւ անոր կրունկները: Այնպէս աղուոր ալ կուգար: Ու հօրքուրս գովեստ ունէր անոնց կարմիր աքլորին, խելօք այծին, որ

դունչիկը տուած օճախի շեմին՝ հանդարտ–հանդարտ կ'աղար իր ակռաներով:

Ու կը նկարագրէր ան շատ համով Կաղանդի իրկուն մը, երբ մեռել–տուն երթալ չկար, ու պաստեղ ու շարոց ուտելու համար այսպէս ժամերով հոգի չէին քակեր պզտիկները: Մեզի ինչ փոյթ, թէ անոր գիշերին մէջ, դուրսը, հովն ու անձրեւը, ձիւնն ու ցուրտը իրարու ետեւէ կ'իյնային:

Ու կը պատմէր: Ան հովերուն թեւ կուտար, ամպերուն՝ ձայն ու կրակ: Անոր անձրեւը խելօք ու նիհար անձրեւը չէր հիմկու օրերուն, անոր հեղեղը ձորակին մէջ առասպելի դեւերուն չափ ուժով կը պոռար: Ինչ անուշ էին բառերը, որոնք աղջկան քունը կը տեսցնէին մեզի:

Մինչեւ հոդ պատմութիւնը հանդարտ էր: Մենէ շատեր իրենց ականջը կը յատկացնէին ախոռէն հասնելիք հազին կամ կ'աշխատէին հօրքուրին կոյր հսկողութիւնը խաբել:

Բայց յանկարծ հէքեաթին մէջ այծին բոժոժը մեղմ կը հնչէր: Կենդանին երկու տոտիկներուն վրայ կը շտկեր մեղմով: Հիւղակին դուռը կը զարնէին:

Ամէնքս ալ ինքնաբերաբար պարտաւորուած էինք պատմուածքին հետեւելու:

Աղջիկը կ'ելլար պառկած տեղէն, օճախին մէջ անթեղուած կրակին վրայէն մէկդի կ'առնէր մոխիրին հաստ խաւը: Մութին մէջ կարմիր ճառագայթում մը աղջկան դէմքին վրայ կը ցաթէր: Ու Աստուծոյ մը վայլող անվախութեամբ մը ան կ'երթար դուռը բանալու:

Մեր վրայէն սոսկում կ'անցնէր անպայման, երբ դուռին առջեւ փառաւոր ձիու վրայ նստած փառաւոր երիտասարդ մը կ'ըսէր աղջկան.

— Աղուո՛ր աղջի՛կ, թրջեր եմ անձրեւէն, ինծի ներս կ'առնե՞ս:

Ու աղջիկը ներս կ'առնէր տղան: Կրակին շուրջի փայտերը կը մէկտեղէր: Բոցը կը լուսցընէր հիւղակը ամբողջ: Ու բոցը կը խաղար քնացած աղբօրը երեսին վրայ ու կը կոտրտուէր այծին անուշ աչքերուն մէջ:

Աղջիկը կը հանէր անոր թրջած լաթերը, կը չորցնէր բարակ կրակին դէմ, հաց ու ընկոյզ կը բերէր երիտասարդին առջեւ: Մինչ դուրսը անոր ձին դաշնաւոր ձեւով մը սմբակները շեմին կը զարնէր:

— Աղուոր աղջի՛կ, ջուր ալ կուտա՞ս:

Աղջիկը կ'երթար փարչին մօտ, ոտքին վրայ առած՝ կը ծռէր զայն փայտէ գուշին մէջ ջուր լեցնելու համար:

Մենք շատ լաւ գիտէինք փարչին պարապ ըլլալը։

Հօրքուրս կը կենար հոդ մեզի հարցնելու համար.

— Հիմա ի՞նչ ընել։

Ու կրկնուած բառերով ան կը նկարագրէր անձրեւին սաստկութիւնը, քարէ ճամբայէն ոռնալով թռչող ջուրին կատաղութիւնը, գիշերուան զարհուրելի սեւութիւնը, ուր կրնաս մատդ աչքդ խոթել ու չտեսնել ըրածդ։ Աղբիւրը, Սուրբին աղբիւրը գիշերով գտնել ո՛ր քաջին գործն է, նոյն իսկ հիմա, երբ գեղացին ապառաժէն վար ճամբայ է քակած։

Մենք լուռ էինք։

Հօրքուրս ժպիտով մը փարչը շալակը կուտար աննման աղջկան, զայն աղբիւր կը ղրկէր խուշի պէս թռցնելով, որպէսզի տան հիւրը չը նեղուի ծարաւէն։

Երիտասարդը նստած կ՚ըլլար, աղբարը՝ միամիտ քնացած։

Ու ջուրին ձայնը գլ–գլ կը հնչէր փայտէ գաւաթին մէջ, ու աղջիկը ձեռք կ՚առնէր զայն բերելու երիտասարդին, երբ յանկարծ աքաղաղը, թափ տալով թեւերուն, կէս գիշերուան երգը կը պոռար։

Մեր կռնակէն պաղ բան մը մեր սիրտերը կը զարնէր, երբ աղջկան առջեւէն երիտասարդ կը հալէր, ու հով կ՚ըլլար ձիուն հետ։

Ու որքան հմայուած կ՚ըլլայինք, երբ առանց գիտնալու բոլորս մէկ.

— Վա՜շ…,— կը պոռայինք աղջիկին հետ, որ փայտէ գաւաթը կըրակին մօտ դրած՝ ատենը ջուրը ոսկի դարձած կը տեսնէր։

Ու հօրքուրս կը պարպէր փարչը ամբողջ, ու անոր նեղկուկ բերանէն խոշոր–խոշոր, կլոր–կլոր ոսկիները իրարու հետ իյնալէն կը թափէին իր ոտքին։

Քիչ չանցած՝ հօրս հազը կը լսէինք ախոռէն։

Հօրքուրս հազիւ կը յաջողէր մեր անհամբերութիւնը զսպել, չորուկ մատները կը քակէր գանձին վրայէն, մէկ ձեռքը պօղին ճեղքէն ներս խօթելով՝ կ՚առնէր իւրաքանչիւրին բաժինը ու.

— Բարի՛ Կաղանդ, Աստուած ամէն տարի հասցնէ աս օրին,— ըսելով կը կենար։

Առաջ անցնելու կռիւը, իրար հրելու խենդութիւնը վերջ կ՚առնէր մէկէն, երբ հօրս հասակը շուքի մը պէս գծուէր կէս բացուած դրան մէջ։

Ու կարգով կը մօտենայինք հօրքուրիս չորուկ ձեռքին ու կը պագնէինք զայն հաճոյքով։

Ու ամէնէն վերջը երկիւղած յարգանքի մը մէջ կը տեսնայինք հայրս, որ հին գտակը հանած գլխէն, ծունկի կուգար պառաւին առջեւ՝ պագնելու անոր երկու ձեռքերը.

— Մեծնա՛ս, Աստուած զաւակներուդ թագ ու պսակին հասցնէ:

Ու հօրքուրիս ձայնը այս անգամ դողացող, յուզուած բան մը կը կաթէր իր մէջէն:

Կաղանդ – Ամանոր, Նոր տարի
պօղ – գոգնոց
պաստեղ – քաղցր լավաշ
գուղ – փայտյա փոքր աման
քակած – քանդած, արձակած

ԾԱՂԻԿԸ

Ես կը յիշեմ, լերան մը՝ ոտքէ հեռու մէկ խորշը, կար ժայռերու ընտանիք մը, բաւական մեծ, գրաւելու համար ամբողջ մէկ երեսը բլուրին, որ կը կոթնէր անոր:

Գազաններ ու վայրի թռչուններ վախի համբաւ մը բերած էին այդ քարերուն, որոնք, մութ երեսներով, կոկոզած իրենց հաստ փորին վրայ, ամայութիւն կը նետէին իրենցմէ վար:

Հոն կ՚երթային, երբ մութ ըլլար հոգիս: Ու իմ հոգին մութ է եղած նոյնիսկ իր արշալոյսին:

* * *

Քարերը կը մտնէին շատ խոր, լեռնէն ներս, ու անոնց ոտքին կանանչը կար նուաղկոտ ու կտրարուն, յատուկ՝ քշուող հողերուն, որոնք իրենց հոսումին մէջ, արեւէն բեղմնաւոր՝ արագ կեանքի մը սրտառուչ գեղեցկութիւնը կ՚արձակէին ու կը ծածկէին արհաւիրքը, որ հոդ պարտուած կը քնանար:

Ու անկէ վեր կը դառնար, քարերու շրթունքին կտոր–կտոր ըլլալով, այն վախկոտ ճամբան, որ կը տանէր բարձր ժայռերուն իսկական ամբարտակը:

Սրտառուչ բան մը կար այդ ճամբուն տառապանքին մէջ: Անդունդ այնքան մօտիկ, անոնց հակած իր խեղճ կռնակին մէկ երեսովը, ան կ՚ապրէր, կը տեւեր քարերու ճեղքին մեծցող քանի մը տունկերուն դալարովը, որոնք հոտ կը ծնէին ու կը մեռնէին իրենց մենութեանը մէջ ընկղմած վանականներուն լրջութեամբը:

Ու դարերուն քայքայումին հանդէպ ճամբան յաճախ կտրտուած՝ անդունդ ինկած, բայց նորէն գտած էր իր թելը: Հիմա վախով գեղեցկացած հաճոյք մըն էր ինծի համար քայլերս տալ այս սոսկում տանող գիծին, որ ապառաժին մարմինը պատռելով՝ միշտ կը դառնար ու կը բարձրանար:

* * *

Քարերուն տունը:

Մինչեւ հիմա չպատմուող վախ մը կուգայ աչքերուս դէմ, երբ միտքս կը տանիմ անոնց ահաւոր վերյիշումին:

Հոն հետքը չկայ հողին: Ապառաժը բարկացած իր զանգուածը վեր կը նետէ ու կը սառի միջոցին մէջ: Իրեն կռնակ տուած ուրիշ կոյտեր իրենց բեկբեկուն սեւովը կ'երանգաւորեն այդ մռայլ ամբողջը: Ու քարերը իրարու դէմ ուս ուսի, իրար խածած՝ իրենց ժանիքներուն բովանդակ. սաստկութեամբը մնացորդները կը թուին հսկաներու անյիշատակ պայքարի մը:

Ճամբան միշտ վարանոտ, միշտ չարչարուած միջոցը գտած է, այդ սպառնալիքին մէջ, քաշելու իր նիհար գիծը, որուն կը հետեւին դալարները նոյնքան ազազուն թուփերու:

* * *

Շատ անգամ կ'երթայի քարերուն տունը: Ճամբու սարսափը կը փոխարինուէր լերան մէջ միս մինակ ըլլալու, մարդերուն հոտը չզգալու վայրագ հաճոյքովը:

Քարին բարձրագոյն կատարը լայն էր, խոռոջաւոր կռնակով մը, որ կը հակէր դէպ առաջ:

Հոտ կանանչէն, կեանքէն բան չէր տեսնուէր: Մինակ՝ արեւին դէմ եփած քարերուն վրայ հեւացող գոլ մը կը ծանրանար. քարերուն տեսանելի շունչին նման հանդարտ ու մեծավայելուչ:

Ու քարին ամէնէն չոր մէկ անկիւնը, որ պարապին վրայ էր գծուեր, կը կենար խոտ մը լերան՝ անունը անյայտ այն էակներէն, որոնք իրենք իրենց կը ծնին, կը մեռնին առանց որ, դարերու ընթացքին օտար կեանքի մը հպանցը ճանչնան իրենց իրանին վրայ:

Ձմայլանք կուգար ինծի, անդունդին բոլոր արհաւիրքէն՝ մինակուկ ոտքի՝ այդ խոտին հանդէպ:

Թիզ մը հասակը փոխանակ իր ընկերներուն ուղիղ սլացքին՝ չարչարագին գալարը ունէր հովերուն խենդութեան դէմ մաքառումին, որ փոխանցուած ըլլալու էր անոր մռայլ առհաւութեամբ մը:

Իր մէկ ցողունին վրայ, մորթը փոխանակ ըլլալու վարդագոյն ու մետաքսաթերթ, ինչպէս իր ընկերներն էին վարը, քարերուն ներքեւ, հողերուն փաթաթուն զգուանքին հետ երջանիկ ու աղուոր, պատռտուած բան մըն էր, մուրացիկ պատանք մը, որ ցանցառ տերեւներուն մօտիկ միայն կը գրկէր անոր տառապած իրանը: Իր տերեւները, որոնք տեսակին մէջ այնքան շնորհալի սանդուխով մը ցողունին շուրջը կը փաթթուէին, ձգած էին զայն, ու սեռին յատկանիշը կը սրբուէր կարծես իրմէն: Ու մէկ–երկու ձուածիր բաներ իրենց դեղին աղեղովը կը մնային խոտին վրայ՝ անոր ծուռիկ մէջքին կապելով իրենց դեղնոտ կանանչը:

Ու խոտը, այսքան զրկուած, այսքան մոռցուած ու մինակ հովերուն դէմ, իր արմատները փակցուցած էր քարին ճեղքերուն, որոնք կայծակներէ ակօսուած, լեցուած էին նորէն դարաւոր աւազով ու արծիւներուն ծիրտովը: Ոսկորներ ճերմկած ու կարմրորակ, պարտկուեր էին գիծերու նեղ գերեզմանին մէջ ու պատրաստեր գետինը պատահական կեանքի մէջ:

Ու կեանքը կար հոտ: Տղայութեանս ատեն, ան գարունին կը շտկէր քիչ մը՝ կոտրած իր մէջքը, տերեւները դանդաղօրէն կը դառնային անոր ցողունին՝ սանդուխի անհաւասար աչքերը դնելով անոր: Յետոյ կը մոռնայի զինքը: Ձմեռը կարելի չէր իր հետքը ստուգել, քանի որ աշունէն առաջ ան արդէն կը ձգէր իր տերեւները ու պզտիկ, չարչարուած հասակը կ’առնէր կը պառկէր:

* * *

Խոտերն կը սիրենք մեր պզտիկ օրերուն: Անոնց վրայ կը պառկինք արեւին մէջ, զանոնք կ’այրենք բոցին հաճոյքին համար, կը քաղենք տասնոցի մը գինովը: Բայց ո՞ր օր կը տեսնանք անոնց բանաստեղծութիւնը:

Աւելի ետքը, երբ լեռներուն մէջ պտոյտը կը հալածուի յիշատակներով, երբ սարերուն վրայէն աչքդ կը փախչի տուներուն գոցած գեղեցկութեանց, խոտերը կը մեռնին դարձեալ մինակ:

* * *

Ամառ մը ժայռերուն տունն էին նորէն:

Խոտը եկեր էր դարձեալ ու այս անգամ պսակո՛ւած:

Գերազանց քաղցրութիւն մը կար ծաղիկի այն դեղնութեան մէջ, որ կը լուսնար անոր գագաթին: Մեծ խանդաղատանքով մը ծռեցայ ու սկսայ դիտել:

Տունկը աւելի քան երբեք նիհար արթնցեր էր այս գարունին: Իր կաշիէն պլորուած թուղթի կտորներ փրթած էին: Հասակը իջած ու մէջքին կուզերը ընդլայնուած: Իր արմատները արիւնը առնուած միսերու նման դուրս կը մնային ճեղքերէն: Անտարակոյս հովի անսովոր հոսանք մը դղրդեր էր անոր կազմը:

Գրեթէ լերկ իր իրանիկը հիմա ծռած էր անդունդին: Իր վրայ եղերական համակերպութիւնը կար մահուան: Խոտը գիտէր ադ: Տերեւները չէին երեւար,— եկա՞ծ թէ գացած, չէի կրնար գիտնալ, ու միայն, գագաթին մօտիկ, ծաղիկին վահանումին համար կը մնար նոր ծլած, պզտիկ, անարիւն փունջ մը, որուն ծոցը կը բացուէր պսակին դեղինը:

Հովը կրնար գալ: Տունկը իր զոհը ըրած էր կեանքին: Բայց դեղին ծաղիկը, այդքան զրկանքի, ոգորումի, սպառումի արդիւնք ինկեր էր հոն:

Ու պսակուած խոտը ուրախ կը մեռնէր:

* * *

Չեմ գիտեր, ինչո՞ւ այս պատկերը կը գրեմ հոս:

կոկոզել – փքվել, գոռոզանալ

առհաւութիւն – նախնիների վերացած հատկանիշների երևան գալը

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

ՏԱՂ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻՆ

Քեզ, Հայ լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը նման…
Մեր Անցյալին թանձրախիտ ստվերներուն մեջ՝ կարծես
Մեյ–մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ’երևան,
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղե՛մ զանոնք ես…

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզո՛ւ…
Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու
Եվ կը մընաս միշտ առույգ, հին ավիշովդ կենսահորդ…

Ծառերուդ մեջ հովանուտ կ’երթամ խինդով մ’անսահման,
Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,
Զարմանալով, թե ինչպե՛ս դուն մնացիր՝ երբ սաստիկ
Քամին քո շո՛ւրջդդ փչեց և տապալեց ամեն բան…

Մեյ–մեկ պտուղ գույնզգույն՝ ամբողջ բառերդ ահա՛,
Հյութե՛ղ բառերդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արևներ,
Բառե՛րդ, որոնք այս պահուս շրթա՛նցս վրա եմ բռներ,
Բառերդ, որ քիմքըս կ’օծեն և կ’սփոփե՛ն սիրտս հիմա…

ավիշ – նյութ, կենսահյութ

ՄԱՍԻՍԻՆ

Դուն Մասի՛սն ես… Եվ կը նայիմ, կը նայի՛մ քեզ,
Անհագ աչքով, մինչ սիրտըս ալ ա՛չք մ’է կարծես՝
Որ ընդլայնած՝ քեզ կը գրկե ամբողջապես,
Քեզ կը ծըծե՝ զերդ ջուրը հո՛ղն արևակեզ…

Կը տեսնե՞ս զիս, ո՛վ Մեծ Վկան մեր անցյալին,
Եվ կ՚զգա՞ս, թե նայվածքիս մեջ որքա՞ն նայվածք
Եվ հոգվույս մեջ գահակործան քանի՞ աստվածք
Քու անսասան գահիդ առջև կը կողկողին…

Արշալույսին մեջ ծիրանի կը հագնիս դուն,
Ջինջ օդին մեջ կը ծփծփաս, բայց չես ժպտուն,
Քեզ գրաված է հիշատա՛կն հին դարերուն…

Եվ տխո՛ւր ես, զի իշխանաց փառապսակ
Հսկայաքայլ տեսար անցնի՛լն ոտքերուդ տակ,
Եվ զի հույսի հորիզոններն են բոլո՛ր փակ…

ՀՈՆ ՀԵՌՈՒՆ, ԱՀԱ…

Հոն հեռուն, ահա,
Մասիսի կողեն
Քու ակըդ նորեն
Բխած կը սուրա.
Քու առուներդ ենք,
Ո՛վ հորդ Հայություն,
Կ՚աճիս, կ՚ուռիս դուն,
Եվ կը լեցվինք մենք…
Մեր շուրջն անապատ,
Մեր դեմն են ժայռեր,
Բայց հավատքը մեր
Անապատնապատ
Կ՚ընէ, կը հարթէ
Ժայռն աղետալի
Եվ կը թավալի
Ձերդ գլան մ՚երկաթե…
Մենք՝ քու զավակները,
Սրտով սիրակեզ
Ահա կուգանք քեզ,
Հայաստա՛ն, որ զերդ
Մայր մը ճշմարիտ
Մեզ կը կանչես արդ…

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարենալու համար ապրիլ այսուհետև,
Օդի, ջուրի, հացի նման՝
Մենք պետք ունինք Հպարտության,
Պետք ունինք, որ մեր անունն ալ սավառնաթև
Երկրե երկիր թռչի երթա.
Հնչեցընել կ’ուզենք զանի
Ինչպես շեփոր մ’երկրի վրա,
Կ’ուզենք, որ այն ծածանի
Ինչպես դրոշ մը պայծառ.
Եվ ինչպես ջա՛հ մը կուզենք՝
Որ ան ըլլա բոցավառ.
Եվ ինչպես զենք՝
Մ’ան պատկառանք ազդե և ահ,
Եվ իբրև գո՛րծ մ’արվեստի՝
Ըլլա հանուրց պաշտելի
Եվ ըլլա անմահ…

հանուրց – բոլորի կողմից

ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

Կ’ելլե ճաճանչ մը, կարծե՛ս, այս անհամար ձեռքերեն,
Ձեռքե՛ր՝ մեծցած մինակնին, ո՛չ շատ, դեռ թույլ, դեռ անմեղ,
Դեռ ոչ ոքի չխառնած կամ չխըզած վատորեն.
Բախտին թելերը՝ ձեռքեր, սիրակարոտ, սիրազե՛ղ…

Ձեռքեր՝ հազիվ թե հիշող ջերմությունն հոր մը ափին,
Որ զույգն իրենց կը ծածկեր՝ երբ որ թաթիկ էին դեռ…
Տախտակներու վրա չոր, ձեղունների տակ ցրտին
Հիմա սառող քովե քով՝ հայ որբերու ո՛րբ ձեռքեր…

Ամոնք երբեմըն հանկարծ կը խըլըրտին գաղտնապես,
Ամոնք բռունցք կ’ըլլան մերթ, կը զարնըվին իրարու,
Կ’ըլլան դրոշակ, կը բացվի՛ն հաղթանակին վազելու…

Կը խլեն գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.
Մարդոց ոճիրը զանոնք զերդ մեյ–մեկ սուր է դարբնած.
Ա՛հ, ջրդեղե՛, կարծրացո՛ր, մեծցոր զանոնք կա՛ծր Աստված:

ձեղուն – տանիք, կտուր

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս՝
Ինչպես քարայր մ’ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս…
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես՝ նա՛ւ մ’է ծրփուն…

Եկեղեցին Հայկական ես աչքրս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադեմ,
Իր սեղանէն մըխացող գուլայ–գուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխռով…

Եկեղեցին Հայկական բարձրը բերդն է հաւատքին
Իմ պապերուս, որ հողէն զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
Ու թաղուեցա՛ն անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ…

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ’է բանուած,
Որուն ետև՝ սրկիհին մէջ, կ’իջնէ ինքը Աստուած,
Որուն առջեւ գլխահակ կուգայ իմ ազգրս ամբողջ
Հաղորդուիլ Անցեալին հաց ու գինով կենսառողջ…

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ’է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր և բոց,
Ու տօթակէզ ցերեկին անտա՛ռ մըն է ստուերոտ,
Ուր շուշաննե՛ր կը ծաղկին Շարականի գետին մօտ…

Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի…
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմնոյն

Զրրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշոյն
Եւ զանգակներն են բոմբիւն, և երգն է մի՛շտ Յաղթութիւն…

գոց – փակ
սկիհ – արծաթյա թաս, որի մեջ լցնում են նվիրագործելու գինին
տօթակեզ – սաստիկ շոգից այրվող
բոմբիւն – արկի թնդյուն, դղրդյուն

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

ՈՐԲՈՒԿԸ

Այնպես մութ էր այն գիշերն,
Որ իրարու ականջեն
Կփսփսային հրեշտակներն՝
«Ինչպե՞ս իջնենք երկնքեն»:

Այնպես ցուրտ էր այն գիշերն,
Որ սուր ճաղկին տակ հովուն
Կդողային մերկ ծառերն՝
Արձըկելով ողբ մ'անհուն:

Երջանիկներն իրենց տան
Մեկ, շուրջ շողուն սեղանին,
Կաղանդին տոնն անանման
Կտոնեին ցնծագին:

Փողոցի մը մեջեն լայն
Որբ տղա մը մին–մինակ,
Ստվերի մը պես անձայն
Կ'անցներ խոհուն, գլխահակ:

Ծանր թախիծ մ'իր դեմքին
Վրա մռայլ կփըռվեր.
Գիշերն աղվոր Կաղանդին
Իրեն մահվան էր գիշեր:

Վերցուց աչքերն ու տեսավ
Տուներուն մեջ լուսավառ
Զվարթություն այն ամբավ,
Զոր Կաղանդն հոն կտեղար:

Եվ իր փոքրիկ խեղճ հոգին
Այնպես խորունկ հուզվեցավ,
Որ աչքն հառած երկնքին՝
Լալով աղոթք մը ըրավ։

Հանկարծ թանձր մութին մեջ
Շուշանի պես սպիտակ
Բացած թևեր լայն ու պերճ՝
Երևցավ վեհ մեկ հրեշտակ։

Գութն էր, պաշտպան խեղճերուն,
Զոր կասեցնել չեն կարող
Ցուրտն ու հովն ու մթությունն
Եվ Մա՛հն իսկ, Մա՛հը լափող։

— Ըսե՛ ինձ, ո՞վ հեք մանկիկ,
Որ դառնորեն կ՚արտասվես,
Ի՞նչ կբաղձա քու սրտիկ,
Ըսե՛, կարող եմ տալ քեզ,

Աղվոր հագո՞ւստ կամ պատկեր,
Շաքա՞ր և կամ խաղալի՞ք,
Կ՚ուզես անուշ խորտիկներ
Կամ հյութալից համեղ միրգ։

— Երբ իմ մայրիկս ողջ էր դեռ,—
Ըսավ որբուկն հրեշտակին,—
Զիս կգրկեր, կպագներ
Գիշերն, երբ գար Կաղանդին։

Բարի՛ հրեշտակ, չեմ ուզեր
Խաղալիք կամ զգեստ մաքուր,
Չեմ ուզեր միրգ կամ պատկեր,
Մորըս համբո՛ւյրն ինծի տուր։

«Ծաղիկ մանկանց» հանդես, 1889 թ.

ԱՌՋԻ ՁՅՈՒՆ

Առջի ճերմակ, առջի ձյուն,
Ավետաբեր ձմեռվան,
Ողջո՛ւյն, քեզ, ո՛վ խնդություն
Հոգիներուն կուսական:
Շուշան թերթեր կաթնագին,
Խոլ փետուրներ կարապի,
Անմեղություն երկնքին,
Որ շիթ առ շիթ կթափի:

Ո՜վ ցնծություն, հոյլ ի հոյլ
Թիթեռնիկներ սպիտակ
Կթռչըտին, համր ու թույլ
Թռիչով մ'անվերջ պտուտակ:

Տուներուն վրա ճերմակ շալ,
Գետինը՝ գորգ սպիտակ,
Ճերմակ տերև դյուրահալ՝
Մերկ ծառերուն վրա կուտակ:

Առջի ճերմակ, առջի ձյուն,
Ավետաբեր ձմեռվան,
Ողջո՛ւյն քեզ, ո՛վ խնդություն
Հոգիներուն կուսական:

խոլ – կատաղի, ուժգին, մոլեգին
հոյլ – երամ, խումբ
դյուրահալ – հեշտ հալվող

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

1

Մեծ մայրիկեն սկսյալ, որ իր ծերուկ հոգնած աչքերը գորովոտ թարմ ժպիտով մը վառած՝ զվարճացող հետաքրքրությամբ մը կդիտե, մինչև տան սպասավորը, որ կիսաբաց դռնեն զարմացած նայվածք մը ներս կսահեցնե, ընտանիքին բոլոր անդամները, հայր,

մայր, քույրեր, ժողովված շարված են սեղանին քով, ուր փոքրիկ Զարեհը, յոթ–ութ տարեկան տղեկ մը, իր առաջին նամակը կգրե:

Երկու ամիս է, որ սկսած է գրելու վարժություն ընել, և հիմա՝ Կաղանդեն մեկ երկու շաբաթ առաջ, իր ծնողքը կուզեն, որ անոր գրելու սկզբնավորությունը այդ նամակով ըլլա, նամակ մը, որ պիտի ղրկվի օտար երկիր նոր մեկնած իր մեծ եղբոր:

Հայրը, պզտիկին ուսին հակած, տոն կուտա, բառերուն հետ գիրերն ալ մեկիկ–մեկիկ զրուցելով, անոր վարանող թաթիկն իր ձեռքով ուղղելով, խնդալը չի կրնար բռնել՝ ամեն անգամ, որ շատ խենթուկ ձաբռտուք մը կելլե անվարժ մատին տակեն. և ամբողջ ընտանիքը, ժպիտ մը շրթունքին վրա, կհետևի այդ համր աշխատության:

2

Եթե կիրակի օրով փոքրիկ անառակը խաղերը ձգեր, եկեր թուղթին վրա քիթը ծռելու հանձն առեր է, պատճառը ապահովապես աղբարիկին սերը չէ միայն, նախ՝ այդ դժվարին ու քիչ մըն ալ ձանձրալի աշխատության փոխարեն սպասված նվերն է, և հետո՝ անձնասիրության այն փաղաքշումը զոր կունենա, որովհետև պզտիկներն ալ ունին իրենց անձնասիրությունը, որ հեռու է պզտիկ ըլլալե՝ իր շուրջ խմբված, իրմով զբաղված, իր հաջողությանը ծափահարելու պատրաստ տեսնելով ամբողջ ընտանիքը:

Եվ արդեն, սկսելով բազմահմուտ գիտնականի ձևեր առնել, հոնքերը արվեստական լրջության արտահայտությամբ մը պոստած, մեկ ձեռքով թուղթը բռնած, որպեսզի չերերա, և մյուսով, կամաց–կամաց, ամեն գիրին կանգ առնելով, ճերմակ էջը կմրոտե ծուռմուռ գիծերով, ամեն մեկ տողին կենալով՝ գլուխը դեպ ետև տանելու և աչքովն ամբողջությունը գրկող նայվածք մը նետելու համար:

Ու հայրիկը, մանկական ուրախությամբ մը համակված, կշարունակե բառերն ու գիրերն ըսել՝ հատիկ–հատիկ հետևելով տղեկին տատամսոտ ջանքերուն. անոր գլխուն ետև՝ ձեռքին մեջ խեղդելով երբեմն քրքիջ մը, զոր չի կրնար զսպել:

3

«…Երթալեդ իր վեր ամենուս սիրտը կոտրած է. դուն մեր հետը չըլլալուդ համար այս տարվան Կաղանդը… (Զարեհ ականջը կտնկե այս բառին) այս տարվան Կաղանդը շատ ուրախ չպիտի անցընենք…»:

Զարեհ գրիչը կնետե:

Ինչ… ինչո՞ւ… Ամենը աղեկ, բայց ատիկա, չէ՞, ատիկա երբեք պիտի չգրե: Ինչ ըսել է, եղբայրը մեկնած ըլլալուն համար ինքը ինչո՞ւ պիտի զրկվի Կաղանդի ուրախություններեն…

— Ինծի նվեր չպիտի՞ տաք. անուշապուր չպիտի՞ եփենք…

Իր ամենեն փափուկ, ամենեն զգայուն կողմեն վիրավորված՝ Զարեհի այդ բոլոր պարտավորյալ ճանձրույթին ու տաժանելի աշխատանքին գլուխ ծռելե հետո հիմա չի հանդուրժեր այդ գաղափարին, և ամբողջ զորությամբը կբողոքե՝ պնդելով, որ չպիտի գրե ատիկա, չէ՞, երբեք չպիտի գրե:

Իր շուրջը ամենքը, ա՛լ անկարող ինքզինքնին զսպելու, կողերնին բռնելու աստիճան կխնդան՝ մանկական եսասիրության այդ միամիտ վախեն մեծապես զվարճանալով: Եվ երբ քրքիջներու ժխորը կդադրի, երբ ամենքը հստակ և համոզիչ բառերով կբացատրեն, թե ատիկա աղբարիկին հաճույք պատճառելու համար ըսված խոսք մըն է, և թե Կաղանդը նորեն շենքով–շնորհքով պիտի տոնեն, միմիայն այն ատեն է, որ Զարեհի գրիչը դարձյալ ձեռք կառնե և կշարունակե գրել վտանգավոր պարբերությունը:

ձաբռտուք – խզմզոց
աղբարիկ – եղբայրիկ
տատամսոտ – տատանվող, վարանող
աղեկ – լավ
ատիկա – դա, այդ

ՄԱՅՐԸ

Մայթին վրա՝ խանութի մը առջև, շուն մը կծկտած է՝ իր քունի մը լակոտներովը շրջապատված: Անոնցմե մեկը թրամվայի գիծերուն վրա կպտտկի, ցռուկը՝ գետինը հոտվտալով:

Սույլ մը կերկննա, ու թրամվայը կմոտենա: Լակոտը գիծերուն վրա է դեռ, ցռուկը՝ վար: Թրամվայը կանցնի: Ցավագին ոռնոց մը կլսվի անիվներուն տակ: Լակոտը քուրջի պես տափակցած՝ մնացած է հոն:

Մայրը կդիտեմ անձկությամբ: Կցատկե տեղեն, կնետվի իր զավկին վրա: Լակոտը չէ արյունած, բայց դիակնացած է արդեն, որովհետև ողնաշարը կոտրած է: Վրայեն ողջ կթվի դեռ, բայց չերերար: Ու մայրը, խղճուկ կաղկանձումներով, բերանը կառնե անոր մարմինը, որ երկու կողմեն կկախվի, և կբերե մայթին վրա:

Նախ երկայն նայվածքով մը անոր քովիկը կսպասե: Լակոտը չերերար: Այն ատեն ցռուկը կմոտեցնե, կհոտվտա զայն, կլիզե, գլուխն անոր կքսե, թաթերովը զայն կշարժե: Լակոտը չերերար:

Ա՜խ, տեսնելու է իր հուսահատությունն այն ատեն: Պոչին վրա կնստի ու տխուր նայվածք մը կպտտցնե դիտողներուն վրա, որոնք շարվեր են դիակին շուրջը, օգնություն ուզելու ձև մը ունի, կարծես ճար մը կհայցե իրմե գերադաս էակեն, մարդեն իր զավկին բուժման համար, ճարը, զոր իր անասունի միտքը չի զորեր գտնել:

Հետո նորեն կսկսի լզվռտուքը, իր հիմար ճիգը զավակն արթնցնելու, որովհետև չի կրնար հավատալ, չի կրնար հասկնալ, որ մեռած կըլլա իր զավակը:

Եվ ի՜նչքան սրտաշարժ է իր ցավը: Զուտ մայրության ցավն է, անասնական խորունկ զգացում մը, որ միսին մեջ ունի իր արմատները: Անձին մեկ կտորին կորուստն է, որ տրտմություն կբերե, տրտմություն մը ավելի թանձր՝ անասունին մեջ, որ չի հասկնար ատիկա, չի կրնար ատոր համոզվիլ և ոչինչ ունի մխիթարվելու համար:

Ու կդիտեմ խեղճ մայրը, որ ամբողջ մարմինովը կպաշարե իր զավկին դիակը, զայն կանհետացնե իր փորին տակ՝ ուզելով իր տաքությունը անոր հաղորդել, լուռ հիմա, ա՛լ անշարժ, ու մեր վրա հառած իր խոշոր բարի աչքերը, որոնց մեջ վիշտը մարդկային բան մը ստացած ըլլալ կթվի, և որոնք կուլան:

անձկությամբ – մեծ կարոտով, փափագով
կաղկանձ – ոռնոց

ԾԱՂԻԿՆԵՐ ՄԱՅՐԻԿԻՍ ՀԱՄԱՐ

Գարնան աղուոր եղանակին կը ծաղկի բնութիւնը: Դաշտերը կը փռեն իրենց կանաչ թաւիշը, որուն վրայ կը փալփլին ցօղի կաթիլները: Այդ թարմ կանաչին մէջէն, իրենց գլխիկները վեր բարձրացուցած, կը ժպտին գոյնզգոյն ծաղիկները: Ի՜նչ երջանիկ են թռչնիկները: Անոնք օդին մէջ կը թռչին՝ ազատօրէն շարժելով իրենց թևիկները:

Գարնան պայծառ առտու մը դաշտ գացի՝ ծաղիկներ քաղելու: Ցօղով ծածկուած ծաղիկները կը փայլէին արևի ոսկեգոյն ճառագայթներուն տակ: Ծռեցայ և ուզեցի քաղել զանոնք: Բայց պզտիկ ծաղիկները իրենց անուշ ձայնով ըսին ինծի.

— Խղճա՛ մեզի. այս բարի արևին տակ ապրիլը այնքան հաճելի է: Մեղմ հովիկը այնքան քնքուշ կը համբուրէ մեզ: Դեռ շատ պզտիկ ենք, կ'ուզենք ապրիլ. մի՛ քաղեր մեզ:

— Սիրո՛ւն ծաղիկներ,— ըսի անոնց,— այսօր Մայրիկներու Տօն է: Ես կ'ուզեմ ձեզմով շնորհաւորել մայրիկս: Թո՛յլ տուէք ձեզմով ուրախացնել անոր բարի սիրտը:

Այն ատեն ծաղիկները ուրախութեամբ ու սիրով երկնցուցին իրենց քնքուշ ցօղունները:

ԳԸՆԱ՛

Հարություն զավկիս

Դյութված հոգիս բախտեն դժխեմ,
Անապատին մեջ հրայրյաց,
Ա՜խ, ալ չիպ՚տի՛ վերատեսնեմ
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Եղնիկի պես օր մը երբեք
Հին երկնային բարձունքն ի վեր
Չիպ՚տի՛ սուրամ ու սրտաբեկ
Պիտի հատնի՛մ հոս կարեվեր…

Ես կը մխամ մինչ կարոտով,
Հոգիիս բոցը չի մարած,
Ու կ՚որոնեմ սրտախռով
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Ամպեր կ՚անցնին ծովեն անդին,
Ու փոթորիկը խելահեղ
Կը սլանա որոտագին,
Անդունդներու մեջեն ահեղ:

Ո՞ւր կը դիմեն ամպ ու հովիկ,
Երգն ամայքին, հևքն օվկիանին,
Ո՞ւր կյանքն ու իր տրտում ալիք,
Հին երազներըս ո՞ւր գացին:

Երգե՛, հոգի՛ս, երգդ ո՞ւր մնաց,
Հանձնեցիր զայն ո՞ր կոհակին,
Միայն մենիկ ու տխրամած
Անբախտնե՛րը հոս երգ չունին:

* * *

Գեթ դո՛ւն գընա, տղա՛ս, դուն, որ միասին
Հոս այրեցա՛ր արևներու բոցին տակ,
Որ անտրտունջ բաժնեցիր հետը կյանքին
Լեղի բաժակ:

Սուրա՛, ամպին, փոթորկին հետ հեռացի՛ր
Ամայության կոհակներեն շատ հեռուն,
Հորիզոնեն անդին անհուն ու անծիր,
Վես Տավրոսի լեռներուն:

Գտի՛ր անբիծ ձյունն ու մշուշն հայրենյաց,
Տո՛ւր ճակատդ ցուրտ սառուցիկ հովերուն
Ու ջիղերով պողպատի պես ամրացած՝
Ողջունե նոր մի գարուն:

Ձիս մի՛ հոգար: Ես քայլերով դողդոջուն
Կրնա՛մ ելլել բաժանումի Գողգոթան,
Դուն հին, մեռած երազներուս Հարությո՛ւն,
Փակե՛ աչերս ու գընա՛…

Վերաշինե՛ տընակս ավեր ու լքված,
Համբույրներըս տուր վարդերուն սիրահմա
Ու դեպ անբիծ ձյունն ու մշուշն Հայրենյաց
Փակե՛ աչերս ու գընա՛…

դժխեմ – անգութ, դաժան
սրտաբեկ – սիրտը կոտրած, վշտահար
կարեվեր – խոր խոցված, խոր վիշտ պատճառող
անդին – հեռու, մյուս կողմը
լեղի – դառն

ՎԱՐԴԵՆԻՆ

Իմ հայրենի բուրաստանիս մեջ սիրուն
Ու մարմարե աղբերակի մ’եզերքին,
Վարդի մեկ ծիլ, զերդ հուշիկ հին օրերուն,

Դեռ չի դիմած պանդխտության դառնագին,
Իմ մատներով տնկեցի։

Մեկ արշալույս հազի՛վ կեցա իրեն քով,
Տերևները խամրած, հովեն կը դողար,
Մեկ անգամ ջուր տվի իմ տաք արցունքով
Ու մեկնեցա դեպ ուղիներն վշտահար,
Օտարության, տաժանքի։

Ոչ մանկական երգերս օրորն եղան իր,
Եվ ոչ ալ ինք բուրեց կյանքիս գարնան հետ,
Չի քաղեցի իրմե ծաղիկ մ'իսկ կարմիր
Իբրև նվեր իմ երազի՛ս սիրավետ,
Ու պաշտումիս լուսածիր։

Տընակս ինկավ ու կըքեցա՛վ վշտահար,
Մամուռներով լցավ աղբյուրն մարմարի
Եվ ա՛ լ չերգեր,— այլ վարդենին միշտ դալար
Բյուր վարդերով կը սարսըռա, կը վառի
Իղձերուս պես անհամար։

Ամայքներուն մեջ դուն ինչո՞ւ կ'ապրիս դեռ,
Մեկ գարունե դողդոջ կ'անցնիս մյուսին,
Ու զեփյուռին կուտաս աղվոր քու թերթեր,
Ինչո՞ւ դալար, երբ ձայները լռեցին,
Ու սոխակներ չե՛ն երգեր…

Ծաղիկներըդ որո՞ւ ճակտին կ'սպասեն,
Դո՛ւն, իմ ավեր հայրենիքիս վարդենին,
Հույս չի ծագեր մութ ամպերու քառսեն,
Ու հավատքին նշույլները կը հատնին
Հոգիին մեջ վշտագին…

զերդ – ինչպես, նման, պես
ամայք – ամայի վայր

ՅԱՐԱՏԵԻԷ

Երբ ամէն մարդ աշխարհի մէջ
Բախտէն աւար մ’առած քալէ,
Ի՞նչ շահ ունիս, հէք պատանի,
Անմիտ լացէ ու սգալէ…

Տե՛ս, կարճ են կեանքն ու իր ժամեր
Հեգնոտ՝ բերեն ճակտիդ ալիք.
Մ’ըլլար յիմար ու խաղալիք,
Գնա՛ յառաջ, միշտ դէպի վեր:

Որբ ես եղեր, ի՞նչ փոյթ քեզի,
Բիւրաւորներ կան քեզի պէս,
Պահէ՛ ցաւերդ սրտակեզ.
Արցունքն հոգւոյդ մէջ թող հոսի:

Օ՜հ, գարունէ գարուն անցիր
Ծիծառի պէս կամ զերթ թիթեռ:
Ծաղկէ ծաղիկ, մեխակ վարդեր,
Դու հորիզոնն ունիս անծիր:

Սին, անիմաստ վիշտերը թո՛ղ,
Նոր եռանդով փարէ կեանքին,
Կ’արտասուեն վատն, վհատն ու սին.
Դիւցա՛զն եղիր բախտին յաղթող:

Արամ Անպոնյանի «Գանձարան» դասագրքից, Կ. Պոլիս, 1926

հէք – խեղճ, թշվառ
վհատ – հուսահատ
սին – դատարկ, անիմաստ

ԴՐԱՑԻ ԿԱՏՈՒՆ

Երբեմն եկո՛ւր, կատո՛ւ,
Դուռնեն նայելու…
Երբոր անոթի ես,
Իմ տունս շիտակ.
Ու մլավումով… երկար
ու ցավագին
Երգե մենությանս մեջ,
Ուր վիշտերը կապրին…
Միտքս քաղցր ու դիվային
Տեսիլներ կփնտռե,
Երբեմն եկո՛ւր, թո՛ւխ կատու,
կանաչ նայվածքով,
Դուռնեն նայելու…:
Ես ոսկոր պիտի տամ քեզի,
Եվ ձուկի պոչեր.
Որպեսզի նիհար կողերդ
Խնջույք մը ընեն…
Եվ տխուր հապճեպով
Ճաշդ դիտեմ ես.
Մի՛ վախնար, ես կը խորհիմ.
Ես չեմ շարժիր բնավ.
Ափսոս, որ չեմ շարժիր…
Բռնելու քեզի,
Ո՛վ անծանոթ աղքատ կատու,
Շոյելու համար վտիտ ծոծրակդ,
Ուրկե դիվայնությունդ կծնի:
Իմ տունս եկուր երբեմն.
Ես ուտելիք պիտի տամ քեզի.
Ձուկի պոչեր

Ու ոսկորներ հավու:
Եկո՛ւր, աղքա՛տ կատու,
        կանաչ նայվածքով,
Դուռնեն նայելու…

(ձեռագիր)

ԳԵՏԸ

Զայնն իր ջուրերուն
Ու խավարն հզոր
Լերանց իղձն է, զոր
Կը տանի ծովուն:
Անշարժ, դարավոր
Լեռնասարերու,
Թռչելու, ծփալու
Կարոտն է բոլոր,
Զոր գետը սարսռուն
Կ’երթա տանելու
Լեռներեն հեռու
Աշտառույգ ծովուն:

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՎՏԱԿ

Չքնաղ վըտակ,
Յո՞ երթաս.
Ո՞ւմ զայդ ալյակ
Տալ գնաս:
Ահա՛ քեզ մարգ,
Աստ հանգիր.
Ահա՛ քեզ վարդք
Առնուն ծիր:
Բյուր մարգարիտք
Կան ի քեզ.
Եվ քո ալիք
Են բեհեզ:
Ոչ ի հանգչել
Առ վարդի,
Ոչ ի փայլել
Աստ եկի.
Այլ գընալով
Ուղղակի
Հանգչել ի ծով
Ցանկալի:
Երթ անխոտոր,
Մանուկ դու,
Զի ուղևոր
Ես առու:

«Բազմավեպ», 1856

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ՀՆԴԿԱՀԱՒԻՆ ԹԱԹԸ

Անցեալ օր, երբ սիրտս կը նեղանար, քիչ մը զուարճանալու համար կանչեցի տղաս ու խնդալով ըսի իրեն.

— Կը տեսնեմ, որ ինէ պզտիկ դաս մը առնելու պէտք ունիս:

— Ի՞նչ բանի վրայ, հայրի՛կ,— հարցուց տղաս:

— Անանկ միտումի մը վրայ, որ ինձնէ առած ես, մե՛ղք, և որմէ կուզեմ բժշկել քեզ:

— Ի՞նչ միտում:

— Տղայութեանս ատենը չնչին դէպք մը պատահեցաւ, հիմա պատմեմ քեզի, որմէ պիտի հասկնաս ի՛նչ միտում ունենալդ:

Տասը տարու էի, դպրոց կերթայի. ամեն երկուշաբթի տունէն 10 ղուրուշ կը տանէի տնտեսին կը յանձնէի ցորեկուան ուտելիքի համար, ինչու որ դպրոցէն մինակ ցամաք հաց կուտային մեզի: Երկուշաբթի մը՝ դպրոցէն ներս մտնելուս, ընկերներէս մէկը տեսայ (իր անունը կը յիշեմ դեռ. Գրիգոր էր), որ հնդկահաւի աննման թաթ մը ունէր ձեռքը. թաթ կըսեմ նէ, եփած հնդկահաւի մսոտ ազդրը (պալտըր) չհասկընաս, բոլոր եղածը չոր ոսկոր մըն էր չորս մատով, և վրան սև ու կոտած կաշիով մը, անանկ, որ ողորմած հոգի հնդկահաւն ատենօք կարմիր այծեմորթի կոշիկներ հագած կը նմանի եղեր:

Ընկերս զիս տեսնելուս պէս. «Եկու տե՛ս,— պօռաց,— եկու տե՛ս…»: Վազեցի որ նայիմ, ձախ ձեռքով թաթին ոսկորէն բռներ էր և աջ ձեռօքն ալ անանկ պզտիկ շարժում մը կընէր, որ թաթին չորս մատերն ինքնին կը բացուէին ու կը գոցուէին մարդու մատներու պէս: Ասոր վրայ զարմանքէս ապշեցայ մնացի: Արդեօք այն մեռած հնդկահաւին թաթն ի՞նչպէս կը շարժէր, և ընկերս ի՞նչ վարպետութեամբ կրնար այն շարժումը տալ: Չեմ կարծեր, թէ ամենէն ճարտար ձեռնածուի մը խաղերը դիտող պատանի մը ինձնէ աւելի հիացած աչքեր ու բոցավառ նայուածք ունենար, ինծի չափ ճիտն առաջ երկնցնէր. քանի կը նայէի այն հնդկահաւի թաթին՝ այ՛նքան աւելի

կը հիանայի, ամեն հեղու, որ չորս մատերը կը բացուէին ու կը գոցուէին, կարծես թէ հրաշք մը կը գործուէր աչքիս առջև:

Ընկերս, որ ինէ աւելի տարօք, և աւելի խորամանկ էր, երբ տեսաւ, որ իմ զարմանքս քանի գնաց աւելցաւ, հրաշալի թաթը գրպանը դրաւ և քովէս հեռացաւ. ելայ տեղս գացի, բայց խելքս միտքս թաթին վրայ էր, որ միշտ աչքիս առջև կը ցաթկըրտին տեսիլքի պէս… թէ որ ձեռք անցնում զայն, կըսէի ինքնիրենս, ես շատ շուտով կը սորվիմ շարժելու կերպը: Գրիգոր կախարդ չէ հա՛… և այն ատեն ո՞րքան պիտի զբօսնում: Ալ չդիմացայ, վազեցի ընկերոջս քով…

— Ինծի՛ տուր թաթդ,— ըսի թախանձելով,— կաղաչեմ՝ ինծի՛ տուր…

— Թա՛թս… քեզի՛ տամ թաթս… գնա՛ բանդ…

Իր մերժումն աւելի գրգռեց փափաքս:

— Չե՞ս ուզեր տալ,— հարցուցի:

— Ո՛չ,— ըսաւ:

— Չէ նէ՝ստակով ծախէ, առնեմ:

— Ծախե՞մ… քանիի՞:

Սկսայ գրպանիս մէջ համրել շաբաթականս…

— Չորս տասնոց կու տամ,— ըսի:

— Չորս տասնո՞ց… ասանկ թաթ մը՞, կը ծաղրե՞ս զիս:

Այս ըսելով՝ ընկերս նորէն ձեռքն առաւ թանկագին առարկան և սկսաւ աչքիս առջև նորէն խաղցնել այն հողմահարի (էլփազէ) խաղը, որով ամեն հեղուն աստիճան մը կը սաստկանար փափաքս:

— Չէ նէ, ութը տասնոց տամ,— ըսի:

— Ութը տասնո՞ց,— պատասխանեց արհամարհանօք, ութը տասնո՞ց… բայց նայէ հեղ մը…

Եւ չորս մատները շարունակ կը բացուէին ու կը գոցուէի՛ն…

— Վերջապէս,— ըսի դողալով,— քանիի՞ պիտի տաս հապա:

— Քսան ղուրուշ, չէ նէ՝ չեմ տար:

— Քսան ղուրո՞ւշ…— պօռացի, քսա՞ն ղուրուշ. գրեթէ երկու շաբթուան ուտելիքի ստա՞կ…

— Թող ըլլայ, դո՛ւն գիտես:

Թաթն աներևոյթ եղաւ գրպանին մէջ, և ինքն ալ առաւ քալեց:

Նորէն վազեցի ետևէն:

— Հինգ ղուրուշ տամ,— ըսի:

— Քսանէն վար չըլլար,— պատասխանեց:

— Վեց ղուրուշ:

— Քսան:

— Եօթը դուրուշ:

— Քսան:

Ա՜խ, սատանա՛յ Գրիգոր, ի՞նչ բանը գործը գիտցող մէկն եղած է արդեօք. պզտիկուց կը ճանչէր մարդոց բնաւորութիւնը… Այս սարսափելի քսան բառը քանի հեղ որ կը հնչէր ականջիս, ընդդիմութեանս մէկ մասը կառնէր կը տանէր. երկու վայրկեանէն ինքզինքէս ելած էի:

— Շատ աղէկ, քսան թող ըլլայ,— պօռացի…— տո՛ւր ինձի թաթը:

— Առաջ ստա՛կը տուր,— ըսաւ Գրիգոր:

Իսկոյն ափին մէջ լեցուցի տասը դուրուշ շաբաթականս, մնացած 10 դուրուշին համար ալ պարտամուրհակ մը գրել տուաւ ինձ… Ա՜խ, դեռ տասներեք տարեկան չեղած՝ առուտուրի մարդ եղած էր ստահա՛կը…

Ետքը գրպանէն հանելով ծանրագին ապրանքը. «Ա՛ռ,— ըսաւ,— ահա՛ւասիկ»:

Իսկոյն յափշտակեցի թաթը… մէկ քանի վայրկենի մէջ սորվեցայ գաղտնիքը, ինչպէս որ նախատեսեր էի. ոսկորին ծայրէն թելի պէս ջիղ մը դուրս ելած էր, որ Գրիգորի չափ աղէկ կը քաշէի, ասանկով մատները կը շարժէին ուզածիս պէս: Այս բանը երկու վայրկեան խենթի պէս զբօսցուց զիս. երկու վայրկեան ետքը աւելի քիչ զբօսցուց. երեք վայրկենէն գրեթէ չզբօսցուց, չորս վայրկենէն ետքը ամենևին չզբօսցուց: Անդադար կը քաշէի ջիղը, որովհետև կուզէի ստակիս շահը հանել… բայց երթալով զարմանքս պակսելու վրայ էր… ետքը տխրութիւնը պատեց զիս… ետքը մեղքնալս եկաւ… անկէ ետքը երկու շաբաթ ցամաք հաց ուտելու գաղափարը միտքս պաշարեց, ետքը անմտութեանս զգացումը, և այս ամենը քիչ–քիչ դառնութեան փոխուելով՝ բարկութեամբ լցուեցայ… Եւ տասը վայրկենէն ետքը սիրելի խաղալիքս ատելութեամբ վերցնելով՝ նետեցի պատէն անդին որ հեղ մ’ալ չտեսնեմ…

Անկէ ի վեր շատ անգամ միտքս եկած է այս յիշատակը, և շատ հեղ նորէն տեսած եմ հնդկահաւի թաթին տղան: Այս փափաքի անզսպութիւնը, ուզածս ձեռք բերելու համար դէմս ելած արգելքներու անհամբերութիւնը, այս յիմարական աննախատեսութիւնը, այս ցնորքի իղձը, որ, աւա՜ղ, հազիւ կը հաւասարի իրականասիրութեանս, բոլոր այս բնաւորութիւնները հազար անգամ գրգռած են զիս…ինտո՞ր ըսեմ, ասոնք բոլորը ոգի կառնեն երբոր կիրք մը գերի ընէ զիս:

Չէ, չէ, ամենքը ճշդիւ չեն հասկնար տղայոց բնաւորութիւնը. շատ կը շոյեն անոնց տղայական զգացումները: Բնաւ տղայական բան չկայ մարդոյն հոգւոյն մէջ. տղայութիւնը երբէք չվերնար չափահասութեան մէջէն, և ինչ որ այսօր տղայական է, կրնայ վաղը սոսկալի կամ մեղապարտ ըլլալ: Կիրքերը տարբեր են, բայց սիրտը, որ անոնց ծլած տեղն է, միևնոյնն է, և պատանիի մը բարքն ուղղելու համար պէտք է անոր տասը տարեկան եղած ատենն ուշադրութեամբ դիտած ըլլալ: Ահա ասանկ այն հնդկահաւի թաթը շատ մեծ ծառայութիւն ըրաւ ինձ. կենացս մէջ քսան անգամ պատահած է, որ խենդութիւն մը ըրած ատենս այս յիշատակը միտքս ինկած է: «Արդեօք միշտ միևնոյնը պիտի մնաս,— ըսած եմ ինքնիրենս»:— Եւ կ'սկսէի խնդալ. ասանկով ինքզինքս վար կը դնէի: Երբեմն–երբեմն մարդս իր վրայ խնդալէն աւելի օգտակար բան չկայ:

Այս պատմութիւն ընելէս ետքը՝ դարձայ ըսի տղուս.

— Ցուցանէ առակս, թէ տղայք երբեմն իրենց հայրերուն կը նմանին:

«Թատրոն բարեկամ մանկանց» հանդէս, Կ. Պոլիս, թիւ 14, 1876

ատեն – ժամանակ, պահ
գոցել – փակել
ճիտ – վիզ, պարանոց
ստակ – փող, արծաթադրամ
հեղ – անգամ
ղուրուշ – թուրքական մանրադրամ
անկե – այնտեղից, այն ժամանակվանից

ԱՆՎԱԽՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Տղայութեան ատենէն սկսելով վախկոտ մեծցողներուն գլխուն շատ փորձանքներ եկած են: Այս տեսակ օրինակնէր շատ կան, որ ամեն օր կը պատահին, բանն ան է, որ այն օրինակներէն օգուտ քաղել գիտնան տղայք:

Հրդեհի ատեն կրակէ պաշարուողը, կամ ջուրն իյնալով խեղդուելու վտանգի մէջ եղողը՝ երբոր շփոթի, երբոր խելքը կորսնցնելով ինչ ընելիքը չգիտնայ, գիտցիր, որ վախկոտութեան հետևանքէն է: Ասոր հակառակ՝ շատերը կըսեն, թէ՝ Աստուած մի արասցէ, երբոր մարդ անանկ վտանգի մը մէջ իյնայ, իր ձեռքը չէ չշփոթիլը, խելքը գլուխը չմնար, ու կը շուարի կը մնայ:

Ասոր հակառակը ես կը պնդեմ, թէ երբոր պատանեկութեան հասնող մէկը իր տղայութենէն վախկոտ մեծցած չըլլայ, անանկ վտանգի մը մէջ ինկած ատեն կրնայ իր խելքը չկորսնցնելու չափ քաջասրտութիւն ունենալ: Ասոր ապացոյց՝ աչքովս տեսած մէկ դէպքը հոս պատմեմ. թող իմ պզտիկ ընթերցողներս դատեն: Այն ահաւոր դէպքն անանկ տպաւորած է մտքիս մէջ, որ թէև տարիներ անցած են, բայց դեռ աչքիս առջևն է քաջ աղջկան մը անվախութիւնը և իր վախկոտ քրոջը սարսափը, որուն պատկերը դրի այս Թատրոնիս մէջ:

Ասկէ հինգ տարի առաջ՝ գիշեր մը, Բերայի մէջ հրդեհի սկզբնաւորութիւն մը ըլլալով՝ բոլոր թաղեցիք կրակ կայ պօռալով աղմկին տեղը վազեցին, ես ալ ետևնուն: Սագըզ Աղաճի փողոցը քարուկիր տան մը վարի յարկէն, ինչպէս եղեր, կրակ առեր էր: Կրակը պաշարեր էր բակը, վերի յարկը հանող սանդուխն այրեր էր, մազերը թափած կնիկ մը, հասէ՛ք, կը պօռար փողոցը վազելով, զաւկներս վերը մնացին, աննման աղջիկներս, բոցերուն մէջ պիտի խորովին, հասէ՛ք…

Ամենուն աչքը տանը պատուհանները կը դիտէին, տանը վերի յարկը սև մուխ մը պատեր էր, բոց մը եկաւ լուսաւորեց պատուհաններէն մէկը, որուն առջև շուարած աղջիկ մը կեցած օգնութիւն կը պօռար, բայց ինքզինք ազատելու չէր աշխատէր, խելքը կորուսէր էր խեղճը, անճրկած կերթար ու կուգար, անպետ բաներ կը բերէր պատուհանէն վար կը նետէր, աղտոտ գուլպաներ, հայելի, շաքարաման և ուրիշ կոտրտելիք կարասիքներ կը բերէր պատուհանէն վար կը նետէր՝ իբր թէ տանը կարասիքներն ուզէր փախցնել խելքը փախցնելէն ետքը:

Տեսնողները սարսափելով ամեն մէկը մէկ մէկ կերպ ազատելու հնարք կը սորվեցնէին խեղճ աղջկան, որը շուտ ըրէ, վար ցատքէ, կը պօռար, ուրիշ մը չուան բերելու կը վազէր: Պատուհանը 10 կանգուն բարձր էր գետնէն, անհնար էր վար ցատքել: Այն միջոցին իր պզտիկ քոյրը, որ թէպէտ իրմէ պզտիկ, բայց աւելի անվախ ըլլալով՝ խելքը չէր կորսնցուցած, ինքզինքն ազատելու ճարը մտածեր էր: Առաջ վարագոյրները տեղէն քաշել հանելու խելք ըրեր էր, բայց չէր կրցած, ետքը միտքն աւելի արթնցընելով, անկողնին սաւանը վերէն ի վար չորս կտոր ըրեր, չուանի պէս ոլորեր և մէկ ծայրը պատուհանին մէկ ամուր տեղը կապեր էր: Բայց այս բաները հինգ վայրկեան չտևեցին: Նոյն միջոցին սենեակը բոցերով պաշարուած էր, ալ ժամանակ չկա՛ր… Պզտիկ քոյրը իր հնարագիտութեան վրայ

ուրախացած՝ վստահ էր իր ազատելուն, լաթէ չուանին վրայէն մէկ մը սահելուն պէս, երբ որ ուզեր պիտի կրնար ինքզինքը փողոցը նետել. բայց առաջ իր շուարած քոյրն ազատել ուզելով, կստիպէր, կաղաչէր անոր, որ չուանին վրայէն վար սահի, բայց խեղճ քոյրն այնքան շուարած էր, որ եթէ քիչ մը ժամանակ ալ անցնէր, իրաւցնէ բոցերուն մէջ պիտի խորովէին երկուքն ալ…

Շուտ ըրէք, վար իջէք, կը պօռար փողոցը խռնուած բազմութիւնը. ամենուն սիրտը կը դողար՝ տեսնելով մեծ քրոջ վիճակը, որ կը վարանէր ու չէր համարձակէր վար սահիլ: Վերջապէս բոցերէն բոլորովին պաշարուելով ու տաքութենէն սաստիկ նեղուելով՝ չուանէն կախուիլն ու ինքզինքը գետինը գտնելը մէկ եղաւ. պզտիկ քոյրը, որ ըսես իր քրոջ ազատուելուն վրայ ուրախացած՝ մէկէն վար սահեցաւ:

Տեսնելու բան էր ասոնց մօրն ուրախութիւն, որ իր երկու աղջիկները սրտին վրայ կը սեղմեր անպատմելի գորովանօք: Բազմութիւնը, որ ըսես՝ ծափաձայն աղաղակներով պզտիկ քրոջ քաջասրտութիւնը կը գովէին, որ իր անվախութեամբը մահուանէ ազատեր էր տարիքով իրմէ մեծ քոյրը:

«Թատրոն բարեկամ մանկանց», № 15, 1876

չուան – պարան

ՊԱՐՈՆՅԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ «ԴԱՍԵՐ» ՆԱԵՎ ՄԱՆՈՒԿ ՈՒ ՊԱՏԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(«Թատրոն բարեկամ մանկանց» հանդեսի էջերից)

Հպարտ և ինքնահաւան մէկը օր մը ընտանեկան բազմութեան մէջ ըսաւ.

— Հիմար մարդիկ երբ որ բան մը ըսել կուզեն, ամենէն առաջ իրանք կսկսին խնդալ:

— Ուրեմն, դուք պէտք է որ շատ ուրախութեամբ անցուցած ըլլաք կեանքը,— պատասխանեց ուրիշ մը:

* * *

Քաղաքավարութիւնն ալ ուրիշ առաքինութեանց պէս իր ծայրերն ունի: Թեթևութիւնը կամ քծնումն կոպտութեան պէս անհաճոյ է: Ստոգոյք քաղաքավարութիւնն այն է, որ թէ քծնելէ ու նուաստու-

թենէ և թէ լրբութենէ ու անտարբերութենէն հեռի՝ համեստաբար դիմացինին հաճելի կըլլայ։

* * *

Ջախջախենք տգիտութեան շղթաները, ազատ թևերով թռչենք դէպի գիտութեան, իմաստութեան, լուսավորութեան տաճարը։

* * *

Ինչո՞ւ ձմեռը արևը ուշ կելնէ։ Օդը ցորտ ըլլալուն համար չուզեր կանոխ անկողնէն ելնել։

* * *

Պարզութիւնն ու ճշմարտութիւնն այնպիսի գեղեցկութիւններ են, որ ամեն բանին մէջ կըփնտրվեն ամեն բանէ առաջ։

* * *

Սխալն ճանչնալն խելացութիւն է, իսկ զայն խոստովանիլը՝ մեծ քաջութիւն։

* * *

Բարի՛ն վարժեցուցէք ձեր լեզուն, ձեր աչքերը, ձեր սիրտը, ձեր ոտները և ձեռները և մի՛ վախենաք, վասն զի պիտի գա օր մը, որ բարի մարդը պիտի հարգվի։

ԱՐԵՎՈՒՆ ՃԱՌԱԳԱՅԹԸ

Զըվարթ առտու մը գարնան,
Երբ խուցիս բոլոր
Փեղկերը նոր կբանան,
Ճառագայթ մ'աղվոր
Արևեն թել մը փըրթած
Ցոլքերով ոսկի՝
Դեռ գիշերվան ցողեն թաց՝
Ներս կսողոսկի.
Եվ սահելով պատերուն
Ճերմակ ծեփին ի վար,
Նազանքներով օրորուն,
Շողալով վառ–վառ՝
Կսկսի պար մը դառնալ,
Պար մը խոլ, թեթև,
Ու կփախչին շուքերն ալ
Բարձերուն ետև:
Ճառագայթն արշավասույր
Անիվներ չունի.
Սակայն փափուկ լուսաթույր
Թև մ'է թըռչունի:
Իր խաղն աղվոր է այնքան
Եվ այնքան սիրուն,
Որ խորհուրդ մը խոլական
Կունենամ իսկույն:
Կուզեմ բըռնել ոսկեթել
Լույսիկն այն բարակ,
Շիշի մը մէջ բանտարկել
Իր կայթերն արագ,
Մինչև տըխուր ձըմեռ գա,

Երկինքն ըլլա մութ,
Լեցվի դաշտը շըրջակա
Ջուրերով տըղմուտ։
Եվ ձանձրույթի սև օձեր
Երբ հոգիս տանջեն,
Իմ ճառագայթս հանեմ վեր,
Սըրվակին մեջեն,
Որ նա պարե, ծիծաղի
Իմ շուրջս հեզանազ,
Մինչև հոգերս անտեղի
Փըշրին զերթ ավազ
Ու ետևես վազելով
Շողիկիս պըչրուն,
Որ խույս կուտար ինչպես հով
Շուրջը մոմերուն,
Բազմոցներեն կելլեր վեր՝
Անկողնիս կատար,
Եվ հետո վար կցատկեր
Ու կկայծկըլտար։
Կարծես վըրաս կխնդար
Ու կխաբեր զիս,
Հետո գալով շուրջն անդադար
Գըլխուս և վըզիս։
Ես կընեի ամեն ջանք
Զինքը բըռնելու,
Իսկ ան կուտար ինձ տանջանք՝
Փախչելով հեռու։
Վերջապես ձեռքըս ընկավ
Լույսիկն անապակ,
Զոր փակեցի ըշտապով
Նեղ շիշի մը տակ
Ու պահեցի փաթթելով
Թուղթերու մեջ հաստ,
Որ չըթըռչի ինչպես հով
Շողիկս անըզգաստ։
Երբոր ձըմեռը եկավ,
Ամպերը սևացան,
Հոծ սաղարթներն ալ կարգավ

Եղան ցիր ու ցան,
Օր մը, երբ սիրտս էր կոտրած,
Եվ անձրև կուգար,
Հիշեցի շողըս հանկարծ
Եվ խոլ մեր պայքար,
Բացի սըրվակս անհամբեր,
Ինչ տեսնեմ, ավա՜ղ,
Մեջեն թըռե՛ր, փախեր էր
Շողիկըս չըքնաղ։

խոլ – կատաղի, մոլեգին
շուք – ստվեր
կաթ – ցատկ, պար, վեր–վեր թռչել
պըչրուն – գեղեցիկ, զարդարված, շքեղ

ԱՌՏՈՒՆ

Ծագեց արևն հորիզոնեն
Կարմիր, դեղին ցոլքերով.
Մեծ ծառերը շուք ձգեր են
Աղբյուրներուն ջուրին քով։

Կանցնի զեփյուռն ալ խաղալով
Տերևներուն հետ կանանչ.
Ու կփայլին դաշտին մեջ զով
Հասմիկը, վարդն ու կակաչ։

Իր փեթակեն թըռավ մեղուն,
Ծաղկե ծաղիկ կոստոստե,
Ելի՛ր, մանո՛ւկ, մտքով բեղուն,
Կանուխ դասըդ պատրաստե։

ՀԱՅ ԼԵԶՎԻՆ
(հայկված)

Դո՛ւն առաջին վանկ շրթունքիս, առաջին վանկ իմ հոգվույս,
Նախկին հնչյուն իմ մանկական լեզվիս հեզ,
Որով լացի ու երգեցի միշտ հուզումներս, իղձս ու հույս,
Իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛ւյն քեզ:

Քու բառերեդ արևեն վառ ու բյուրեղեն ալ վըճիտ՝
Իմ հոգվույս մեջ բոց մը կաթեց մշտակեզ,
Հուր ծարավ մը անհունության, բարվույն, մեծին ճշմարիտ,
Ո՜վ մանկությանս ազնիվ լեզու, կ՚օրհնե՛մ քեզ:

Տարիներով թափառական օտար երկիր ու վայրեր,
Զուրկ մնացի ընտանիքես, տընակես.
Այլ քու կարոտդ անդարման ցավն եղավ սրտիս կարեվէր,
Ո՜վ իմ լեզուս, ամեն իղձ զոհ ըլլա քեզ:

Զարմանահրաշ վըսեմ թարգման դուն սրբությանց անմատույց,
Դուն արձագանք հայ անցյալին, կյանքին վես,
Տիտաններու, քերթողներու անմահ փառքին ապացույց,
Ո՜վ վեհ բարբառ իմ հայրերուս, պատի՛վ քեզ:

Ալեծաղիկ կատարներու անմահ զավակ դարավոր,
Ծոցեդ անշեջ ճառագայթներ կժայթքես.
Մշտափթիթ գարուն մ՚անանց կպսակե դեմքդ աղվոր,
Անզուգական, քնքույշ լեզուս, համբո՛ւյր քեզ:

Դուն Մեսրոպին ու Սահակին շունչին թրթռումը ոսկի,
Որ հայրենի հուշերն անդուլ կեղերգես.
Իր պաշտելի ավանդությանց, նշխարներուն սուրբ ըսկիհ,
Ո՜վ աննման չքնաղ լեզու, բուրվա՛ռ քեզ:

ՕՐՈՐ

Օրո՛ր, օրո՛ր,
Մանկի՛կս աղվոր,
Արծաթ ցողի նոր զգվանքով
Քեզ շողերով կփայփայե
Իր ցոլքին տակ նիրհե՛ անդորր։
Օրո՛ր, օրո՛ր։

Օրո՛ր, օրո՛ր,
Ծաղի՛կս աղվոր.
Լույս թիթեռներ ձյուն թևերով
Քեզ հովանի կշինե զով
Համբույրին դեմ արևուն հուր.
Նիրհե՛ անույշ, նիրհե՛ անդորր։
Օրո՛ր, օրո՛ր։

Օրո՛ր, օրո՛ր.
Թռչնի՛կս աղվոր.
Գիրգ թերթերուս բյուր նազանքով
Վարդ կթափի քու բույնիդ քով՝
Ծավալելով բույր հոգեթով.
Այդ թովքին տակ նիրհե՛ անդորր։
Օրո՛ր, օրո՛ր։

Օրո՛ր, օրո՛ր,
Հրեշտա՛կս աղվոր.
Կուգա աշուղն օրրանիդ քով
Իր անուշիկ գեղգեղանքով,
Բոց տաղերով ըզմեզ կօրրե,
Դուն երգին տակ նիրհե անդորր։
Օրո՛ր, օրո՛ր։

Օրո՛ր, օրո՛ր,
Աղջի՛կս աղվոր,
Պերճ ոսկեփայլ զարդարանքով
Կուգա պարիկն օրրանիդ քով,
Հարսի թելով կպարուրե

Քեզ մի՛ բանար աչուկդ աղվոր։
Օրո՛ր, օրո՛ր։

Օրո՛ր, օրո՛ր,
Հոգյա՛կս աղվոր,
Սերը կուգա օրրանիդ մոտ
Անհուն խանդով սրտիդ կարոտ,
Հիմա զարթի՛ր, հուրի՛ս աղվոր.
Ալ չեմ երգեր քեզի օրոր։

գիրգ – փափուկ, քնքուշ

ՄԱՅՐԸ

Անտառին շատ մօտիկ գիւղ մը կար։

Կիրակի օր մը այդ գիւղին ժողովուրդը կը զուարճանար։

Յանկարծ առիւծ մը ելաւ անտառէն։ Մեծ ու պզտիկ շատ վախցան ու փախան։ Անոնց մէջ մանկիկը գրկած կին մը ալ կար։ Վազելու ատեն կնոջ ձեռքերը թուլցան, եւ մանուկը գետին ինկաւ։

Առիւծը իսկոյն մօտեցաւ, մանուկը առաւ բերանը եւ դանդաղ քայլերով սկսաւ վերադառնալ դէպի անտառ։ Ոչ մէկը համարձակեցաւ մօտենալ առիւծին։ Սակայն մանուկին մայրը լալով վազեց անոր ետեւէն։ Հասաւ առիւծին, ծունկի եկաւ ու աղաչելով ըսաւ.

— Տո՛ւր, տո՛ւր զաւակս…

Առիւծը նայեցաւ կնոջը։ Յուզուեցաւ անոր ձայնէն։ Զգաց, որ աղաչողը մայր մը էր։ Կամաց մը գետին դրաւ երախան եւ անձայն հեռացաւ։

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ

ԳԻՐՔ

Անգամ մը փոքրիկ տղայ մը կար. անունն էր Զարեհ:

Չորս ու կէս տարու էր Զարեհը: Շատ անգամ իր մօրը քովը կ'նստէր և անոր կ'ըսէր.

— Մայրի՛կ, կ'աղաչեմ, ինձ բան մը պատմէ:

Մայրն ալ շատ աղուոր պատմութիւններ կ'պատմէր անոր:

Օր մը Մեծին Ներսիսի պատմութիւնն ըսաւ. այս Սուրբ Ներսէս դպրոցներ հաստատեց, որբանոցներ շինեց և փոքրիկ տղաքներ ժողվելով՝ անոնց կարդալ ու գրել սորվեցուց:

Երբոր մայրիկն իր խօսքը լմնցուց, Զարեհ հարցուց անոր.

— Մայրի՛կ, միթէ կ'ճանչնա՞ս Սուրբ Ներսէսը:

— Չէ, տղա՛ս, չեմ ճանչնար,— պատասխանեց մայրը,— Սուրբ Ներսէս շատ տարիներ կայ, որ մեռած է:

— Ուրեմն, մայրի՛կ,— ըսաւ տղան,— ո՞ւր գիտես անոր ըրած գործերը:

— Գրքի մը մէջ կարդացի,— պատասխանեց մայրը:

Ուրիշ օր մ'ալ մայրը Մեծին Վարդանին պատմութիւնը պատմեց: Պատմեց, թե ի՜նչ ազնիւ, քաջ, հայրենասէր մարդ էր, ի՜նչպէս Հայաստանը թշնամիներէն ազատելու համար քաջութեամբ նահատակ եղաւ:

Երբոր այս պատմութիւնը վերջացուց, Զարեհ իր մօրը հարցուց.

— Մայրի՛կ, Մեծն Վարդանը տեսա՞ծ ես:

— Չէ, տղա՛ս, տեսած չեմ,— պատասխանեց մայրը:— Մեծն Վարդան շատ–շատ տարի կայ, որ մեռած է:

— Ուրեմն ի՞նչպէս իմացար Մեծին Վարդանի ըրածներն,— հարցուց մանկիկը:

— Գրքի մը մէջ կարդացի,— պատասխանեց մայրը:

Ուրիշ անգամ մ'ալ Զարեհին մայրն իրեն պատմեց, որ ատեն–ատեն ճամբորդներ մեծ նաւեր մտեր ու ծովով ուրիշ երկիր մը գացեր են, ուր մինակ աւազ կայ գետինը. այս երկրին բնակիչները սև

են, խոշոր չորքոտանի կենդանիներ կան այն տեղ. ծառեր կան, որ անուշահամ պտուղներ կը բերեն, և ուրիշ շատ բաներ պատմեց այնպէս, որ Զարեհին հետաքրքրութիւնը շատ գրգռեց:

Զարեհ նորէն հարցուց.

— Մայրի՛կ, միթէ այդ երկիրը գացա՞ծ ես:

— Ո՛հ, չէ,— պատասխանեց մայրը,— շատ հեռու է:

— Այն ատեն ի՞նչպէս գիտես, որ այդպիսի բաներ կան այն տեղ,— հարցուց մանկիկը:

— Գրքի մը մէջ կարդացի այդ բաները,— պատասխանեց մայրը:

Օրին մէկը Զարեհին մայրը դուրս ելեր էր. Զարեհ մինակ էր, սիրտը կնեղանար քանի կ'մտածէր, որ մայրը չկար, որ իրեն պատմութիւն մը ըսէ:

Այն ատեն ինքնիրեն ըսաւ. «Որովհետև իմ մօրս ըսած զրոյցները գիրքերուն մէջ կը գտնուին, ես ալ կրնամ փնտռել ու գտնել»:

Շուտ մը գնաց գիրք մը առաւ սեղանին վրայէն ու բացաւ… բայց անոր մէջ սև նշաններ տեսաւ ճերմակ թղթի վրայ:

Գիրքը գոցեց և ուրիշ երես մը բացաւ, նորէն ճերմակ թուղթ ու սև–սև գծեր գտաւ:

Գրքին երեսներն ասդին անդին դարձուց. բայց մէկ ծայրէն միւս ծայրն մի և նոյն բանը տեսաւ:

Այնպէս որ մանկիկը բան մը չէր հասկընար. այն ատեն գիրքը սեղանին վրայ դրաւ, ձանձրոյթ զգաց և մինչև մօրը գալը քնացաւ:

Երբոր լսեց, որ մայրը դարձեր է, աչքերը բացաւ և անոր վրայ վազեց:

— Մայրի՛կ,— ըսաւ անոր,— ի՞նչ պէտք է ընել, որ գրքիդ մէջ եղած պատմութիւնները հասկընամ:

— Տղա՛ս,— պատասխանեց մայրը,— պէտք է կարդալ սորվիլ:

ԹԻԹԵՌՆԻԿ

Թիթեռնիկ մը կար, որ ծաղիկներու վրայ կ'թռթռէր: Տղեկ մը տեսաւ այս թիթեռնիկն, որ շատ սիրուն էր և բռնելու համար անոր ետևէն վազեց: Բայց տղեկը քանի թիթեռնիկին մօտենար, այս կ'փախչէր և օդին մէջ վեր–վեր կ'ելնէր:

— Սիրելի՛ տղաս,— ըսաւ մայրը,— թող տուր, որ թռի այդ թիթեռնիկը, մի՛ վազեր ետևէն, եթէ անոր դպչիս, իր աղտորութիւնը պիտի կորսնցընէ և սիրուն տեսքէն պիտի զրկուի:

Տղեկը խօսք մտիկ ըրաւ. թիթեռնիկին ետևէն չվազեց: Հապա գնաց պարտիզին մէջէն այծիտերևի ոստ մը կտրեց, որ նորաբոյս ծաղիկներով լեցուն էր, և կամացուկ մը թիթեռնիկին մօտ գալով՝ անշարժ կեցաւ այս ոստը բռնած… Քիչ մը ետք՝ թիթեռնիկն անվախ եկաւ այծիտերևի ճիւղին վրայ նստաւ, և տղեկը զմայլելով մօտէն դիտեց զայն:

Սիրուն դեղին թիթեռնիկ մ'էր այս. ատամնաձև, թաւշի պէս էին թևերն, որոց վրայ մարգարտի նման կարմիր ու սև բիծեր կային: Չորս հատ թև ունէր, և այս թևերն այնչափ թեթև էին, որ թէև շուտ–շուտ կ'շարժէին, բայց շշուկ մը չէին հաներ: Թիթեռնիկը թռելու ատեն իր թաթիկները կը ծալլէր և երբ ճիւղի վրայ թառէր, կ'ցուցընէր:

Փոքրիկ տղան դիտեց, որ երկու կողմէն երեքական թաթիկ ունէր: Վերջը տեսաւ, որ թիթեռնիկը մետաքսի պէս բարակ պատիճ մը երկնցուց. այս պատիճն, որ բոլորաձև էր և իր բերանին տեղը կ'բռնէր, ծաղիկներուն մէջ կ'մղէր և իր կերակուրը կ'ծծէր առանց վնաս մը տալու:

Բայց թիթեռնիկներն անհանդարտ են. չեն կրնար նոյն տեղը մնալ երկար ատեն: Ուստի թիթեռնիկն այծիտերևը թողուց և ասդին անդին թռաւ, օդին մէջ օձուտ շրջաններ ընելով և ծաղկէ ծաղիկ անցնելով այնպէս թեթև, որ տերև մ'անգամ չէր շարժեր իր ծանրութենէ:

Տղեկը չէր կշտանար այս զմայլելի թիթեռնիկը դիտելով: Աչքն անոր վրայ տնկած կ'նայէր: Վախցաւ, որ թիթեռնիկը պիտի թռի երթայ. այնչափ մեծ փափաք ունէր զայն բռնելու, որ իր մօրը խրատը մոռցաւ… Ուստի երբոր թիթեռնիկը վարդի մը բաժակին վրայ հանդարտ կեցած կ'ծծէր, փոքրիկ տղայն զայն բռնեց… ետքը ձեռքը բացաւ… ափսո՜ս, ինչ եղեր էր այն շնորհալի միջատը… փոքրիկ տղուն մատերուն վրայ փափուկ ու փայլուն փոշի մը միայն կ'երևէր, խեղճ թիթեռնիկը կէս մը ճզմուեր էր և իր պատառուն թևերը դողդողալով կ'շարժէր:

Տղեկն, այս տեսնելով, սիրտը թունտ ելաւ. ետքն սկսաւ սաստիկ լալ և վազելով գնաց իր մօրը գիրկն ընկաւ:

Մայրը չյանդիմանեց իր որդին երբոր տեսաւ անոր ցաւը, արտասուքն ու զղջումը, այլ մխիթարեց ու ըսաւ.

— Որդեա՛կ իմ, նայէ, որ ասկից ետք Աստուծոյ տուած հաճոյքով գոհ լինիս, և մի՛ մոռնար, որ մեր չունեցած բաները ստանալու փափաքելով՝ ինչպէս դու կ'փափաքէիր, շատ անգամ մեր վայելած բաներն ալ վրայ կ'տանք:

ՈՉԽԱՐ ՈՒ ԳԱՌՆՈՒԿ

Օր մը դաշտն էին ոչխարն ու իր գառնուկը հօտին հետ: Արևը տաք էր, գառնուկը շատ ուրախ էր և կը ցատկրտէր:

Գառնուկն ասդին անդին կը վազէր, վեր վար կ'երթար կուգար: Վերջը քանի մը մացառներու մէջ ընկաւ:

Բայց երբոր գառնուկն իր մօրը քովը դառնալ ուզեց, չկրցաւ դուրս ելնել, ինչու որ փուշերը չէին թողուր:

Այն ատեն գառնուկն սկսաւ մայել, ոչխարն անոր ձայնը լսեց և վազեց, որ օգնէ: Շատ աշխատելէն ետև՝ գառնուկը մացառներուն մէջէն քաշեց հանեց:

Գառնուկը նորէն այն մացառներուն քովը չգնաց:

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԻՐ ՇՈՒՆԸ

Միհրան պզտիկ շուն մ'ունէր. անոր անունը Վազուկ էր:

Վազուկ կարմիր ու ճերմակ էր, և մազերը փափուկ ու գոռուզ էին: Իր պոչն ալ երկայն ու թաւ էր:

Միհրան դուրս ելաւ գետին եզերքը պտըտելու համար: Վազուկն ալ ետևէն գնաց: Վազուկ խենդի պէս կը ցատկէր և չորս դին կը վազվզէր:

Միհրան քանի մը ծաղիկներ տեսաւ գետափին վրայ, շուշաններ էին. ուզեց մէկ հատ բրցընել ու մօրը տանիլ: Գաւազանն երկնցուց բայց չհասաւ. գաւազանը կարճ էր:

Միհրան նեղացաւ, ասոր համար փայտը շուշաններուն նետեց: Վազուկն, որ գետափին վրայ էր, ջուրը նետուեցաւ և փայտին ետևէն գնաց, բայց շուշան ծաղիկ մ'առած ետ դարձաւ:

Ճարպիկ և ուշիմ Վազուկը տեսաւ, որ Միհրանն շուշանը կ'ուզէր և գաւազանն առնելու հոգ չըրաւ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍՅԱՆ (ԱԼՓԱՍԼԱՆ)

ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԿԱՅԾԱԿ

Կայծա՛կ, կայծա՛կ,
Հուր սանձարձակ,
Որ յ՚երկնից գաս որոտընդոստ՝
Շանթ թօթափել
Եւ փոյթ լափել
Հըպարտ կաղնւոյն գըլուխն ըմբոստ,

Որ փափկագին,
Նուրբ եղէգին
Վերայ պարզէ իւր ճոխ թեւեր
Ոստազարդար
Ջ՚որս անդադար
Ծեծեն ձըմրան վայրագ հովեր.

Ես ալ եղէգ
Մ՚եմ, նուրբ և հէգ,
Անզօր, անտէր, անպատըսպար,
Որ խոնարհի
Ամէն չարի
Մինչեւ անցնի փոթորկաց պար:

Կայծա՛կ ահեղ,
Բե՛ր լուսահեղ
Ճաճանչքդ հոգւոյս խաւարին մէջ,
Որ անդ՝ իբրեւ
Փայլուն արև՝
Վառի Բարւոյն հընոցն անշէջ:

Տո՛ւր, որ յաւէտ
Լինին անհետ
Անշուք նախանձ, նենգ դառնագին,
Եւ մութ դաւեր
Որբ կարեվէր
Ցաւօք լընուն իմ խեղճ հոգին:

Գիտութեան լոյս,
Անսասան յոյս
Եւ վեհ սըփռէ առ իս եռանդ,
Եւ բոցակուլ
Մաքրէ՛ անդուլ
Ինչ որ չէ սուրբ և երկնաւանդ:

Ցո՛յց ինձ ուղիղ
Բարւոյն շաւիղ,
Որ տամ ողջոյն յ՚ահեակ և յ՚աջ,
Կազմ և անվիշտ
Ընթանամ միշտ՝
Ձայնարկելով. «ՅԱՌԱ՛Ջ, ՅԱՌԱ՛Ջ»:

անպատրսպար – անտուն
ահեակ – ձախ, ձախակողմյան

* * *

Ո՜, Հայկազնեան [անմեղ մանկունք],
Կենաց դրան սեմին վրայ,
Ջ՚որ շուրջ պատեն գողտրիկ ծաղկունք,
Եւ ուր զեփիւռ կը գուրգուրայ՝
Ց՚այս Բուրաստան,
Ուր խինդք խայտան,
Իբրեւ հրեշտակք աւետաբեր,
Ահա մի կոյս գեղածիծաղ,
Ողջունելով ծաղկանց թփեր,
Ձեզ աւետե սիրակենցաղ
Նոր եւ արի
Բարի Տարի:
Ձեզ ինչ փոյթ թէ կորաքամակ

Դողդոջաքայլ մի ծերունի
Ձմռան, արդէն կուգայ, ճերմակ
Եւ ցրտաբոյր մի սաւանի
Ներքեւ խոնարհ
Պահել զ՚աշխարհ,
Ձեզ ի՞նչ փոյթ ձիւն, սառնամանիք
Մթին ամպեր եւ փոթորիկ,
Մինչ ցանկալի Կաղանդ մ՚ունիք,
Որ աւետէ ձեզ աղտորիկ
Նոր եւ արի
Բարի Տարի:
Օ՜ն, կայտռեցեա՛ք ժպտուն զուարթ,
Տանց յուսահեղ ոգիքն եք դուք.
Սեղանն է ճոխ եւ լուսազարդ,
Դադրին տրտունջք եւ արտասուք,
Եւ սիրաբոյր
Տալով համբոյր
Ձեր ծընողք ոյց հոգին ցնծայ,
Ձեզ նուիրեն եռանդագին
Ոսկեզօծ գիրք մ՚իբրեւ ընծայ՝
Մաղթելով, որ շնորհէ Երկին
Նոր եւ արի
Բարի Տարի:
Ձեր նորածիլ սրտերուն մէջ
Թող արեւու լուսոյն նման
Երկինք այսօր վառեն անշեջ
Սէրն Հայութեան եւ սէրն ուսման,
Սէրն ընկերին
Եւ տըկարին,
Որ օր մ՚իբրեւ պտղաբեր ծառ
Մշակին գանձն ըլլաք անգին…
Եւ ձեր թրթռուն, ջինջ ու պայծառ
Ձայնն աւետէ Հայոց ազգին
Նոր եւ արի
Բարի Տարի:

«Բուրասպան մանկանց», տեւրր 24, 1882

խայտալ – ուրախությունից թռչկոտել

ՄԱՆԿԻԿՆ ՈՒ ԹՌՉՆԻԿ

Մանկիկն
Թեթև, թրթռուն ու դողդոջուն,
Ո՞ւր կը դիմես, փոքրի՛կ թըռչուն.
Կայտառ, անվիշտ,
Կ'երթաս, կուգաս և խորոտիկ
Հունտերու բիւր հասուն հատի՞կ
Կ'որոնես միշտ:

Մացառներու, թըփերու քով
Երգ ի բերան ոստոստելով
Անյագօրէն,
Ցերեկն ի բուն, ժիր, անվըհատ
Կը ժողովե՞ս քեզ անընդհատ
Ձըմրան պարէն:

Ինչո՞ւ երբեմն ալ մըշակին
Ըշտեմարանն երթաս կրկին
Եւ անփոփոխ՝
Կը գողանաս գարի, ցորեն,
Ձոր պահէ նա, և զոր իրեն
Չես տըւած փոխ:

Ըսէ՛, ինչո՞ւ միօրինակ
Կ'ոստոստես դու և շարունակ
Ընթանալով
Կը նեղես անձդ, որ տակաւին
Նիհար, փոքր է բոլորովին,
Որքան թոթով:

Թռչնիկն
— Բարի՛ մանկիկ, որ անկասկած
Առաւօտուն ինձ դէմ եկած
Ձըւարթագին՝
Քու անմեղուկ հարցումներով
Ձուարճացընես իմ անխըռով

Սիրտն ու հոգին.
Ակամնջ տուր ինձ. դու չե՞ս գիտեր,
Թէ ինձ յերկրի տրւած է Տէր
Փափկիկ մի բոյն,
Ոյր մէջ ունիմ հինգ հատ ձագեր
Զորս՝ անտէրունջ՝ անդ եմ ձրգեր
Եւ ես իսկոյն:

Անտառէն դուրս, դաշտէ ի դաշտ
Սրլանալով, ընելով հաշտ
Ճի՛, ճի՛, ճի՛, ճի՛…
Կ'երթամ գտնել անոնց համար
Հունտեր, հատեր և անհամար
Ճանճ ու ճրճի:

Ես ալ ազնիւ քո մօր նրման,
Որ քո վերայ մի անսահման
Սէր կը տածէ,
Կը մեծցընեմ այն թռչնիկներ,
Զորս Արարիչն՝ համայնից Տէր,
Ինձ տրւած է:

Մանկիկն
— Բայց ըսէ՛ ինձ, թրռչնի՛կ սիրուն,
Մինչ ծաղկազգեստ դշխոյն Գարուն
Զարդերով նոր
Պրճնէ սարերն ոյց ջինջ արեւ
Ճաճանչաշատ մի վեհ բարեւ
Տայ ամեն օր:

Եւ ամեն տեղ յասմիկ ու վարդ,
Գոյն ու բոյրեր հեղուն զրւարթ,
Դու անդադար
Ինչպէս տոկաս նոցա հոգին,
Չը՞ ձանձրանար քո խեղճ հոգին
Համբերատար:

Թռչնիկն

Անմի՛տ մանկիկ, կը սըխալիս.
Մայրս ալ նոյնպէս խընամեց զիս
Եւ նոյն սիրով
Մեր նուրբ բոյնին վերայ անդուլ
Գիտցաւ հսկել, երգել, հեղուլ
Կեանք ու գորով:

Նոյնպէս իմ պարտքս է յաշխարհի
Պահել ճագերս, և միշտ արի
Ու խանդավառ
Դիտել, որ մի՛ երբեք բազէ,
Օձ կամ ագռաւ՝ զանոնք ուզէ
Ջընջել իսպառ.
Որ անոնք ալ մի օր մեծնան,
Բոյներ շինեն, բանան բերան
Եւ քաղցրալուր
Գեղգեղանօք լընուն յաւէտ
Լեռ ու պարտէզ և ծաղկաւէտ
Դաշտ ու բըլուր:

հունտ – ցորենազգի և շատ այլ բույսերի պտուղը
դշխոյ – թագուհի (տեքստում՝ թագուհի գարուն)
տոկալ – դիմանալ
հեղուլ – դուրս թափվել, արտահոսել

ԺԱՄԱՆԱԿԸ

Կ'անցնի, կ'երթայ, չի տնտընար,
Կեցնել զինքը է անհընար.
Հովէն ու ջուրէն
Ա՛լ արագօրէն
Թռչի՛ շողուն ու լուսագէս,
Փայլակի մը պէս:
Կ'անցնի, կ'երթայ, չի տնտընար.
Լեռ, սար ու ձոր, բարձր ու խոնարհ,
Կը գըլլե կ'անցնի,

Վազքով տիտանի.
Նըւաղ ակնարկ մ’անգամ յետին
Չի նետեր ետին:
Կ’անցնի, կ’երթայ, անկարեկիր.
Ա՛յս իսկ է ճակատագիր.
Եւ մարդիկ ամէն
Երբոր կը յամեն՝
Խնդալով ինքն անոնց վըրայ՝
Յառա՛ջ կը սուրայ:
Պարգեւներու մեծահարուստ
Բաշխող մըն է ան ի վերուստ.
Թանկագին շընորհ.
Ճիշտ արժէքն անոր
Այս աշխարհի վըրայ շատեր
Վա՜խ, որ չեն գիտեր:
Կ’անցնի, կ’երթայ, անդարձ ու շուտ,
Պէտք է քաղել անկէ օգուտ,
Կառչելով ուժգին
Անոր քըղանցքին՝
Աշխատանքով, եռանդով շատ
Գործել անընդհատ:
Ժամանակին պէտք է փարիք,
Ան կուտայ ձեզ ամէն բարիք,
Դիրք, պատիւ, համբաւ,
Գանձեր ալ անբաւ
Եւ իրական, հեշտ, քաղցրագին,
Վայելք կեանքին:

Արամ Անտոնեանի «Գանձարան» դասագրքից, Կ. Պոլիս, 1926

տնտընալ – ծանր ու դանդաղ շարժվել, հապաղել
գլել – անցնել, շրջանցել
յամել – ուշանալ, հապաղել
քղանցք – փեշ

ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ

ԱՇԽԱՏԵՑԷՔ

Ո՛րչափ ուժ ունիք,
Ո՛րչափ որ կըրնաք,
Պէտք է աշխատիք՝
Պարապ չի մընաք։

Ժիր մըշակն ահա
Արտը կը հերկէ
Եւ առատ ցորեն
Կը ստանայ անկէ։

Դարբինն իր մուրճը
Կը զարնէ սալին.
Կայծ ցայտէ շուրջը,
Մետաղք կը հալին։

Ջուլհակն իր կըկոց
Մէկ մ’աջ, մէկ մը ձախ
Կուտայ ու կ’առնէ
Երգելով ուրախ։

Հիւսնը իր ուրագ,
Կարուակն իր հաստ թակ
Կը զարնեն թիք–թաք,
Գործեն շարունակ։

Դո՛ւք ալ, մանո՛ւկներ,
Առէ՛ք օրինակ,
Միշտ աշխատեցէ՛ք
Սըրտով գոհունակ։

Ո՛րչափ ուժ ունիք,
Ո՛րչափ որ կըրնաք,
Պէտք է աշխատիք՝
Պարապ չի մընաք։

կարուակ – հնակարկատ

ՄԵՐ ՏՆԱԿԸ

Մեր տունը մեծ շէնք մը չէ,
Չունի ոսկի ձեղուններ,
Սակայն պալա՛տ մը կ՚արժէ՝
Մենք ենք անոր միակ տէր։

Հո՛ն ծընած են մեր պապեր
Ու հո՛ն ապրած գոհ սըրտով,
Անուշ կեանք մը, անկեղծ սէր
Հո՛ն կը վայլենք ապահով։

Մեր բունիկն է մեր տընակ.
Թէպէտ անշուք ու պըզտիկ,
Կը սիրենք զայն շարունակ
Ու հոն կ՚ապրինք երջանիկ։

ԱՐԵՒԱԳԱԼ

Առտու եղաւ. երկնի դըռներ կը բացուին,
Ոսկի շողեր ցանէ արեւն իր չորս դին,
Կը փարատի մութ գիշերը, արշալոյս
Կը զարդարէ իր շողերով ծաղիկ, բոյս։

Տեսէ՛ք՝ սարին վերէն ծագի նա պայծառ,
Ամպին տակէն դուրս կը ցայտէ մեծափառ,
Ոսկի՛ արեւ, ելի՛ր, շողա՛ լուսալիր,
Առանց քեզի ծաղիկ ու ցօղ չեն փայլիր։

Առանց քեզի մարդը ապրիլ կարո՞ղ է.
Առանց քեզի կը բուսնի՞ տունկը հողէ.
Առանց քեզի թռչուն կրնա՞յ գեղգեղել՝
Արարչին սուրբ անունն օրհնել յեղյեղել:

Անհունութեան մէջ ասպարէզդ արձա՛կ է
Հոն քըրքմագոյն ճաճանչներըդ արձակէ՛.
Կեա՛նք տուր խոտին, ծաղկին, փոքրիկ միջատին,
Տաքցո՛ւր շողովդ մարմինը հէգ աղքատին:

քըրքմագոյն – քրքումի գույն ունեցող, դեղնականաչավուն

ՇՈՒՆ

Իմ աղո՛ւոր շընիկ, իմ շընի՛կ սիրուն,
Կայտառ ու աշխոյժ կենդանի մ’ես դուն.
Գիշեր թէ ցորեկ, առտու թէ իրկուն
Կը հըսկես հօտին, կը պահես մեր տուն:

Վա՛յ, եթէ օտար կենդանի կամ մարդ
Մօտենայ մեզի՝ չար նըպատակով.
Իսկոյն կը վազես՝ ի մի ակընթարթ,
«Հասէ՛ք» կը գոչես՝ հա՛վ–հա՛վ հաչելով:

Կամ եթէ աղուէսն ուզէ խորամանկ
Գողնալու համար հաւ, բադ կամ վառեկ
Անցնիլ գիշերանց մեր պարտէզին ցանկ,
Կը հասնիս ու զայն կ’ընես ահաբե՛կ:

Իմ աղուորի՛կ շուն, իմ գեղեցի՛կ շուն,
Ունիս թաւ մազեր, աչքեր վառվըռուն,
Վընաս չես ի տար քեզ սիրողներուն,
Մեր հաւատարիմ պահապանն ես դուն:

Պըզտիկ մանուկներ քեզ շա՛տ կը սիրեն,
Իրենց ձեռքովը քեզի կուտան կեր,

Կը շոյեն ըստեւդ ու կը փայփայեն.
Արթո՛ւն պահապան, խորոտի՛կ ընկեր։

ստեւ – մազ

ՍԱՐԵԱԿ

Սեւո՛ւկ սարեկիկ,
Եկո՛ւր մեզ մօտիկ,
Գեղգեղէ՛ գարունն
Աս մեր դաշտերուն։
Քու պէսպէս գեղգեղ
Սար ձոր, ամէն տեղ
Թող լըսուի զըւարթ,
Հըրճուի ամէն մարդ։
Ծառեր, դալարիք,
Եւ գոյն–գոյն ծաղիկ
Թող աճին շուտով
Գարնան ջինջ ցօղով։
Անտառ, այգեստան,
Պարտէզ, բուրաստան
Թո՛ղ ակնապարար
Փայլ տան բիւր հազար։
Ծաղիկ ծիրանին,
Սալորն ու դեղձին
Բուրմունքով անոյշ
Տան մարդուս կեանք, յոյս։

* * *

Սարեկը եկաւ
Ու մեզի բերաւ
Պայծառ արեգակ
Ու ջերմ եղանակ։
Հալեցան ձիւներ,
Բացուեցան դաշտեր,
Եւ մարդիկ համայն
Գործի ըսկըսան։

Դաշտ ու ծառաստան
Ծաղկիլ ըսկըսան,
Անուշ բուրմունքով
Սըրտեր լեցուեցան։
Սըրտով գոհունակ
Աստուծոյ փառք տանք,
Որ մեզ գարունի
Ընէ արժանի։
Թո՛ղ պայծառ արեւ
Ու կանաչ տերեւ
Մեզ երջանկութեան
Քաղցրիկ յոյսը տան։

գեղգեղել – դայլայլել, հաճելի ճլվլալ
ակնապարար – աչքը շոյող

ԵՕԹԸ ԳԱՒԱԶԱՆՆԵՐԸ

1

Գիւղացի մը եօթը որդիներ ունէր։

Ասոնք միշտ իրարու հետ կը կռուէին ու աշխատանքի չէին երթար, բանէ գործէ ետ կը մնային։

Օր մը հայրը կանչեց որդիները, անոնց առջև դրաւ չուանով մը իրարու կապուած եօթը գաւազաններ և ըսաւ.

— Ով որ այս կապոցը կտրէ, անոր հարիւր ոսկի դրամ պիտի տամ։

2

Որդիները իրարու ետեւէն փորձեցին, բայց ոչ մէկը կրցաւ կապոցը կտրել։ Ամենքն ալ ըսին։

— Չի կոտրիր, անկարելի բան է։

— Ատկէ դիւրին բան չկայ,— ըսաւ հայրը,— կապոցէն գաւազանները մէկ–մէկ հանեց, իրարու ետեւէ կոտրեց և նետեց մէջտեղը։

— Հա՛,— գոչեցին տղաները,— ատանկ զատ–զատ մենք ալ կրնանք կոտրել։

— Դուք ալ ճիշտ այս գաւազաններուն պէս եք, որդինե՛րս,— պատասխանեց հայրը։— Քանի միաբան ըլլաք, ձեզի մէկը բան մը չկրնար ընել, բայց երբ անմիութիւնը մտնէ ձեր մէջ, այս գաւազաններուն պէս կտոր–կտոր կ’ըլլաք և մարդոց ոտքին տակը կ’երթաք։ Միութիւնը ոյժ է։

Որդիները ամչցան և լսեցին իրենց հօր խրատը։

ՊՈՕՇ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԹՈՒՐԸ

1

Հայաստանի մէջ կան շատ մը վազուն ջուրեր, կապուտակ լիճեր:

Ապահունեաց գաւառին մէջ կայ Խաչլուայ պզտիկ լիճը, որ փռուած է Բլէճան լեռան ոտքերուն տակը:

Բլէճան լեռան վրայ հին, շա՛տ հին ատենները Պոօշ թագաւորը ունէր ամուր բերդ մը:

Թագաւորը այդ բերդին մէջ կը նստէր, մէջքը կը կապէր կայծակ թուր մը:

Շատ զօրաւոր էր և ոյժով. ամէն մարդ իրմէ կը վախնար:

Պոօշ թագաւորը եօթը տղայ ունէր: Ամեն մէկին համար շինել տուած էր բերդ մը, և կը նստեցնէր անոնք զատ–զատ տեղեր:

2

Թագաւորը երկա՛ր ապրելէ ետքը ծերացաւ: Երբ որ մահուան օրերը մօտեցան, ըսաւ.

— Աշխարհի վրայ չկայ բան մը, որ իմ թուրիս դէմ դնէ: Իմ մեռնելէս ետքը այս թուրը որ տղուս քով որ մնայ, անիկա միւս վեցը պիտի սպաննէ:

Եւ որպէս զի իր մեռնելէն վերջ տանը հանգստութիւնը չխանգարուի, կանչեց մեծ տղան, թուրը տուաւ անոր ու ըսաւ.

— Տղա՛ս, տա՛ր լիճը նետէ այս թուրը:

Մեծ տղան հօրը խօսքը մտիկ չըրաւ, թուրը պահեց իր քով, ետ դարձաւ, հօրը ըսաւ.

— Հայրի՛կ, թուրը նետեցի լիճը:

Պոօշ հարցուց.

— Ի՞նչ եղաւ լիճը:

— Բան մը չեղաւ,— ըսաւ մեծ տղան:

— Դուն սուտ կը խօսիս, թուրը պահեր ես, գնա՛ բեր:

Պոօշ առաւ թուրը և տուաւ միւս տղոցը, որ տանին լիճը նետեն:

Ամենքն ալ մեծ եղբօր ըրածին պէս ըրին:

Թագաւորը ամենէն վերջը թուրը տուաւ իր պզտիկ տղուն ու ըսաւ.

— Տղա՛ս, տա՛ր այս թուրը լիճը նետէ:

Պզտիկ տղան տարաւ թուրը լիճը նետեց. ետ դարձաւ ու ըսաւ հօրը.

— Հայրի՛կ, ջուրերը պղտորեցան, ձուկերը դուրս թափեցան, կիւռ–կիւռ ձայներ ելան լիճին խորերէն:

3

Ուրբաթ օր մըն էր, որ պզտիկ տղան թուրը ձգեց լիճը:

Այն օրէն այսօր ամեն ուրբաթ լիճը կը փոթորկի, ջուրերը կը խառնուին ու կը պղտորին:

Խումբ մը քաջեր ծովուն տակը բռնած են թուրը, ուրիշ խումբ մըն ալ ուրբաթ օրերը կուգան, որ անոնց ձեռքէն խլեն զայն:

Անոնք իրարու հետ կռիւ կ'ընեն, այդ կռիւէն ջուրերը կը խառնուին և կ'արիւնոտին:

Պռօշ ուխտ ըրած է, որ երբ ծովը ցամքի, իր թուրը բռնող ձեռք մը աշխարհ գայ: Անոր դիմաց ո՛չ իշխան պիտի դիմանայ, ո՛չ ալ թագաւոր: Կայծակ թուրը բռնողը գիւղը պիտի ազատէ ու մաքրէ դեւերէն:

Ամեն օր լիճէն ջուրը կը վազէ կ'երթայ, բայց բնաւ չի պակսիր:

«Մանկական աշխարհ» (հեքիաթներ), Ա գիրք, Կ. Պոլիս, 1912

ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐՅԱՆ

* * *

Աշունն ալ կ’անցնի,
Կ’անցնին վերջին աղւոր օրեր,
Փըչէ ցուրտ քամի,
Եւ կը գուժէ թ’եկաւ ձըմեռ,
Ալ չի՛ք մեզ վազել
Լերանց վերայ, մէջ դաշտերուն,
Ծաղիկներ քաղել,
Դիմել ըզհետ թիթեռներուն:
Ի՞նչպէս էր աղւոր
Սալորենին մեր պարտիզին.
Մընացեր է չոր,
Տէրեւքն ողբան իրեն չորս դին:
Ա՛խ, ո՞ւր են գառներ,
Որ բլրոյն վրայ ճարակէին,
Իրենց զանգակներ
Ի՞նչպէս անոյշ կը հնչէին:
Հովիւն, հօտին քով
Ընկողմանած ի զառիվայր:
Գեղջուկ սըրինգով
Կ’երգէր զուարթ, գառն ալխայտար:
Ցուրտ է, փարախէն
Չ’ելնե՛ն ալ դուրս, ինչպէս մեք ալ
Հեռու մեր տընէն
Մարգերու մէջ չ’երթամք խաղալ:
Բայց մեզ ի՞նչ փոյթ է,
Տաքուկ է խուց, երկայն՝ գիշեր:
Հանին մեզ պատմէ՝
Շուրջ ջերմոցին՝ սիրուն վէպէր:
Երբոր ծածկէ ձիւն
Ամկողնոյ պէս դաշտն ու բլուր,
Ի՞նչ ուրախութիւն

Դիտել խուցէն, ուր փայլի հուր:
Բայց արդեօք ընդէ՞ր
Յանկարծ վշտով սիրտըս լցուի.
— Ո՜հ, խեղճ աղքատներ
Կան ոյց ամէն բան կը պակսի:
Ձիւն բուք օրերուն
Չունին կըրակ, հաց ալ չունին.
Դողան օրն ի բուն
Ու կ'արտասուեն, լըսող չ'ունին:
Կան տըղայք ինձ պէս,
Որոնք մերկ են, հանդերձ չունին.
Ձմրան մէջ ի՞նչպէս
Խեղճ արարածք, ա՜հ, կը մըսին:
Ո՛չ, իմ լաթերէս
Պիտ' տամ անոնց, անոնց պիտ' տամ
Իմ կերակուրէս,
Անո՛նց՝ երբ հայրս ինձ տայ դըրամ:
Կաղանդն է մօտիկ,
Պիտի առնում շատ պարգեւներ,
Եւ մեր աղքատիկ
Դրացեաց առատ տանիմ նըւէր:
Ձիս պիտի օրհնեն,
Ու իրենց վիշտ պիտի դադրի,
Աստուած երկինքէն
Տեսնէ ու գոհ պիտի լինի:

«Բուրսապան մանկանց», տեպր 24, 1882

ընկողմանած – կողքի վրա ընկած, պառկած
լաթ – շոր, զգեստ

ԵՐԳ ԱՌԱՒՕՏՈՒ

Այգն ի՞նչ կ'ըսէ քեզ, այգը նորածագ,
Երբ ծիրանեփայլ ծայր կու տայ յերկին.
Ի՞նչ կ'ըսէ քեզի աշխոյժ ծիծեռնակ,
Ու մեղմիկ մրմունջ առուտու հովին:

Ո՞վ դու պատանեակ, այգը նորալոյս
Քեզ գոչէ. «Արի՛, ժամը կ՚անցնի վաղ.
Մի՛ դու վըստահիր ժպտին իմ անոյշ,
Անոյշ ու սիրուն, բայց սուղ է, աւա՜ղ»:

Շուտափոյթ թեւով այսպէս կը սահի
Նաեւ մանկութեան ժպտուն եղանակ,
Փայլակ մ՚օր ահա՛ մութին մէջ փայլի,
Բայց հազիւ փայլած՝ կը մարի արագ:

Թռչելով թեթեւ, ծիծեռնակ կ՚ըսէ.
«Արի՛ ի վաստակ, առուստ քեզ կոչէ.
Շուտ ամառն իրեն վախճանին դիմէ.
Արի՛, ընդ երկար մընալ օրէն չէ»:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԷՋԵՐԻՑ

ՊԱՐՏԵԶՈՒՄ

Հայր ու տղայ պարտէզին մէջ պտտած ատեննին, նորատունկ ծառ մը (ֆիտան) տեսան, որ հովէն ծռեր էր, հայրը ըսաւ տղուն.

— Կրնա՞ս այս ծառիկը շտկել:

— Այո՛,— ըսաւ տղան ու դիւրութեամբ շտկեց:

Յետոյ մեծ ընկուզի (ճէվիզի ծառ) մըն ալ ցուցնելով անոր.

— Ուրեմն, սիրելի՛ տղաս, գնա՛ այս ալ անոր պէս շտկէ:

— Ջիս կը փորձես,— ըսաւ խելացի տղան խնդալով,— միթէ կարելի է այս ահագին ծառը շտկել, ինչ ուժ պէտք է որ կարենայ ասոր յաղթել, եթէ Սամփսոնի զորութիւնն ալ ունենայի, դարձեալ չէի կրնար շտկել, վասն զի շտկելու աշխատած ատենս պիտի կոտրէր:

— Իրաւունք ունիս, սիրելի՛ տղաս,— ըսաւ հայրը,— այս երկու ծառերը պէտք է որ քեզի բարի օրինակ ըլլան: Ահա մոլութիւնն ալ ասոր պէս մանկութեան ատեն շատ դիւրաւ կուղղուի. բայց այն ատեն չշտկուիր, երբոր տղան կը մեծնայ, և մոլութիւններն ալ կարմատանան:

«Թատրոն բարեկամ մանկանց», թիվ 5, 1876

ԱՆՁՐԵՒ

— Մայրի՛կ, այս ո՛րչափ անձրև է,— հարցուց օր մը փոքրիկ Զապէլ իւր մօրը,— ո՞ւսկից կուգայ այսչափ անձրևը:

— Երկնից մէջ ընդարձակ աւազան մը ըլլալու է,— ըսաւ իւր մեծ եղբայրը Երուանդ,— ուսկից ջուրը, երբեմն–երբեմն յորդելով, վար կը թափի:

— Տղայական խօսք մ’է այդ, Երուա՛նդ,— ըսաւ մայրը,— երկնից մէջ աւազան չըլլար. երբ գիտութիւնները սովրիս, պիտի տեսնես, թէ ինչ է անձրևը:

Զապէլ. — Ուրեմն, մա՛յր, մեզի սովրեցուր, թէ ի՞նչ է անձրևը:

Մայր. — Տե՛ս, աղջի՛կս, ջուրը երբ քիչ մը կը տաքնայ, շոգի կ՚ելլայ. երբ քիչ մը պաղի, սառ կ՚ելլայ. փոխադարձաբար սառն ալ թէ որ տաքնայ, ջուր կ՚ելլայ, շոգին ալ թէ որ պաղի, ջուր կ՚ելլայ:

Զապէլ. — Այո՛, այո՛, մա՛յր, ճմեռը, երբ օր մը պարտէզ իջայ, տեսայ, որ գետինը սառի կտոր մը կար, կամաց մը բռնեցի և տեսայ, որ ձեռքիս մէջ ձեռքիս ջերմութենէն հալեցաւ և ջուր եղաւ. վերջը երբ ձեռքս մսեցաւ և վառարանին քով վազեցի, տեսայ, որ ձեռքիս վրայէն առատօրէն շոգի կ՚ելնէր:

Մայր. — Ապրի՛ս, աղջի՛կս, թէպէտ այն ատեն ուշադրութիւն չէիր ըրած այդ բանին, բայց հիմա կ՚իմանաս, որ այն շոգին ուրիշ բան չէ եղեր, բայց եթէ այն պարտէզէն առած սառի կտորդ:

Զապէլ. — Բայց այն շոգին նորէն սառ կ՚ելլա՞յ արդեօք:

Մայր. — Այո՛, աղջի՛կս, թէ որ պաղի, առաջ ջուր կ՚ելլայ, յետոյ երբ այդ ջուրը քիչ մ՚ալ պաղի, նորէն սառ կ՚ելլայ:

Զապէլ. — Ո՛րչափ գեղեցիկ բան է այդպիսի բաներ գիտնալը, մա՛յր. այդ բաներուն գիտութեան անունն ի՞նչ է:

Մայր. — Բնագիտութիւն:

Երուանդ. — Ես ալ հիմա կը յիշեմ, մա՛յր, որ օր մը երբ կրակին վրայ ամանով ջուր կը տաքնար, տեսայ, որ ջուրին երեսէն առատ–առատ շոգի կ՚ելնէր. որպէս թէ շոգին արգիլելու համար ապակիի կտոր մը գտայ և վրան բռնեցի, յետոյ տեսայ, որ ապակիին վրայ շոգին պաղեր և քանի մը կաթիլ ջուր է եղեր:

Մայր. — Քու ալ փորձդ Զապէլին գտածին ապացոյցն է. հիմա ուրեմն համոզուեցանք, թէ անձրևը ի՞նչ բան է եղեր:

Երուանդ. — Այո՛, մա՛յր, օդին մէջ գտնուած շոգին է եղեր, որ պաղելով անձրև կ՚ելլայ:

Զապէլ. — Բայց, մա՛յր, օդին մէջ շոգին չ՞հատնիր, ամեն ժամանակ անձրև կուգայ:

Մայր. — Ամեն ժամանակ ալ երկրիս երեսէն շոգիացումը պակաս չէ. բոլոր ծովերուն վրայէն, լեռներուն վրայէն, ծառերուն, տունկերուն, անասնոց և այլ ամեն մարմիններուն վրայէն գիշեր–ցերեկ անդադար շոգի կ՚ելնէ և օդին մէջ կը տարածուի:

Երուանդ. — Բայց ի՞նչպէս մենք չենք տեսնար, մա՛յր:

Մայր. — Շոգին թէ որ խիտ ելլայ՝ կ՚երևի, բայց թէ որ տարածուի՝ չերևիր, չէ՞ք տեսեր, որ երբ եռացող ջուրի մը վրայէն ամանին խուփը վերցնես, խտացած շոգին վեր կ՚ելնէ և կը տարածուի, և անգամ մը, որ սենեկին մէջ տարածուի, այլևս չերևիր: Ամպերը, որ օդին բարձրերը կը տեսնէք, խտացած շոգիներ են և կ՚երևին. բայց ծո-

վուն երեսէն ելած շոգիները անօսր և տարածեալ ըլլալնուն պատճառաւ չեն երևիր:

Զապէլ. — Իմ հաւատալս չգար, մայր, թէ ինչպէս ամեն մարմնոց վրայէն շոգի կելնէ և չերևիր:

Մայր. — Ուրեմն, աղջիկս, քեզի փորձ մ'ընեմ. թրջէ այդ թաշկինակդ և կախէ, քանի մը ժամէն պիտի տեսնես, որ թաշկինակդ չորցեր է:

Երուանդ. — Այո՛, այո՛, մայր, այսինքն՝ թաշկինակին վրայի ջուրը շոգի է եղեր և թռեր է:

Մայր. — Ապրի՛ս, զաւակս, կը տեսնեմ, որ տարիքդ մեծ ըլլալուն պատճառաւ Զապէլէն աւելի աղէկ կը խորհիս:

Զապէլ. — Ո՛չ, ո՛չ, մայր, ես ալ հիմա համոզուեցայ, որ իրաւունք ունիս, պէտք չէ որ Երուանդը աւելի սիրես, վասն զի ինէ աւելի կը խորհի: Ես եղայ պատճառ այս դասերն առնելնուս, վասն զի ես հարցուցի, թէ անձրևն ուսկից կուգայ:

Մայրն երկու զաւակները հաւասար սիրով զգուեց և խոստացաւ, որ ուրիշ անգամ նորէն ուրիշ դասեր տայ իրենց:

«Թատրոն բարեկամ մանկանց», թիվ 17, 1878

ԱՄԷՆԷՆ ԱՆՈՒՇԻԿ ՄԱՏԸ

Երկրորդ դասարանի աշակերտ է Վաչէ: Շատ բարի, աշխատասէր եւ ուշադիր տղայ մըն է: Անոր սեւ, փայլուն աչքերը միշտ կը հետեւին Օրիորդ Զապէլին. ան ջանք չի խնայեր՝ ուսուցչուհին գոհ ձգելու: Միշտ վերջին շարքը կը նստի հանդարտ ու լուռ:

Վաչէին կը պատկանի նաեւ ամէնէն անուշիկ մատը: Անուշիկ մա՞տ՝ կը հարցնէք դուք. ի՞նչպէս կ'ըլլայ անուշիկ մատը:

Լսեցէ՛ք, պատմեմ հիմա, սիրելի՛ երախաներ:

Հայերէն դասի պահն էր: Օրիորդ Զապէլը կը կրկնէր այբուբենը եւ ձայնաւոր ու բաղաձայն հնչիւնները:

Տեսնելու համար, թէ բոլո՞րը հասկցած են դասը, Օրիորդ Զապէլը սկսաւ հարցումներ ընել աշակերտներուն:

Ու բարձրացան մատները: Մէկը անհամբերութեամբ ոտքի ելաւ՝ ձեռքերը օդին մէջ շարժելով: Միւսը նստած տեղը կը ցատկռտէր ու ձեռքերը կը շարժէր անդադար: Ուրիշ մը մատը ատրճանակի պէս ուղղած էր ուսուցչուհիին: Վերջապէս բոլորը կ'ուզէին ցոյց տալ, թէ լաւ հասկցած են դասը:

Օրիորդ Զապէլը նայեցաւ բոլորին. ո՞ր մէկը դասի հանէր:

* * *

Յանկարծ յիշեց Վաչէն: Ինչո՞ւ մատ չէր բարձրացներ: Բայց ո՛չ. ահա նստած է ան իրեն յատուկ լռութեամբ ու լրջութեամբ. արմունկը գրասեղանին վրայ դրած, միայն ցուցամատը բարձրացուցած՝ իր խելացի աչքերով իրեն կը նայէր:

— Կրնա՞ս պատասխանել, Վաչէ՛:

— Այո՛, Օրիո՛րդ,— պատասխանեց ան՝ հազիւ լսելի ձայնով:

— Պատմէ՛, Վաչէ՛: Բայց,— յանկարծ դառնալով դասարանին՝ ըսաւ,— այս վայրկեանիս դասին չափ կարեւոր բան մը կայ: Նայեցէ՛ք, մի՛թէ Վաչէին մատը ամէնէն լաւ, ամէնէն անուշիկ մատը չէ, բարեկիրթ աշակերտի մատ:

Քար լռութիւն տիրեց պահ մը: Բոլորը նայեցան Վաչէին եւ անոր մատին: Սամիկը, որ ինք կ՚ուզէր պատասխանել եւ ամէն ճիգ կ՚ընէր ուշադրութիւն գրաւելու, հետաքրքրութեամբ մօտեցաւ Վաչէին, նայեցաւ անոր մատին, ժպտեցաւ եւ իր տեղը գնաց:

Քար լռութիւնը շարունակուեցաւ: Բոլորն ալ հասկցած էին Օրիորդ Ջապէլին դիտողութիւնը…

«Խիկար», թիվ 6, Կ. Պոլիս, 1884

ԽԵԼԱՑԻ ՏՂԱՆ

Օր մը՝ թուաբանութեան դասին, ուսուցիչը հարցուց աշակերտներուն.

— Ծառին վրայ տասը թռչուն կար: Որսորդը անոնցմէ մէկը զարկաւ. քանի՞ թռչուն մնաց ծառին վրայ:

— Ո՛ւթ, վե՛ց, եօ՛թը, ի՞նը,— լսուեցաւ այս ու այն կողմէ:

— Ոչ մէկ թռչուն,— ըսաւ Խիկար:

— Ինչո՞ւ, չէ՞ որ որսորդը միայն մէկ թռչուն զարկաւ,— ըսաւ ուսուցիչը:

— Ճիշդ է, ինը թռչուն ողջ մնացին, բայց ծառին վրայ ոչ մէկ թռչուն մնաց. հրացանին ձայնէն վախցան ու փախան:

— Ապրի՛ս, նստէ՛,— ըսաւ ուսուցիչը եւ հարցում մը ալ տուաւ.

— Մէկ քիլօ բամպա՞կը ծանր է, թէ՞ մէկ քիլօ երկաթը:

— Երկա՛թը, երկա՛թը,— գոչեցին աշակերտները:

— Ես կ՚ըսեմ՝ հաւասար են,— ըսաւ Խիկար:

Աշակերտները զարմացած անոր նայեցան:

— Ինչո՞ւ,— հարցուց ուսուցիչը գոհ դէմքով:

— Որովհետեւ երկուքն ալ մէկ քիլօ են,— վստահօրէն պատասխանեց Խիկար:

— Այո՛, շա՛տ ապրիս,— ըսաւ ուսուցիչը եւ տուաւ վերջին հարցումը.

— Ափսէին մէջ չորս խնձոր կար: Մէկը տուի Արամին, միւսը՝ Վարդանին, երրորդը՝ Գեղամին, չորրորդը՝ Աշխէնին. ինծի ի՞նչ մնաց:

— Ափսէն,— ըսաւ Խիկար:

«Խիկար», թիվ 4, Կ. Պոլիս, 1885

«ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ» ՀԱՆԴԵՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԱՌ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՆ

Եկէ՛ք, Հայ տըղաք,
Իջնենք ԲՈՒՐԱՍՏԱՆ,
Ուր տեղ կը բուսնին
Ծաղկունք զանազան:
Տեսէ՛ք գոյներնին
Ի՜նչ գեղեցիկ է.
Հոտերնին ի՜նչպէս
Անոյշ կը բուրէ:
Գոնէ մէկ քանի
Ծաղիկ թէ ժողուէք
Այս ԲՈՒՐԱՍՏԱՆԷՆ,
Ուր յայց ելեր էք,
Մի փունջ կունենաք,
Որոյ չեն փախչիր
Գոյներն ու հոտը,
Եւ ինք չի թոռմիր:
Զի անթառամ են
Ծաղկունք գիտութեան.
Նոցա երփն ու բոյր
Կ'ապրին յաւիտեան:

«Բուրասպան մանկանց», տետր 1-ին, 1882

ՓԻԼԻՍՈՓԱ ԵՎ ՆԱՒԱՎԱՐ
(զրոյց)

Փիլիսոփայ մը գետէ մը անցնելու համար նաւակ մը մտաւ: Ճամբան նաւավարին հարցուց, թէ՝ ուսողութիւն գիտէ՞ մի:

— Ուսողութիւն: Ո՛չ, պարոն:

— Մեղք, վասն զի կեանքիդ մէկ քառորդն կորուսեր ես:

Նոյն միջոցին նաւակն բաղխեցաւ հին ծառի մը կոճղին, որ գետը ինկեր էր. նաւավարն լողալով գետեզրը ցատկեց և մէկէն ի մէկ հարցուց փիլիսոփային.

— Պարո՛ն, լողալ գիտէ՞ք:

— Ո՛չ:

— Ուրեմն— ըսաւ նաւավարն,— ձեր ամբողջ կեանքն կորսուած է, վասն զի նաւակն պիտի ընկղմի:

Նաւակին մէջ երրորդ անձ մ'ալ կար, որ առանց ձայն հանելու մտիկ ըրեր էր այս խօսակցութիւնն: Երբ նաւակն ընկղմեցաւ, փիլիսոփային մազերէն բռնեց և դէպ իր ծովեզրը լողալով՝ զայն ողջ հանեց: Այն ատեն խօսքն ուղղելով այլայլեալ փիլիսոփային և նաւավարին, որ նաւակը կ'ողբար.

— Երկուքդ ալ անիրաւ էիք,— ըսաւ,— դո՛ւ, փիլիսոփա՛յ, որ բանի տեղ չի դրիր մարմնոյ վարժութիւններն, և դո՛ւ, նաւավա՛ր, գիտութիւնն արհամարհելու: Մարմնամարզութեան շնորհիվ քեզ խեղդուելէ ազատեցի, փիլիսոփա՛յ: Գիտութեան շնորհիւն ալ կրնամ քեզ լաւ խրատ մը տալ, նաւավա՛ր: Քու նաւակդ գէշ շինուած ըլլալուն՝ առաջին բաղխման պիտի ընկղմէր: Երբ ուրիշ մը գնես, նաւուղիղի մը խորհուրդ հարցուր:

«Բուրաստան մանկանց», տեպր 18, Կ. Պոլիս, 1883

ԲԱՐԵԿԱՄՔ

Զարմայր կատուի երկու սիրուն ձագ ունէր, որք իր բարեկամներն էին: Օրն ի բուն հետն էին, միասին կը խաղային և իրմէ քայլ մը չ'էին հեռանար: Զարմայր կը սիրէր զանոնք և չ'կան ուտելիք մը կամ շաքարեղէն մը, որմէ անոնց մաս չի հանէր: Այս փոքրիկ կենդանիներն կարծես իրենց բարեկամին բոլոր ըսածները կը հասկնային և կը ջանային իրենց զգուանօքն աւելի սիրելի ըլլալ անոր: Ինչ եղաւ խեղճ տղեկին տրտմութիւնը, երբ առաւօտ մը արթննալով՝ տեսաւ, թէ արու կատու մը երկուքն ալ խեղդեր էր: Զարմայր սաստիկ լացաւ և նոյն օրը ամենեւին կերակուր ուտել չուզեց: Մօրն ու եղբարցը զգուանքն հազիւ կրցան երկար ատենէն մխիթարել զինքն իր երկու բարեկամաց կորստեանը վրայ:

Այս պատմութիւնը մեզ կ'ուսուցանէ, թէ՝ երբ մարդ բարեկամ կատուի մը վրայ այսչափ կը ցաւի, արդեօք ճշմարիտ բարեկամի մը կորստեան վրայ ո՞րչափ պէտք է ցաւիլ:

— Անկեղծ բարեկամ մը ունեցողը աշխարհիս հարստութեան տէրն է:

«Բուրաստան մանկանց», տեսր 18, Կ. Պոլիս, 1882

ԵՐԵՔ ՈՍԿԵԳՈՅՆ ՁԿՆԻԿՆԵՐ

Մարդ մը երեք սիրուն ոսկեգոյն ձկնիկներ ունէր, զորս դրած էր վճիտ լճակի մը մէջ, յաճախ անոնց հացի կտորներ կը նետէր ըսելով.

— Ձկնիկնե՛ր, եթէ կ'ուզէք երջանիկ ըլլալ, մերձակայ մեծ լճակին մէջ երբէք մի՛ երթաք, եւ երբ ձեր մօտը չ'ըլլամ, մի՛ լողաք ջուրին մակերեւոյթին վրայ:

Օր մը լճակին բնակիչներն ըսին.

— Ահաւասիկ անգութ մարդ մը, որ ստուգիւ հաճոյք կ'զգայ զմեզ չարչարելէն. ինչո՞ւ համար երբեմն ջուրին մակերեւութին վրայ չ'ելլանք. ի՞նչ վտանգ կայ մեծ լճակին մէջ երթալէն:

— Ես կ'երթամ հոն ճեմելու,— ըսաւ մին և,— ես,— ըսաւ միւսը,— քիչ մը արեգակին պիտի խաղամ:

Նոյն պահուն երրորդն ըսաւ ինքնին. «Այս մարդը զմեզ կը սիրէ, որովհետեւ մեզ տեսնելէն և հացի փշրանքներ տալէն հաճոյք կ'զգայ, հարկաւ մեզ արգիլելու իրաւունք ունի, զորս թէ և չ'եմ գիտեր, բայց կը հնազանդիմ անոր»: Հակառակ իւր ընկերաց կատակներուն, ջուրին խորը մնաց, որուն պարզմտութեան վրայ կը խնդային:

Բայց ի՞նչ պատահեցաւ:

Մեծ լճակը գնացողը գայլաձուկէ մը կլլուեցաւ, ջուրին մակերեւութին վրայ խաղցողը որսացող թռչունէ մը յափշտակուեցաւ: Միայն այն մնաց կենդանի, որ իւր տիրոջ հլու և հնազանդ մնաց:

«Բուրաստան մանկանց», տեսր 18, Կ. Պոլիս, 1883

ՃԱՆՃ ԵՒ ԻՒՐ ԹԱԹԵՐԸ

Եթէ ճանճերուն թեւերն շատ ստորին են թռչնոց թեւերուն բաղդատմամբ, բոլորովին հակառակն են իրենց թաթերը: Արդարեւ ճանճի թաթն հինգ մասէ բաղկացած է, որոց վերջինն երբեմն մինչեւ քառասուն մասնաւոր կտորներէ է շինուած:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

- Ծուլութիւնը մարդո կենդանոյն կը թաղէ:
- Հարստացրո՛ւ քու պատանեկութեան ծաղկափթիթ հասակդ առաքինութեամբ և ուսմունքով:
- Խելացիին մէկ օրը յիմարին բոլոր կեանքէն հաճելի է:
- Բան չգիտցողը ամէն բանի կը հաւատայ:
- Բարեկամութիւնը շատ աժան պիտի ըլլար, եթէ բարեւ տալով առնուէր:
- Առանց բարեկամի աշխարհս ամայի անապատ մ'է:
- Փախի՛ր դատարկութենէ, որ մայր է ամէն չարեաց:
- Մարդս աշխատութեան մէջ կ'իմանայ իր ի՛նչ ըլլալը, իսկ դատարկութեան մէջ ինքզինք կը մոռնայ:
- Ով որ առաջքը չի նայիր, ինքզինքը միշտ ետ կը գտնէ:
- Ճշմարտութիւնը երկնի բնակիչն է:

«Բուրաստան մանկանց», տեւրր 13, 18, Կ. Պոլիս, 1883

ՄԱՆԿԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Վահան և Միհրան երկու եղբայր էին: Վահան միշտ կ'աշխատէր, իսկ Միհրան ծոյլ էր: Օր մը մայրը կը հարցնէ Միհրանի.

— Տղա՛ս, ինչո՞ւ չես աշխատիր:

— Մա՛յր, եղբայրս միշտ աշխատելով ինձ աշխատելիք գործ չթողուր:

* * *

Տրդատ 12 տարեկան էր, և Արմենակ՝ ութ տարեկան:

Օր մը մայրը, տղայոց պտուղ տալով, կ'ըսէ. պէտք է որ Տրդատ քու բաժինէդ մաս մը եղբօրդ տաս, քանզի նա քենէ փոքր է: Տրդատ զայս կը կատարէ:

Օր մը մայրը Տրդատին կ'ըսէ.

— Տղա՛ս, հայրդ պատուիրեց, որ այս ինչ տեղը երթաս։

— Որովհետեւ,— կը պատասխանէ Տրդատ,— եղբայրս ինձմէ պզտիկ է, պէտք է որ իմ տեղս նա երթայ։

* * *

Փոքրիկ Վահէն կ'ըսէ իւր հօրը, թէ՝ տարւոյն ամիսներուն անունները գիտէ։

Հայրը կ'ըսէ՝ համրէ տեսնեմ։

Վահէ կ'սկսի՝ Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յունուար, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր։

— Շատ լաւ, բայց Յունիսի տեղ Յունուար ըսիր, որով երկու անգամ կրկնած եղար։

Յայնժամ տղեկը կ'ըսէ.

— Հա՛յր, ես Յունուարը երկու անգամ ըսի, որ երկու անգամ Կաղանդ եկած կ'ըլլայ, որով ես ալ շատ պտուղ և անուշեղէն կ'ուտեմ։

«Ծաղիկ մանկանց», թիվ 2, 1889

ՀԱՅՈՐԴԻԻՆ ԵՐԳԸ

(Զօն «Հայկունի»–ի նորահաս ընթերցողներուն)

Հայորդի՛ն եմ, երակիս մէջ
Ազգիս արիւնն ունիմ անշէջ.
Հիր ու կայտառ այդ արիւնով
Օժտուած եմ համակ սրրտով։

Հայորդի՛ն եմ, միշտ իմ ազգիս՝
Իտէալին, եւ կըրօնքիս
Պիտի սիրով ծառայեմ ես,
Ամեն ատեն, քաջի մը պէս։

Հայորդի՛ն եմ, ցեղիս ցաւին
Սուր կոտտանքովն կը տըւայտիմ,
Այդ տառապանքն որչա՛փ անոյշ
Թըւի հոգւոյս եւ ինձ տայ ոյժ։

Հայորդի՛ն եմ, պարծանքս միայն
Ազգս է անտէր, անտիրական.
Անորն ըլլալ, ապրի՛լ անով
Իտէալն է իմ ապահով:

Հայորդի՛ն եմ, լեզու, գրրիչ,
Խանդ եւ աւիւն արագաթռիչ,
Կը ձօնեմ ես ազգիս սիրոյն,
Որուն տեղեակ եմ ցաւերուն:

Հայորդի՛ն եմ, Հայկայ զարմին
Ձաւակը քաջ հաւատարիմ.
Ազգիս համար արեան գետէն
Անցնիլ կ՚ըղձամ անվախօրէն:

Հայորդի՛ն եմ, սուրբ սէրն ազգիս
Մոգի մը պէս հըմայեց զիս.
Ալ չեմ ուզեր անհարազատ
Տարբեր սէրեր՝ ըստոր ու վատ:
Արշակ Կ. Թիւթիւնճեան
Աստուածաբանական ճեմարան
Մարզուան

«Հայկունի», տեպր 5, 1912

տրւայտել – տառապել, մտատանջվել

ՊԱՆԴՈՒԽՏ Է ՀՈԳԻՍ...

Պանդուխտ է հոգիս. ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի հրպարտ լեռներուն.
Մեր հայրենիքի ծաղկոտ սարերուն
Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ:

Պանդուխտ է հոգիս. ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի արծաթ ջրրերուն.
Մեր հայրենիքի ժրպտող աստղերուն
Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ:

Պանդուխտ է հոգիս. ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի ցած խըրճիթներուն.
Մեր հայրենիքի ծիծեռնակներուն
Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ:

Պանդուխտ է հոգիս. ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի արշալոյսներուն.
Մեր հայրենիքի նոր զինուորներուն
Պանդուխտ է հոգիս, բայց համբո՛ր ունիմ…:

Արսէն–Երկաթ, Գահիրէ, «Հայկունի», տեարր 7, 1912

ԵՐԵՔ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐԸ

1

Երեք թիթեռնիկ եղան եղբայր իրարու: Մէկը ճերմակ էր, մէկը՝ կարմիր, միւսը՝ ոսկեգոյն:

Երեք անհոգ եղբայրները կը պարէին մինչեւ իրկուն՝ արեւուն տակ. կը կենային մէկ թուփէն միւսին վրայ. իրենց մազի պէս բարակ կնճիթը կը թաթխէին ծաղիկներու բաժակին մէջ, կը ծծէին շաքարի պէս քաղցր հիւթը:

— Ա՜խ, ի՜նչ գեղեցիկ բան է, կ՚ըսէին անոնք. ծաղիկները մեզի մեղր կու տան, արեգակը կը տաքցնէ, մենք ալ կը պարենք ու կը թռչինք: Ի՜նչ լաւ բան է թիթեռնիկ ըլլալը:

Բայց ահա, օր մը ալ, երկինքը ամպեց, եւ սկսաւ անձրեւ գալ՝ հեղեղի պէս:

— Ամա՜ն,— ըսաւ թիթեռնիկներէն մէկը,— աշխարհքի վերջն է, արեգակը մեռաւ. ի՜նչ պիտի ըլլայ մեր վիճակը…

Երեքն ալ վազեցին ծղօտի մը տակ. ուզեցին թռչիլ, բայց իրենց թեւերը թրջեր էին եւ չէին կրնար շարժել:

2

Յանկարծ տեսան, թէ քիչ մը անդին կակաչ մը կայ՝ կարմիր ու դեղին գոյներով կակաչ մը, որ գոցեր է թերթիկները եւ կը կենայ արեւին տակ:

— Աղուո՛ր կակաչ, դուն բարի ես,— ըսաւ թիթեռնիկներէն մէկը,— բա՛ց թերթիկներդ, որ գանք քիչ մը նստինք անոնց մէջ, չորցնենք մեր թեւերը ու թռի՛նք երթանք:

— Ես կը բանամ թերթիկներս,— ըսաւ կակաչը,— բայց կը բանամ դեղին ու կարմիր թիթեռնիկներուն համար. անոնք ինծի կը նմանին, ես ալ անոնց: Ներս կ'առնեմ երկուքը, բայց չեմ առներ ճերմակը. ես սովորութիւն չունիմ օտար հիւր ընդունելու:

— Քանի որ այդպէս է,— ըսին կարմիր ու դեղին թիթեռնիկները,— մենք ալ չենք գար: Մենք չենք ուզեր, որ դուռը թողունք մեր եղբայրը:

3

Սակայն անձրեւը կու գար:

Թիթեռնիկները ուժ տուին իրենց թեւին. հազար նեղութիւնով թռան, հասան գեղեցիկ շուշանին քով:

— Ա՜յ շուշան, դուն մեծ ես, դուն ազնիւ ես. քիչ մը տե՛ղ տուր մեզի՝ քու պսակիդ մէջ, մինչեւ որ անձրեւը դադրի, թեւերնիս չորցնենք ու թռինք երթանք, մե՛ղք ենք, գթա՛ մեզի:

Շուշանը հպարտ–հպարտ նայեցաւ անոնց եւ ըսաւ.

— Ներս կ'առնեմ ճերմակը, որ իմ գոյնս ունի, բայց չե՛մ առներ միւսները. ես չեմ ճանչնար զանոնք:

Այն ատեն ճերմակ թիթեռնիկը ըսաւ բարկութեամբ.

— Եթէ մեր երեքին համար տեղ չես տար, ես ալ չեմ գար պսակիդ մէջ: Ի՞նչպէս կրնամ բաժնուիլ իմ եղբայրներէս: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Լաւ է, որ միասին թրջինք, միասին նեղուինք, քան թէ իրարմէ բաժնուինք:

4

Թիթեռնիկները ուզեցին անգամ մը ալ թռչիլ եւ ուրիշ տեղ մը փնտռել. շարժեցին իրենց թրջած թեւերը, բայց չկրցան:

Այս միջոցին էր, որ արեւը ելաւ ամպին ետեւէն եւ իր ճաճանչները ձգեց թիթեռնիկներուն փափուկ թեւերուն վրայ:

— Բարի եղբայրներ են ասոնք, իրար շատ կը սիրեն,— ըսաւ արեւը, վարձատրեմ զիրենք:

Եւ թիթեռնիկները ուրախացան, չորցուցին իրենց թեւերը եւ սկսան դարձեալ պարել օդին մէջ՝ զուարթ ու անհո՛գ:

Ռուբեն Զարդարեանի «Մեղրագեր» դասագրքից

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ նոր գրականության պատմություն, Եր., հ. 5, 1979:
Հայ գրականության քրեստոմատիա (միջնակարգ դպրոցի 8–րդ դասարանի համար), Եր., 1992:
Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, 10 հատորով, Երուսաղեմ, Բեյրութ, Անթիլիաս, 1945–1982:
Արշակ Չոպանեան, Մկրտիչ Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը, Փարիզ, 1907:
Կարլեն Դալլաքյան, Արշակ Չոպանյան (կյանքը և գործը), Եր., 1987:
Զարիկ Գրիգորյան, Արևմտահայ գրողները դպրոցական դասագրքերում, Եր., 1985:
Վազգեն Գաբրիելյան, Արևմտահայ բանաստեղծներ, Եր., 1974:
Վազգեն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008:
Խաժակ Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր., 1961:
Սոֆյա Լալախանյան, Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր, Եր., 1973:
Սիլվա Նազարյան, Հայ մանկապատանեկան մամուլը (1851–1917), Եր., 1979:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ ԵՎ ԴԱՄԱԳՐՔԵՐ

Հակոբ Պարոնյան, Երկեր, Եր., 1979:
Ղևոնդ Ալիշան, Երկեր, Եր., 1981; Նուագք, Վենետիկ, 1881:
Հակոբ Օշական, Խորհուրդներու նեհեանը, Կ. Պոլիս, 1922:
Արշակ Չոպանյան, Երկեր, Եր., 1988; Տղու հոգիներ, Փարիզ, 1923:
Վահան Թեքեյան, Երկեր (Հայ դասականների գրադարան), Եր., 1981:
Ռուբեն Որբերյան, Երկեր (Հայ դասականների գրադարան), Եր., 1981:
Մկրտիչ Պեշիկթաշլյան, Տաղեր, Եր., 1947:
Մատթեոս Մամուրյան, Մանր վէպեր ու դասեր՝ քաղուած մանր տղոց համար, Զմյուռնիա, 1876:
Տիրան Չրաքյան, Ներաշխարհ, Կ. Պոլիս, 1906:
Թովմաս Թերզյան, Մանուկն ու վտակը (տպագրվել է «Բազմավեպ»–ում, Վենետիկ, 1856):

Ռուբեն Զարդարյան, Մեղրագետ (դասագիրք), Փարիզ, 1939:
Սիպիլ (Զաբել Ասատուր), Ցոլքեր, Կ. Պոլիս, 1902:
Սիպիլ և **Հակոբ Ասատուր**, Թանգարան հատընտիր հատվածներու (ընթերցարան, Կ. Պոլիս, 1921):
Արամ Անտոնյան, Գանձարան (դասագիրք), Կ. Պոլիս, 1926:
Ալեքսանդր Փանոսյան (Ալփասլան), Շողեր ու ցոլքեր, Կ. Պոլիս, 1885:
Ռեթեոս Պերպերյան, Դպրոց և դպրութիւն (կրթական և գրական նյութեր), Վիեննա, 1907:
Մարզպետ, Մանկական աշխարհ (հեքիաթներ), Կ. Պոլիս, 1912:
Սմբատ Դավթյան, Նուէր հայ մանուկներուն, Կ. Պոլիս, 1897:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթ. լույս է տեսել 1876–1878 թթ. Կ. Պոլսում, խմբագիր՝ **Հակոբ Պարոնյան**:
«Խիկար» հանդես. լույս է տեսել 1884–1888 թթ. Կ. Պոլսում, խմբագիր՝ **Հակոբ Պարոնյան**:
«Բուրաստան մանկանց» կիսամսյա հանդես. լույս է տեսել 1882–1888 թթ. Կ. Պոլսում, խմբագիր–հրատարակիչներ՝ **Նշան Պերպերյան** և **Ստեփան Տեովլեթյան**:
«Ծաղիկ մանկանց» ամսագիր. լույս է տեսել 1889–1892 թթ. Կ. Պոլսում, հրատարակիչ–խմբագիր՝ **Նշան Պերպերյան**, 1891–ից՝ **Միհրան Ասքանազ**:
«Հայկունի» հանդես. լույս է տեսել 1910–1912 թթ. Մարզվանում, խմբագիր՝ **Գագիկ Օզանյան**:
«Բողբոջ» ամսագիր. լույս է տեսել 1911–1914 թթ. Մարզվանում, խմբագիր՝ **Մամիկոն Վարժապետյան**:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Էդուարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1978:
Հովհաննես Բարսեղյան, Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973:
Ռուբեն Սաքապետոյան, Արեւմտահայերէն–արեւելահայերէն նոր բառարան, Եր., 2011:
Արտեմ Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԼ ՎԱՂՈՒԱՆ ՊԱՅԾԱՌ ԱՐՇԱԼՈՅՍԸ... 3

ՀԱՎԵԼՎԱԾ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ... 52
ՀՐԱԶԴԱՆ... 53
ԳԱՐՈՒՆ... 54

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ
ԳԱՐՈՒՆ... 57
ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ... 58
ՄԱՀ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ... 59
ԳՈՀԱՐԻԿ... 60

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
ԿԱՂԱՆԴԻ ՀԷՔԵԱԹ... 62
ԾԱՂԻԿԸ... 66

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ
ՏԱՂ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻՆ... 70
ՄԱՍԻՍԻՆ... 70
ՀՈՆ ՀԵՌՈՒՆ, ԱՀԱ... 71
ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ... 72
ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ... 72
ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ... 73

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ
ՈՐԲՈՒԿԸ... 75
ԱՌՋԻ ՁՅՈՒՆ... 77
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ... 77

ՄԱՅՐԸ 79
ԾԱՂԻԿՆԵՐ ՄԱՅՐԻԿԻՍ ՀԱՄԱՐ 80

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ
ԳԸՆԱ՛ 82
ՎԱՐԴԵՆԻՆ 83
ՅԱՐԱՏԵԻԷ 85

ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆ (ԻՆՏՐԱ)
ԴՐԱՑԻ ԿԱՏՈՒՆ 86
ԳԵՏԸ 87

ԹՈՎՄԱՍ ԹԵՐՋՅԱՆ
ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՎՏԱԿ 88

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ
ՀՆԴԿԱՀԱՒԻՆ ԹԱԹԸ 89
ԱՆՎԱԽՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ 92
ՊԱՐՈՆՅԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ «ԴԱՍԵՐ» ՆԱԵՎ ՄԱՆՈՒԿ ՈՒ
ՊԱՏԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 94

ՍԻՊԻԼ (ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ)
ԱՐԵՎՈՒՆ ՃԱՌԱԳԱՅԹԸ 96
ԱՌՏՈՒՆ 98
ՀԱՅ ԼԵՋՎԻՆ 99
ՕՐՈՐ 100
ՄԱՅՐԸ 101

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ
ԳԻՐՔ 102
ԹԻԹԵՌՆԻԿ 103
ՈՉԽԱՐ ՈՒ ԳԱՌՆՈՒԿ 105
ՄԻՀՐԱՆ ԵՒ ԻՐ ՇՈՒՆԸ 105

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍՅԱՆ (ԱԼՓԱՍԼԱՆ)
ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԿԱՅԾԱԿ 106
«Ո՛, Հայկազնեան [անմեղ մանկունք]...» 107
ՄԱՆԿԻԿՆ ՈՒ ԹՌՉՆԻԿ 109
ԺԱՄԱՆԱԿԸ 111

ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ
ԱՇԽԱՏԵՑԷՔ 113
ՄԵՐ ՏՆԱԿԸ 114

ԱՐԵՒԱԳԱԼ 114
ՇՈՒՆ 115
ՍԱՐԵԱԿ 116

ՄԱՐԶՊԵՏ
ԵՕԹԸ ԳԱՒԱՌԱՆՆԵՐԸ 118
ՊՌՕՇ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԹՈՒՐԸ 119

ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐՅԱՆ
«Աշունն ալ կ'անցնի...» 121
ԵՐԳ ԱՌԱՒՕՏՈՒ 122

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԷՋԵՐԻՑ
ՊԱՐՏԵԶՈՒՄ 124
ԱՆՁՐԵՒ 124
ԱՄԷՆԷՆ ԱՆՈՒՇԻԿ ՄԱՏԸ 126
ԽԵԼԱՑԻ ՏՂԱՆ 127

«ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ» ՀԱՆԴԵՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ
ԲՈՒՐԱՍՏԱՆ ԱՌ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՆ 129
ՓԻԼԻՍՈՓԱ ԵՎ ՆԱՒԱՎԱՐ 129
ԲԱՐԵԿԱՄՔ 130
ԵՐԵՔ ՈՍԿԵԳՈՅՆ ՁԿՆԻԿՆԵՐ 131
ՃԱՆՃ ԵՒ ԻՒՐ ԹԱԹԵՐԸ 132
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ 132
ՄԱՆԿԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ 132
ՀԱՅՈՐԴԻԻՆ ԵՐԳԸ. 133
ՊԱՆԴՈՒԽՏ Է ՀՈԳԻՍ... 134
ԵՐԵՔ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐԸ 135

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 137
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 142

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



Գրականագետ, հրապարակախոս Լյուդվիգ Կարապետյանը, ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշխատել է մայրենի լեզվի և գրականության ուսուցիչ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես դաստիարակչական աշխատանքների բաժնի պետ, ապա երկար տարիներ՝ «Պիոներ–կանչ», «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան» թերթերում, 1983–ից՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» հանդեսի, «Դպրություն» (այժմ՝ «Կրթություն»), «Հանդիպում» թերթերի գլխավոր խմբագիր, «Հայաստան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ:

1995–ից աշխատել է որպես դասախոս Երևանի պետական, ապա «Հրաչյա Աճառյան» համալսարանների, Հեռուստատեսության և ռադիոյի ակադեմիայի լրագրության ֆակուլտետներում: Այժմ Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի պրոռեկտորն է, լրագրության, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչը:

Լյուդվիգ Կարապետյանը գրականագիտական, գեղարվեստավավերագրական, լրագրագիտական ավելի քան 40 գրքի հեղինակ է: Վախթանգ Անանյանի ստեղծագործությանը նվիրված ատենախոսության համար արժանացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ «Հայ մանկապատանեկան գրականության ակունքներն ու զարգացման փուլերը» թեմայով ատենախոսության համար՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանների:

Հայաստանի գրողների և ժուռնալիստների միությունների, ռազմագիրների միջազգային ասոցիացիայի անդամ է: Պարգևատրվել է Խաչատուր Աբովյանի, ՀՀ կրթության և գիտության, մշակույթի նախարարությունների ոսկե մեդալներով, Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալով:

Լյուդվիգ Հովակի Կարապետյան

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Քրեստոմատիկ նյութեր

Հրատարակչության տնօրեն՝ Է. Ս. Մկրտչյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Սրբագրիչ՝ Գ. Հ. Կիրակոսյան
Ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 9 տպ. մամուլ:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am